



Զիաց Մեր Հանապազորդ

ՅՈՒՆՈՒՐ | ՓԵՏՐՈՒՐ | ՄԱՐՏ 2025

(Jan | Feb | March 2025)

ԼՂ. ՏԱՐԻ
Ա. ԵՌԱՄՍԵԱՅ

Անձնական եւ Ընտանեկան
Ամենօրեայ Աստուածաշունչի Ընթերցումներ
եւ Հոգեւոր Խորհրդածութիւններ

Մեր խորին շնորհակալութիւնները կը յայտնենք
Our Daily Bread Ընկերակցութեան որուն
թոյլատուութեամբ *Our Daily Bread* գրքոյկէն
թարգմանուած են յաջորդ էջերու
խորհրդածութիւնները

Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութիւն
Armenian Missionary Association of America
31 West Century Road
Paramus, New Jersey 07652
U.S.A.



Կեանքը յայտնուեցաւ, մենք տեսանք զայն, եւ կը վկայենք:
[Ա. Յովհ. 1. 2]

ՅԻՍՈՒՄ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Մատեր լսած չեն Գէյթ Հէնգիի (Kate Hankey) մասին, բայց ան նշանաւոր կին մըն էր: Ըլլալով ուսուցիչ, աւետարանիչ, դպրոցի կազմակերպիչ, միսիոնար եւ բանաստեղծ: Ան հաւատարմօրէն ծառայեց Յիսուսի՝ 1800-ական թուականներուն Անգլիոյ մէջ: 1867-ին՝ Գէյթ ծանր հիւանդացաւ: Ապաքինումի ընթացքին՝ ան գրեց երկար բանաստեղծութիւն մը՝ երկու մասերով. «Պահանջուած Պատմութիւնը» եւ «Պատմուած Պատմութիւնը»: Բանաստեղծութիւնը՝ անձնական կերպով կ'արտայայտէր իր ունեցած յարաբերութիւնը Յիսուսի հետ եւ Անոր կեանքի իրադարձութիւնները:

Ամբողջ Աստուածաշունչը՝ կը մատնանշէ Յիսուսի եւ կը պատմէ Անոր պատմութիւնը: Յովհաննէս կը սկսի իր նամակը յիշեցնելով իր ընթերցողներուն, թէ ինչպէ՞ս իրենք անձնական փորձառութիւն ունեցած են Յիսուսի հետ. «Ինչ որ մենք մեր աչքերով տեսանք, որ դիտեցինք ու մեր ձեռքերը շօշափեցին, զայն կը վկայենք» (Ա. Յովհ. 1. 1): Առաքեալը կը գրէ, որ Անոր հետ կապուած մեր ունեցած փորձառութեան պատճառով կը պատմենք Յիսուսի պատմութիւնը. «Կեանքը յայտնուեցաւ, մենք տեսանք զայն, եւ կը վկայենք» (Հմ. 2): Աւելի ուշ, Յովհաննէս կ'ընէ հմայիչ ակնարկութիւնը. «Աստուծոյ խօսքը կը բնակի ձեր մէջ» (2. 14): Այլ խօսքով ըսած, Յիսուսի պատմութիւնը՝ նոյնպէս մեր պատմութիւնն է: Մենք կանչուած ենք պատմելու Քրիստոսի պատմութիւնը՝ իր հետ մեր ունեցած սեփական փորձառութեան լոյսին ներքեւ:

Նո՛յնը ըրաւ Գէյթ Հէնգիին՝ իր բանաստեղծութեան մէջ: Անոր բանաստեղծութեան երկու մասերը՝ դարձան այս սիրելի հոգեւոր երգերը. «Կ'ողգեմ պատմել հին լուրը» եւ «Տուր ինձ այն հին լուրը»: Մենք ալ, Գէյթի նման, գտնենք մեր սեփական խօսքերը եւ կիսենք ուրիշներուն հետ:

Աղօթք - Սիրելի Յիսու՛ս, շնորհակալ եմ, որ փրկեցիր զի՛ս եւ կատարեցիր Քու սիրոյ աշխատանքը՝ իմ կեանքիս մէջ: Ամէն: Ո՞րն է քու պատմութիւնդ Յիսուսի հետ: Ինչպէ՞ս Ան եկա՛ւ քու մօտդ ու փրկե՛ց քեզ:

Արդարեւ երկինքը ծուխի պէս պիտի փարատի, ... բայց իմ փրկութիւնս յաւիտենական պիտի ըլլայ: [Ես. 51. 6]

ԱՍՏՈՒԾՈՅ ԽՈՍՏՈՒՄԸ՝ ԱԵՐԱԿՆԵՐԷՆ ԱՆԴԻՆ

Երբ «Լաուրա» (Laura) փոթորիկը՝ կատաղի կերպով գարկաւ Մեքսիքոյի Ծոցէն՝ դէպի Միացեալ Նահանգներու Լուիզիանայի (Louisiana) ծովափը, նախազգուշացումներ տրուեցան: Ոստիկանապետներէն մէկը, նշելով՝ ժամական 150 մղոն արագութիւն հաշուող հովերը, հրապարակեց այս ցնցիչ հաղորդագրութիւնը. «Կը խնդրեմ՝ պարպել ձեր տուները ու հեռանալ: Բայց եթէ կ'ընտրէ՛ք մնալ ու մենք չկարենանք հասնիլ ձեզի, գրեցէ՛ք ձեր անունը, հասցէն, ապահովագրութեան ու մօտիկ հարազատին հեռախօսի թիւը եւ դրէ՛ք զայն ճարմանադափակ տոպրակի մը մէջ՝ ձեր գրպանը: Բայց կ'աղօթեմ՝ որ անոր չհասնի»: Փրկարարները դիտէին, որ երբ Լաուրան հարուածէ ցամաքը, անոնք կրնային միայն դիտել փոթորիկին կործանարար ուղին՝ անօդանկան վիճակի մէջ:

Ամէն անգամ, երբ Հին Կտակարանին մէջ Աստուծոյ ժողովուրդը գտնուէր աղէտի մը դիմաց, Անոր խօսքերը շատ աւելի հաստատ ու յուսադրող էին, խոստանալով Իր ներկայութիւնը՝ հակառակ կործանումին: Ան ըսաւ թէ «բոլոր աւերակները պիտի հանգստացնէ, անոր անապատը եղեմի պիտի վերածէ, անոր անբնակ երկիրը՝ Տէրոջ զբախտին» (Ես. 51. 3): Եւ աւելին, Աստուած միշտ ալ հաւաստիացուցած է Իր ժողովուրդին փրկութեան եւ բժշկութեան մասին, որոնք անպայման կը հետեւին, եթէ անոնք միայն վստահին Իրեն: Աստուած ըսաւ թէ եւ «երկինքը ծուխի պէս փարատի, Իր փրկութիւնը յաւիտեան պիտի ըլլայ» (Հմ. 6): Ի՛նչ տեսակի վնաս ալ ըլլայ անոնց հանդէպ, Անոր վերջնական բարութիւնը՝ երբէ՛ք չի խանգարուիր:

Աստուած չի պաշտպաներ մեզ մեր դժուարութիւններէն, բայց Ան կը խոստանայ, որ Իր վերականգնող բուժումը կը տարածուի՝ կործանումէն շատ անդին:

Աղօթք - Սիրող Աստուած՝ աւերակները այնքա՛ն քանդիչ են: Վստահ չեմ, որ կրնամ հաւատալ, որ մեծ խոստումներ ունիս՝ ասոնց համար: Բայց ես կ'ընտրեմ հաւատալ Զեզի: Ամէն: **Աստուած կը խոստանայ մեզի հետ ըլլալ, աւերականերէն յետոյ՝ բուժելու եւ վերակառուցանելու մեզ:**

Աշխարհի մէջ տառապանք պիտի ունենաք, բայց քաջալերուեցէ՛ք, ես յաղթեցի աշխարհին: [Յովհ. 16. 33]

ՎԱԽ՝ ԱՆՅԱՅՏԷՆ

Վախը՝ զիս արթնցուց՝ գիշերուան ժամը 3-ին, նոր տարուան առաջին օրը: Գալիք տարին ծանր կշռեց վրաս, զիս լեցնելով ահով ու սարսափով: Ընտանիքիս մէջ եղած հիւանդութիւնը՝ վաղուց զիս անհանգստացուցած էր, եւ այժմ ապագայի մասին իմ ունեցած խորհուրդներս զիս կը վախցնէին: Ես ինծի խորհեցայ ըսելով. «Աւելի շատ գէշ բաներ կրնա՞ն պատահիլ միթէ»:

Յիսուսի աշակերտները հասկցան, աւելի վատ բաներ պատահելու վախը: Թէեւ իր մահէն օր մը առաջ՝ իրենց Տէրը նախապատրաստած ու վստահեցուցած էր իրենց, անոնք տակաւին կը վախնային: Անոնք փախան, երբ Անոր ձեռքակալեցին (Մատթ. 26. 56), Պետրոս ուրացաւ զինք (Յովհ. 18. 15-17, 25-27) եւ անոնք պահուրտեցան (20. 19): Անոնց վախը Յիսուսի ձեռքակալութեան եւ խաչելութեան ատեն, ինչպէս նաեւ հալածանքներու ժամանակ, ստիպեց անոնց, որ ընեն իր տուած «քաջալերուեցէք» պատուէրին եւ իր տուած խոստումին՝ «ես յաղթեցի աշխարհի»՝ ճիշդ հակառակը (16. 33):

Սակայն Քրիստոսի մահն ու յարութիւնը՝ ապացուցանեցին Անոր իշխանութիւնն ու զօրութիւնը, կեանքի եւ մահուան վրայ: Ա՛ն՝ ունի վերջնական յաղթանակ: Թէեւ մեր աշխարհի մեղաւոր վիճակը կը հաստատէ տառապանքը, մենք կրնանք հանգստանալ այն ճշմարտութեան մէջ, որ ամէ՛ն ինչ ենթակայ է մեր իմաստուն եւ սիրող Աստուծոյ իշխանութեան: Յիսուսի ներկայութիւնը՝ մեզի հետ է (16. 32-33), այնպէ՛ս ինչպէս որ իր աշակերտներուն հետ էր, որոնք յետագային վստահութեամբ շարունակեցին աւետարանը բաժնեկցիլ աշխարհին հետ: Թող Աստուծոյ խոստումը, որ Ան կը վերահսկէ, զօրացնէ մեր սիրտերը՝ վստահելու իրեն, այս նոր տարուան մէջ եւ ըլլալու քաջ, նոյնիսկ երբ մենք չենք գիտեր, թէ ի՞նչ պիտի բերէ ապագան:

Աղօթք - Տէր, շնորհակալ եմ, որ օգնեցիր ինծի՝ իմ վախերու դէմ եւ ցոյց տուիր՝ թէ ինչպէս համարձակ ապրիմ: Ամէն **Դժուարութեան, տառապանքի եւ փորձութիւններու ատեն, ի՞նչ է մեր անդրադարձը: Ի՞նչ կը նշանակէ քեզի համար՝ «քաջալարուէ» խօսքը:**

Արդարեւ ամէն բան քեզմէ՛ է, ու քուկիսներ՝դ տուիկս քեզի:
[Ա. Մաաց. 29. 14]

Ե՛Տ ՏԱԼ ԱՍՏՈՒԾՈՅ

Տարի մը, մեր եկեղեցիի ղեկավարները մեզ հրաւիրեցին, մեր կանոնաւոր շաբաթական ընձաներէն զատ, նուէրներ տալու մարզանքի դահլիճ մը կառուցանելու համար, տարածք մը, որ մենք պիտի կարենայիք օգտագործել մեր համայնքի ընտանիքներուն ծառայելու համար: Հաշմանդամ ապրելու պատճառով առաջացած բժշկական ծախսերը աղօթքով նկատի առնելէ ետք, ամուսինիս հարցուցի. «Դո՛ւն վստահ ես, որ մենք կրնանք այդ բանը ընել»: Ան գլուխով նշան մը ըրաւ ու ըսաւ. «Մենք Աստուծոյ ոչինչ կու տանք, որ արդէն իրը չէ: Ան կը տրամադրէ ամէն բան, ինչ որ մեզի անհրաժեշտ է»: Եւ Ան ըրաւ: Աւելի քան մէկ տասնամեակ ետք, մեր եկեղեցիի ընտանիքը՝ տակաւին ունի Յիսուսի ծառայելու արտօնութիւն՝ ծառայելով մարդոց՝ այդ կառոյցին մէջ:

Ա. Մացորդաց 29-ին մէջ, Դաւիթ Թագաւորը՝ Իսրայէլի առաջնորդներուն ցոյց տուաւ իր յանձնառութիւնը՝ աջակցելու իր որդիին՝ Սողոմոնին, որպէս իր Աստուծոյ կողմէ ընտրեալ ու զինք յաջորդող Թագաւոր եւ տաճարը կառուցող (Հմ. 1-5): Ամէն մարդ հետեւեցաւ իր օրինակին, «յօժարակամ ընձաներ բերին» եւ «ուրախացան» (Հմ. 6, 9): Դաւիթ փառաբանեց Աստուծոյ եւ յայտարարեց, որ «երկինքի մէջ ու երկրի վրայ եղած ամէնը՝ քեզի կը պատկանի» (Հմ. 11): Ան աղօթեց. «Ո՛վ Տէր, մեր Աստուածը, այս ամբողջ մթերքը՝ որ պատարաստեցինք, որպէսզի քեզի տուն մը կառուցանենք՝ քու սուրբ անունիդ համար, քո՛ւ ձեռքէդ են. բոլորն ալ քուկդ են» (Հմ. 16):

Մինչ նկատի կ'առնենք այն ամէնը, ինչ որ Աստուած ըրած է եւ տուած է մեզի, կրնանք արտայայտել մեր երկրպագութիւնը եւ ցոյց տալ մեր երախտագիտութիւնն ու սէրը՝ պարզապէս վերադարձնելով Աստուծոյ, որ մեր բոլոր բարի բաները կու տայ:

Աղօթք - - Տէր, շնորհակալ եմ՝ առատածէռն ու հաւատարիմ մատակարար մը ըլլալուդ համար: Եկէ՛ք արտայայտենք մեր երախտագիտութիւնը, մեր տալու միջոցով: Ամէն:
Երբ ընդունիք որ ամէն ինչ կը պատկանի Աստուծոյ, կը փոխտ մեր վերաբերմունքը՝ տալու տեսակետին մասին:

Իմ քալելս ու պառկիլս կը քննես, եւ իմ բոլոր ճամբաներուն իրազէկ ես: [Սաղմ. 139. 3]

ԱՍՏՈՒԱԾ՝ ԱՄԷՆ ԲԱՆ ԳԻՏԷ

Աստուած իսկապէ՛ս գիտէ ամէն բան, սակայն, ըստ *The Wall Street* թերթի յօդուածին, Ազգային Անվտանգութեան Գործակալութիւնն ալ շատ բան գիտէ մեր մասին մեր իմաստուն բջիջային հեռախօսներուն տուեալներուն հետեւանքով: Իւրաքանչիւր անձ, որ ունի բջիջային հեռախօս՝ կը ստեղծէ տուեալներ, որոնք կը ձգէ «թուային հետք»: Թէեւ տուեալներու իւրաքանչիւր մասնիկը կրնայ աննշան թուիլ, բայց երբ անոնք համագրուին եւ վերլուծուին, կ'ապահովեն «երբեւէ ստեղծուած ամենահզօր քննութեան գործիքներէն մէկը»: Հետեւելով մեր տուեալներուն՝ քննիչները կրնան գիտնալ, թէ մենք ո՞ր գտնուած ենք կամ ո՞ր ենք:

Շատ աւելի գերազանց, քան Ազգային Անվտանգութեան Գործակատարութեան թուային հետքի վերլուծութիւնը, Դաւիթ ըսաւ, որ Աստուած գիտէ, թէ ո՞ր ենք մենք Իր հետ կապուած: Սաղմոս 139-ին մէջ՝ ան կ'աղօթէ Աստուծոյ՝ Անոր, որ միայն Ինք կրնայ փնտռել եւ քննել, թէ ի՞նչ կը կատարուի մեր ներսը (Հմ. 1): Սաղմոսերգուն գրեց. «Հետազօտէ՛ զիս, ո՛վ Աստուած, ու ճանչցիր իմ սիրտս» (Հմ. 23): Ան գիտէ ամէն ինչ մեր մասին (Հմ. 2-6), ներկայ է ամէն տեղ (Հմ. 7-12) եւ «ստեղծեց մեր երիկամունքը» (Հմ. 13-16): Անոր խորհուրդները աւելի բարձր են, քան մեր մարդկային ըմբռնումը (Հմ. 17-18), եւ Ան նոյնիսկ մեզի հետ է, երբ մենք կը դիմագրաւենք մեր թշնամիները (Հմ. 19-22):

Քանի որ Աստուած ամենագէտ, միշտ ներկայ եւ ամենակարող է, Ան յստակ գիտէ, թէ ո՞ր եղած ենք, ի՞նչ բան Ինք ըրած է եւ ինչպէ՞ս մենք ստեղծուած ենք: Բայց Ան նաեւ սիրող Հայր է, որ կ'օգնէ մեզի՝ քալելու Իր ճամբուն մէջ: Եկէ՛ք այսօր Անոր հետեւինք՝ կեանքի հետքերով:

Աղօթք - Սիրելի Աստուած, շնորհակալ եմ, որ կը սիրես զի՛ս, չնայած անոր որ Դո՛ւն ամէն ինչ գիտես իմ մասիս: Կը խնդրե՛մ, օգնէ ինձի, որ քալեմ Զեգի հետ: Ամէն:

Ինչպէ՞ս կը խրախուսէ մեզ՝ այն խորհուրդը, որ Աստուած իսկապէս կը ճանչնայ մեզ: Ինչպէ՞ս կը քալես Իր հետ:

Բեթլեհեմ, ... կառավարիչ մը պիտի ելլէ քեզմէ, որ պիտի
հովուէ իմ ժողովուրդս՝ Իսրայելը»: [Մատթ. 2. 6]

ՓՈՔՐԻԿ ՔԱՂԱՔ ԲԵԹԼԵՅԷՄ

Տ իլիփս Պրուքս՝ (*Philips Brooks*) գրեց «Փոքրիկ Քաղաք
Բեթլեհեմ» մեր սիրելի ծննդեան երգին բառերը՝ Բեթլեհեմ
այցելելէ ետք: Պրուքս՝ Միացեալ Նահանգներու եկեղեցիներէն
մէկուն հովիւր, այնքան յուզուած էր իր փորձառութենէն, որ
ան գրեց իր Կիրակնօրեայ Դպրոցի աշակերտներուն. «Կը յիշեմ,
Սուրբ Ծնունդի նախօրեակին, երբ ես կանգնած էի Բեթլեհեմի
Հին եկեղեցիին մէջ, Յիսուսի ծննդեան վայրին մօտ, երբ ամբողջ
եկեղեցին ժամ առ ժամ՝ կը թնդար Աստուած փառաբանելու
հրաշալի օրհներգներով, ինչպէս՝ դարձեալ ու դարձեալ՝ կը
թուէր թէ ես կը լսէի ծանօթ ձայներ, որոնք իրարու կը պատմէին
Փրկիչին ծննդեան «Հրաշալի գիշերուան» մասին:

1868 թուականին՝ Պրուքս իր միտքերը դրաւ
բանաստեղծութեան մը մէջ եւ իր եկեղեցիին երգեհոնահարը
երաժշտութիւնը գրեց: Երգը կը խօսէր անդորրութեան
եւ խաղաղութեան մասին, Ամերիկայի Քաղաքացիական
Պատերազմի անհանգստացնող հետեւանքներուն մէջ. «Փոքրիկ
քաղաք Բեթլեհեմի, Որքան լուռ ես, խաղաղ ... Երկիւղ ու յոյս
բոլոր դարուց, Այս լուռ գիշերին մէջ»:

Մատթէոս գրեց Բեթլեհեմի մէջ մեր Փրկչին ծննդեան
մասին՝ Մատթէոս 2-ին մէջ: Երբ «արեւելքէն մոգեր» (Հմ. 1)
հետեւեցան աստղին մինչեւ Բեթլեհեմ (տե՛ս Միք. 5. 2), անոնք
«չափազանց ուրախացան»՝ գտնելով Յիսուս մանուկը (Մատթ.
2. 10):

Այսօր, երբ մենք կը տօնենք Յիսուսի Ծնունդը, նոյնպէս
պէտք ունինք մեր Փրկիչին ծննդեան փառաւոր աւետիսին: Ինչ-
պէս որ մեզի կը յիշեցնէ երգը, Ան եկաւ մեր մեղքերը մաքրելու
եւ մեր մէջ բնակելու. «Իջիր մեզի այսօր, թող սկսի մեր մէջ նոր
կեանք»: Իր մէջ մենք մեր խաղաղութիւնը կը գտնենք:

Աղօթք - Սիրելի Յիսուս, շնորհակալ եմ քեզի՝ այն յոյսին եւ
խաղաղութեան համար, որ Դու կը բերես ինձի: Ամէն:

**Քու կեանքիդ ո՞ր մասին մէջ խաղաղութեան կարիքը ունիս, որ
Փրկիչը կ'առաջարկէ: Յիսուսի ծննդեան պատմութեան ո՞ր մասը
քեզի ամենէն աւելին կը յուզէ:**

Ես քու համբաւդ ականջով լսեր էի, բայց հիմա աչքս կը տեսնէ քեզ: [Յոթ 42. 5]

ՏԵՍՆԵԼ ԱՍՏՈՒԱԾ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՍԷՉ

Գենին՝ (Kenny) կանգնեցաւ ժողովուրդին առջեւ, որ լքած էր տարիներ առաջ՝ Աստուծոյ հանդէպ իր ունեցած հաւատքը կորսնցնելէն ետք: Ան բաժնեկցեցաւ, որ ինք վերագտած է իր հաւատքը: Ինչպէ՞ս: Աստուած դպչած է իր սիրտին՝ ստեղծագործութեան մէջ իր տեսած գեղեցկութեան եւ ձեւաւորումին միջոցով: Գենին անգամ մը եւս ակնածանքով լեցուեցաւ Անոր հանդէպ՝ բնական աշխարհին մէջ իր տեսած Աստուծոյ ընդհանուր յայտնութեան վկայութեան շնորհիւ եւ այժմ ան ընդունած է Սուրբ Գիրքի յատուկ յայտնութեան մէջ գտնուած իմաստութիւնը: Իր պատմութիւնը բաժնեկցելէ ետք, Գենին մտաւ եկեղեցիին դիմաց գտնուող ջուրի աւազանին մէջ: Իր հայրը՝ ուրախութեան արցունքները աչքերուն, մկրտեց զինք՝ Յիսուսի հանդէպ իր ունեցած հաւատքին հիման վրայ:

Կեանքի մէջ իր ունեցած շատ բաները կորսնցնելէ ետք, Յոբի հաւատքը նոյնպէս ցնցուեցաւ: Ան ըսաւ. «Քեզի կ'աղաղակեմ, բայց ինձի չես պատասխաներ. կը կանգնիմ, ու ինձի ուշադրութիւն չես դարձներ» (Յոբ. 30. 20): Աստուած «մրբիկին մէջէն պատասխանեց» (38. 1)՝ յայտարարելով, որ խօսքը ո՛չ թէ այն բանին մասին է, որ Ան չի տեսներ Յոբին, այլ պէտք է Յոբի տեսիլքը ընդլայնուի, քանի որ ան տեսաւ Աստուծոյ զարմանալի ու բարդ ստեղծագործութիւնը: «Երկրի հիմերը» եւ «առտուան աստղերը» (4, 7) եւ բոլոր արարածները, բոյսերը եւ ջուրերը, որոնք կը գտնուի անոնց միջեւ (Հմ. 8-41), կը մատնանշէին Անոր՝ որ Յոբ կրնար վստահիլ՝ Աստուծոյ զարմանալի սիրոյ ու զօրութեան: Յոբ պատասխանեց ու ըսաւ. «Ես քու համբաւդ ականջով լսեր էի, բայց հիմա աչքս կը տեսնէ քեզ» (42. 5):

Երբ կասկածները կը սպառնան հաւատքիդ, նկատի առ Աստուծոյ ստեղծագործութեան հոյակապ ըլլալը:

Աղօթք - Արարիչ Աստուած, շնորհակալ եմ, որ օգնեցիր ինձի տեսնելու Զե՛զ՝ ստեղծագործութեանդ մէջ: Ամէն:

Աստուած ինչպէ՞ս ինզիս կը յայտնաբերէ ստեղծագործութեան մէջ: Ինչպէ՞ս փոխ կապակցուած են Աստուծոյ հանդէպ ակնածանքը եւ Անոր հանդէպ հաւատքը:

Ինք ալ նմանապես բաժնեկից եղաւ անոնց, որպէսզի իր մահով ոչնչացնէ ան՝ որ մահուան իշխանութիւնը ունէր, այսինքն՝ Չարախօսը: [Եբ. 2. 14]

ԽՈՒԼ ՍԻՐՏ ՍԸ

Խ ուլերու նշաններու լեզուի իր հմտութիւնը բարելաւելու համար, Լիսա (Leisa) ինքզինք խրեց խուլերու աշխարհին մէջ: Շուտով ան ծանօթացաւ անոնց դիմագրաւած հարցերուն: Խուլերը կ'անտեսուէին՝ լսող մարդոց կողմէ, եւ անոնցմէ կ'ակնկալուէր՝ անսխալ կարգալ շրթունքներ եւ սովորաբար անոնց կը յանձնեն աշխատանքի առաջխաղացում: Ու հանրային իրադարձութիւններու մեծ մասը կը մնան չմեկնաբանուած:

Լիսային նշաններու լեզուն՝ կայուն կերպով բարելաւուեցաւ՝ այն աստիճան, որ ան խուլերու հետ հարազատ կը զգար: Հաւաքոյթի մը ընթացքին, խուլ մարդ մը զարմացաւ թէ Լիսան կը լսէ: Առաջ որ Լիսա պատասխանէ՝ մէկ այլ բարեկամ մը նշան ըրաւ. «Ան Խուլ Սիրտ ունի»: Հիմնական բանը՝ Լիսայի պատրաստակամութիւնն էր՝ ապրիլ անոնց աշխարհին մէջ:

Լիսան «չխոնարհեցաւ» խուլերու հետ ըլլալու համար: Բացի իր լսողութենէն, ան անոնց նման էր: Սակայն Յիսուս խոնարհեցաւ ու իր անձը ունայնացուց մեր բոլորին հասնելու համար ու մեր մէջ բնակելու: Ան՝ որոշ ժամանակի մը համար «հրեշտակներէն քիչ մը վար եղաւ մահուան չարչարանքին համար» (Եբ. 2. 9): Քրիստոս «բաժնեկից եղաւ անոնց, որպէսզի իր մահով ոչնչացնէ ան՝ որ մահուան իշխանութիւնը ունէր, այսինքն՝ Չարախօսը (Եբ. 2. 14): Այդ ընելով՝ Ան ազատեց անոնց, որոնք «մահուան վախով, ենթակայ էին ստրկութեան՝ իրենց ամբողջ կեանքի ընթացքին» (Հմ. 15): Աւելին, Ա՛ն «պարտաւոր էր բոլորովին նմանիլ իր եղբայրներուն, որպէսզի ըլլար ողորմած ու հաւատարիմ քահանայապետ մը Աստուծոյ քով՝ քաւելու համար ժողովուրդին մեղքերը» (Հմ. 17):

Ի՞նչ բան որ դիմագրաւենք, Յիսուս գիտէ եւ կը հասկնայ: Ան կը լսէ՝ մեր սիրտերը: Ան մեզի հետ է ամէն կերպ:

Աղօթք - Յայր, շնորհակալ եմ՝ Զու Որդիիդ պարգեւին համար, որ կը բերէ զի՛ս՝ Զու ընտանիքիդ մէջ: Ամէն:

Ի՞նչ կը նշանակէ, որ Յիսուս զգացած է նոյն դժուարութիւնները, որոնց որ դո՛ւն հանդիպած ես: Ինչպէ՞ս կրնաս որոշ ժամանակով՝ մտնել ուրիշին աշխարհը:

Քանի քու կարեկցութիւնդ կեանքէն լաւ է, իմ շրթունքներս քեզ պիտի դրուատէ: [Սաղմ. 63. 3]

ԿԵԱՆՔԷՆ ԱԻՇԼԻ ԱՂԷԿ

Առողջութեան հերթական այլ վատթարացումէ մը ետք, միացայ ամուսինիս եւ ուրիշ բարեկամներու համագումարի մասնակցելու համար՝ լեռներուն մէջ: Բարձրացայ փայտէ սանդուղիներէն, որ կը հանէր դէպի բլուրին գագաթը գտնուող փոքրիկ եկեղեցիի շէնքը: Մինակ, մութին մէջ կանգ առի, որպէսզի հանգստանամ ճեղքուած աստիճանին վրայ: «Օգնէ՛ ինձի Տէր» շնչեցի, երբ երաժշտութիւնը սկսաւ: Դանդաղ քայլեցի՝ մինչեւ որ մտայ փոքրիկ սենեակը: Շունչ մը քաշեցի երկարատեւ ցաւիս մէջ, երախտապարտ զգացումով՝ որ Աստուած կը լսէ մեզ անապատին մէջ:

Աստուածաշունչին մէջ արձանագրուած՝ Աստուծոյ երկրպագելու ամենամտերմիկ պահերէն մի քանին՝ տեղի ունեցած են անապատին մէջ: Երբ կը պահուրտէր Յուդայի անապատին մէջ եւ ամենայն հաւանականութեամբ՝ կը փախչէր իր որդի Ամբաստանէն, Դաւիթ Թագաւոր երգեց. «Ո՛վ Աստուած, դո՛ւն ես իմ Աստուածս. արշալոյսին քե՛զ կը փնտռեմ: Անձս կը ծարաւնայ քեզի, ու մարմինս կը կարօտնայ քեզ» (Սաղմ. 63. 1): Զգալով Աստուծոյ զօրութիւնն ու փառքը, Դաւիթ՝ Աստուած սեպեց որպէս «կեանքէն լաւ» (Հմ. 3), եւ այդ էր պատճառը, որ ան հաւատարիմ մնաց ամբողջ կեանքի ընթացքին Աստուած պաշտելու, նոյնիսկ երբ անապատին մէջ էր (Հմ. 2-4): Ան ըսաւ. «Որովհետեւ ինձի օգնական եղար, ու քու թեւերուդ հովանիին տակ պիտի ցնծամ» (Հմ. 7-8):

Դաւիթի նման, անկախ մեր հանգամանքներէն կամ մեր դէմ կանգնած կատաղութենէն, մենք կրնանք դրսեւորել վստահութիւն Աստուծոյ հանդէպ՝ փառաբանելով զԻնք (Հմ. 11): Թէեւ մենք կը տառապինք, երբեմն ո՛չ մեր սխալին համար, մենք կրնանք վստահիլ, որ Աստուծոյ սէրը միշտ աւելի լաւ է, քան կեանքը:

Աղօթք - Աստուա՛ծ, Զու սէ՛րդ՝ կեանքէն աւելի աղէկ է: Ամէն:
Ինչպէ՛ս կրնաս գիտնալ, որ Աստուած կը սիրէ քեզ, երբ դու քեզ յարձակումի ենթարկուած կամ պարտուած զգաս: Աստուած զովաբանելը՝ կը զօրացնէ հաւատքդ՝ դժուար ժամանակներու մէջ:

Արդարեւ աշխարհ մտած են շատ մոլորեցուցիչներ, որոնք չեն դաւանիր թէ Յիսուս Բրիստոս մարմինով եկաւ: [Բ. Յովհ. 1. 7]

Ի՞ՆՉ ԿՐ ԲԱՑԱՅԱՅՏԷ ՍՈՒՐԲ ԳԻՐՔԸ

Ապրիլ 1817-ին, Անգլիոյ Կլօսթըրշայր (Gloucestershire) քաղաքին մէջ՝ գտնուեցաւ թափառական երիտասարդ կին մը, որ հագած էր տարաշխարհիկ հագուստ եւ կը խօսէր անծանօթ լեզուով մը: Ենթադրելով, որ ան մուրացկան է, իշխանութիւնները զինք բանտարկեցին: Սակայն՝ ան համոզեց զինք բանտարկողներուն, որ ինք Գարապուլի (Caraboo) Իշխանուհին է՝ Ճավասու (Javasu) կղզիէն: Տասը շաբաթներ համայնքը իր հետ վերաբերուեցաւ՝ որպէ՛ս արքայի դուստր, մինչեւ որ գիշերօթիկի տեսուչը՝ պարզեց, որ իրականութեան մէջ՝ ան Մէյրի Ուիլքոքս (Mary Wilcocks) անունով սպասուհի մըն էր:

Մենք կրնանք զարմանալ, թէ ինչպէ՞ս այս երիտասարդ կինը՝ գրեթէ երբ ամիս կըրցած էր խաբել ամբողջ համայնք մը: Բայց Բ. Յովհաննու նամակը կը զգուշացնէ մեզ, որ խաբէութիւնը նորութիւն մը չէ՛, քանի որ կը նշէ թէ «աշխարհ մտած են շատ մոլորեցուցիչներ» (1. 7): Ասոնք՝ մարդիկ են, որոնք կը ժխտեն՝ թէ Յիսուս Քրիստոս աշխարհ եկած է «մարմինով» (Հմ. 7), կամ անոնք, որոնք աւելի անդին կ'երթան՝ Յիսուսի ուսուցանածէն (Հմ. 9)՝ յայտարարելով, որ Աստուածաշունչը բաւարար չէ՛ մեզի համար այսօր: Այս երկու տեսակի խաբեբանները կրնան ստիպել մեզ, որ «կորսնցնենք մեր լման վարձատրութիւնը» (Հմ. 8) եւ կրնան նոյնի՛սկ խաբել մեզ՝ օգնելու անոնց իրենց աշխատանքին մէջ (Հմ. 11):

Ո՛չ մէկը կը սիրէ խաբուիլ: Կլօսթըրշայրի բնակիչները՝ շատ բան չկորսնցուցին, միայն հագուստ եւ քիչ մը սնունդ: Բայց Աստուածաշունչը կ'ըսէ, որ մեղքի եւ խաբէութեան հետեւանքները՝ կը շարունակեն սպառնալ մեզի: Երբ մենք ընդունինք Սուրբ Գիրքին ցուցմունքները, Աստուած կ'օգնէ մեզի խուսափելու խաբէութենէն, երբ մենք «ընթանանք անոր պատուիրաններուն համաձայն» (Հմ. 6):

Աղօթք - Սիրելի Յայր, կը խնդրեմ՝ օգնէ՛ ինձի հաստատ կանգնելու Սուրբ Գիրքին իմաստութեան վրայ եւ չխաբուիլ: Ամէն: Ինչպէ՞ս զգոյշ ըլլալ կեղծ ուսուցիչներէն: Ի՞նչ բան կրնայ օգնել՝ մեզի կարդալու, խորհրդածելու եւ արձագանգելու Աստուածաշունչը:

Բաղասամ Տերոջ հրեշտակին ըսաւ. «Մեղանչեցի, քանի որ չէի գիտեր թէ ճամբային վրայ կայնած էիր՝ իմ դիմացս: [Թուոց 22. 34]

ԲԵՐԱՆՆԵՐԷՆ ԴՈՒՐՍ

Ի՞նչ պիտի ըլլար՝ եթէ կարենայիր հասկնալ, թէ ի՞նչ կ'ըսէ քու շունդ: Նոր գիտութիւնը՝ կ'օգտագործէ «հաչիւն»ի ճանաչումը, օգնելու որ հասկնաս շուներուն զգացմունքները: Բարձր գիտութեան հմուտ մարդիկ կը մեկնաբանեն հաչոցները՝ օգտագործելով տասը հազարէ աւելի հաչոցներու տուեալներ՝ բացայայտելու անոնց արտայայտած զգացմունքները: Թէեւ հմուտ մասնագէտները չեն գործածեր խօսքի թարգմանութեան ծրագիր մը, սակայն անոնք կը նպաստեն՝ աւելի լաւ հասկացողութիւն մշակելու, տէրոջ եւ ընտանի կենդանիին միջեւ:

Աստուած օգտագործեց կենդանի մը՝ Բաղասամի ուշադրութիւնը գրաւելու համար: Բաղասամ թամբեց իր էջը, որպէսզի երթայ Մովսէս՝ ի պատասխան Աստուծոյ տուած հրամանին. «Անոնց հետ գնա՛ ... բայց ինչ որ քեզի ըսեմ, միայն զա՛յն ըրէ» (Թու. 22. 20): Էջը կանգ առաւ, երբ տեսաւ Աստուծոյ հրեշտակը «որ ճամբային մէջ կայնած էր՝ մերկ սուրբ իր ձեռքին մէջ» (Հմ. 23): Բաղասամ փորձեց առաջ երթալ, ուստի Աստուած հնարաւորութիւնը տուաւ էշին խօսելու մարդկային խօսքերով: Երբ Բաղասամ աչքերը վերջապէս բացուեցան վտանգի առջեւ, «ան խոնարհեցաւ եւ իր դէմքին վրայ երկրպագեց» (Հմ. 31)՝ ընդունելով իր ներքին մտադրութիւնը՝ կա՛մ վարձք հաւաքելու կա՛մ անիծելու Աստուծոյ ժողովուրդը՝ հակառակ Աստուծոյ հրահանգներուն (37-38): Ան ըսաւ. «Մեղանչեցի, քանի որ չէի գիտեր թէ ճամբային վրայ կայնած էիր՝ իմ դիմացս» (Հմ. 34):

Թող որ մենք լսենք՝ այն հրահանգները, որոնք Աստուած կու տայ մեզի՝ Սուրբ Գիրքին էջերուն մէջ, Սուրբ Հոգիին առաջնորդութիւնով եւ ուրիշներու իմաստուն խորհուրդով, ո՛չ միայն արտաքնապէս, այլ նաեւ ներքնապէս:

Աղօթք - Երկնաւոր Յայր, շնորհակալ եմ քեզի, որ սիրով առաջնորդեցիր եւ հեռացուցիր զիս մեղքէն եւ այն բաներէն, որոնք լաւ չեն ինձի համար: Ամէն:

Կեանքի ո՞ր մարզերուն մէջ՝ հնազանդութիւն ցոյց կու տաս, առանց ներքին մտադրութեան: Ինչպէ՞ս կրնայ Աստուած քու ուշադրութիւնդ հրաւիրել անոր վրայ:

Ա՛ն Մարկոսը եւ բե՛ր քեզի հետ, որովհետեւ պիտանի է ինձի՝ սպասարկութեան համար: [Բ. Տիմ. 4. 11]

ԱՍՏՈՒԱԾ ՊԻՏԻ ԳՈՐԾԷ

Աշխատասէր գործավար՝ Էրին (Erin) միշտ ալ լաւ կ'ընէր իր գործը: Բայց իր դէմ անազնիւ ըլլալու մեղադրանքը ընելէ ետք, զինք գործէն հեռացուցին որոշ ժամանակ մը՝ մինչեւ որ քննութիւններ կատարեն: Ան կը ցանկար ձգել գործը՝ ի նշան բողոքի, բայց իրեն խորհուրդ տուին՝ որ սպասէ: Իրեն ըսին. «Գործէն հեռանալը, պիտի նշանակէր՝ թէ դուն մեղաւոր ես»: Այսպէս՝ Էրին մնաց իր գործին մէջ, ազօթելով Աստուծոյ, որ զինք արդարացնէ: Ու այսպէս՝ քանի մը ամիսներ յետոյ՝ իր հանդէպ եղած զրպարտութիւնը՝ վերցուեցաւ:

Յովհաննէս Մարկոս (John Mark) հաւանաբար նոյն բանը զգաց, երբ Պողոս զինք հեռացուց միսիոնարական խումբէն: Վստահ ըլլալու համար, երիտասարդը՝ նախապէս, լքած էր զիրենք (Գործք 15. 37-38): Բայց հաւանաբար, ան զզջացած էր այդ բանը ընելուն համար եւ կը յուսա՛ր, որ ան ընդունելի ըլլայ այս անգամ: Ան պէտք էր ինքզինք Պողոսի կողմէ անարդարօրէն դատուած նկատէր. միայն Բառնաբաս կը հաւատար իրեն:

Տարիներ ետք՝ Պողոս իր կարծիքը փոխած ըլլալու էր՝ երբ ըսաւ. «Ա՛ն Մարկոսը եւ բե՛ր քեզի հետ, որովհետեւ պիտանի է ինձի՝ սպասարկութեան համար (Բ. Տիմ. 4. 11): Յովհաննէս Մարկոս իր համբաւը վերագտնելու համար պէտք էր աւելի լաւ զգար:

Երբ մեզ անարդարօրէն դատեն, եկէ՛ք յիշենք, որ Յիսուս կը հասկնայ թէ ի՞նչ կը զգանք մենք: Ինք ալ որպէս մեղաւոր դատուեցաւ, թէեւ այդպէս չէր, եւ իր հետ վարուեցան աւելի վատ, քան սովորական յանձագործի մը հետ, թէեւ Ան Աստուծոյ Որդին էր: Բայց Ան շարունակեց կատարել իր Հօրը կամքը՝ իմանալով, որ պիտի արդարացուի եւ արդար պիտի ըլլայ: Եթէ դուն անարդարօրէն դատուած ես, տեղի մի՛ տար: Աստուած գիտէ եւ կը գործէ իր ժամանակին:

Աղօթք - Յա՛յր, միայն Դո՛ւն գիտես, թէ ի՞նչ կը զգամ եւ ի՞նչ բանի մէջէն կ'անցնիմ: Կը խնդրեմ, տո՛ւր ինձի՝ հաւատք եւ համբերութիւն, սպասելու եւ Քեզի վստահելու: Ամէն:
Երբ անարդարօրէն դատապարտուինք, Աստուծոյ խոստումներուն կարջինք եւ թող Յիսուսի օրինակը՝ մեզ քաջալերէ:

Ամեն մարդ թող արագ ըլլայ՝ լսելու մէջ, դանդաղ՝ խօսելու մէջ, դանդաղ՝ բարկանալու մէջ: [Յակ. 1. 19]

ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ԽՈՒԶԱՐԿՈՒՄ

Անդրադառնալով այն կարեւոր հարցին, որ ինչո՞ւ մարդիկ հակուժը կ'ունենան լիովին համոզուած ըլլալու, որ իրենք ճիշդ են, նոյնիսկ երբ ճի՛շդ չեն, հեղինակ Ճուլիա Կալէֆ (Julia Galef) կ'առաջարկէ, որ այդ բանը կապուած է «գիտորի մտածելակերպին» հետ, ուր մենք կեդրոնացած ենք պաշտպանելու մեր հաւատացածը, մեզի դէմ սպառնացող բաներուն փոխարէն: Կալէֆ կը պնդէ, որ աւելի օգտակար մտածելակերպը խուզարկելն է. ինչ որ մէկը հիմնականին մէջ կեդրոնացած է, ո՛չ թէ սպառնալիքները վերացնելու, այլ ամբողջ ճշմարտութիւնը փնտռելու վրայ եւ հասկնալու «ճշգրիտ ու ազնիւ կերպով այն, ինչ որ կայ իրապէս, նոյնիսկ եթէ այդ մէկը՝ գեղեցիկ, յարմար կամ հաճելի չէ»: Այս տեսակի հաւատքով մարդիկ խոնարհուածութիւնը ունին շարունակաբար զարգացնելու իրենց հասկացողութիւնը:

Կալիֆի խորաթափանցութիւնները կը յիշեցնեն Յակոբի խրախոյսը, որ հաւատացեալներ որդեգրեն նմանատիպ մտածելակերպ, ուր անոնք «արագ ըլլան՝ լսելու մէջ, դանդաղ խօսելու մէջ, դանդաղ՝ բարկանալու մէջ» (Յակ. 1. 19): Ուրիշներու հանդէպ ջղագրգիռ դրդուած ըլլալու փոխարէն, Յակոբ կը յորդորէ Յիսուսի հաւատացողներուն, որ յիշեն, թէ մարդկային բարկութիւնը չ'իրագործեր Աստուծոյ արդարութիւնը (Հմ. 20): Իմաստութեան անհարաւոր է միայն խոնարհութեամբ՝ Անոր շնորհքին ենթարկուելու միջոցով (Հմ. 21, տես Տիտոս 2. 11-14):

Երբ մեր կեանքի իւրաքանչիւր պահը կախուած է Աստուծոյ շնորհքէն կրնանք մէկգի դնել միշտ ճիշդ ըլլալու անհրաժեշտութիւնը: Կրնանք ապաւինիլ Աստուծոյ առաջնորդութեան, թէ ինչպէ՞ս ապրելու եւ հոգ տանելու ենք ուրիշներու (Յակ. 1. 25-27):

Աղօթք - Սիրելի Աստուած, կը խնդրեմ՝ օգնէ ինձի որ յանձնեմ միշտ ճիշդ ըլլալու անհրաժեշտութիւնը՝ անվերջ սորվելու պարգեւին դիմաց, երբ ես կը ճամբորդեմ Զեզի հետ: Ամեն: **Սորվելու եւ փոխելու խոնարհ պատրաստակամութեան հոգիի ի՞նչ օրինակներ տեսած ես: Ինչպէ՞ս կրնաս ուրիշներէն սորվիլ պատրաստակամութիւն զարգացնելու համար:**

Ենովք Աստուծոյ հետ ընթացաւ: [Ծն. 5. 24]

ԸՆԹԱՆԱԼ ԱՍՏՈՒԾՈՅ ԶԵՏ

Տարիներ շարունակ՝ մարմնական ճկունութեան մասնագէտներ, շեշտած են վազքին կարեւորութիւնը՝ սիրտի երակներուն առողջութեան համար: Սակայն վերջին գիտական ուսումնասիրութիւնները՝ ցոյց տուին, որ ամէն օր ճեմելը՝ ունի նաեւ կարգ մը առողջապահական օգուտներ: Ամերիկայի Միացեալ Նահանգներու Առողջապահութեան Ազգային Հիմնարկին համաձայն, «մեծահասակները, որոնք օրական 8000 կամ աւելի քայլեր առին, յաջորդ տասնամեակին՝ մահանալու հաւանականութիւնը նուազեցուցին, քան անոնք որոնք օրական ընդամէնը 4000 քայլ քայլեցին»: Քալելը՝ լաւ է մեզի համար:

Աստուածունչի ամբողջ պատմութեան ընթացքին մէջ՝ ընթանալը կը գործածուի որպէս Աստուծոյ հետ հաղորդակցելու խորհրդանիշ: Ծննդոց 3-ին մէջ՝ մեզի կը պատմուի, թէ ինչպէ՞ս Աստուած քայլեց Ադամի եւ Եւայի հետ «օրուայ զով ատենը» (Հմ. 8): Ծննդոց 5-ը կը ներկայացնէ Ենովքի պատմութիւնը, որ «երեք հարիւր տարի Աստուծոյ հետ ընթացաւ» (Հմ. 22): Օր մը, երբ Ենովք իր Աստուծոյն հետ ժամանակ կ'անցնէր, ան ուղղակի Աստուծոյ քով առնուեցաւ (Հմ. 23): Ծննդոց 17-ին մէջ՝ Աստուած հրաւիրեց Աբրահամի «որ Իր առջեւէն ընթանայ», մինչ նորոգեց Իր ուխտը անոր հետ (Հմ. 1): Եւ Յակոբ, իր կեանքի վերջաւորութեան, նկարագրեց Աստուած՝ որպէս իր հովիւը եւ խօսեցաւ իր նախնիներուն մասին, որոնք «հաւատարիմ ընթացան» (48. 15): Նոր Կտակարանին մէջ՝ Պօղոս հրահանգեց մեզի «Հոգիով ընթանալու» մասին (Գաղ. 5. 16):

Ինչպէս Ենովք եւ Ծննդոց պատրիարքները, մենք ալ կրնանք ամէն օր ընթանալ Աստուծոյ հետ: Մենք այդ մէկը կ'ընենք՝ յանձնելով մեր կեանքը Յիսուսի եւ Սուրբ Հոգիով առաջնորդուելով: Այդ՝ իսկական առողջութեան ուղին է:

Աղօթք - Զա՛յր, կը խնդրե՛մ Ներե ինձի, երբ որոշած եմ ընթանալ Զեզի հետ, ա՛յլ հետապնդել իմ սեփական օրակարգս: Օգնե՛ ինձի, որ ընթանամ Զեզի հետ: Ամէն:

Այսօր, երբ կը խորհրդածես Սուրբ Գիրքին մասին, ինչպէ՞ս պիտի հետեւիս ու հնազանդիս անոր խօսքերուն:



Երբ տակաւին մեղաւոր էինք՝ Զրիստոս մեռաւ մեզի համար:
[Հոռվ. 5. 8-9]

ՆՈՐ ՍԿԻԶԲ ՍԸ ԱՍՏՈՒԾՈՅ ՀԵՏ

«Քու մեղքդ ա՞ն՝ Յիսուսը խաչը հանեց»: Ա՛յդ՝ հարցումն է, որ կարծես Հոլանտացի նկարիչ Ռամպրանդ (*Rembrandt*) կը հարցնէ՝ 1633 թուականին «Խաչի Բարձրացումը» խորագիրով իր գլուխ գործոցին մէջ: Յիսուս կը յայտնուի նկարին կեդրոնը, երբ Անոր խաչը կը բարձրանայ եւ կը դբուի իր տեղը: Չորս տղամարդեր կը բարձրացնեն, բայց մէկը կ'առանձնանայ՝ Յիսուսը շրջապատող լոյսին ներքեւ: Անոր հագուստը տարբեր է. ան հագած է Ռամպրանդի օրերու ոճով, գլխարկ մը դրած, որ նկարիչը յաճախ կը դնէր իր գլուխին: Անոր դէմքին աւելի ուշադիր նայելով կ'երեւի, որ Ռամպրանդ՝ ինզինք դրած է նկարին մէջ, որպէ՛ս թէ ըսելու. «Իմ մեղքերս իրենց դերը ունեցած են Յիսուսի մահուան մէջ»:

Բայց կա՛յ նաեւ մէկը, որ նոյնպէս կ'առանձնանայ: Ան ճիւղ մը վրայ նստած է եւ նկարէն ուղղակի դուրս կը նայի: Ոմանք սա՛ կը համարեն Ռամպրանդի երկրորդ ինքնագլխանկարը, որ կը գրաւէ բոլոր դիտողներուն ուշադրութիւնը, որ կարծես կը հարցնէ. «Ի՞նչն ալ այստեղ չե՞ս»:

Պօղոս տեսաւ ինքզինք այդտեղ, եւ մենք ալ կրնանք նոյնպէս տեսնել մենք մեզ հոն, որովհետեւ Յիսուս հարչարուեցաւ եւ մեռաւ մեզի համար: Հոռոմայեցիս 5. 10-ին մէջ՝ ան կ'ակնարկէ ինքնիրեն եւ մեզի՝ որպէս «Աստուծոյ թշնամիները»: Բայց «Աստուած մեզի հանդէպ ունեցած իր սէրը ապացուցանեց այն իրողութեամբ, որ երբ տակաւին մեղաւոր էինք՝ Քրիստոս մեռաւ մեզի համար» (Հմ. 8-9):

Մենք կը կանգնինք թէ Ռամպրանդի եւ թէ Պօղոսի կողքին՝ որպէս ներումի կարիքը ունեցող մեղաւորներ: Յիսուս կ'առաջարկէ մեզի այն, ինչ որ մենք չենք կրնար ընել մենք մեզի համար եւ կը բաւարարուէ մեր ամենախոր կարիքը, որ նոր սկիզբ մըն է Աստուծոյ հետ:

Աղօթք - Սիրելի Յիսու՛ս, շնորհակալ եմ՝ Զեզ ինծի սուիրելուդ համար: Կը խնդրեմ, օգնէ ինծի որ ապրիմ Քու սիրովդ: Ամէն:
Եթէ մեղքի պատճառով Աստուծոյ թշնամի ենք, կրնանք այսօր ապրիլ՝ որպէս Իր ընկերը Յիսուսի մահուան ու յարութեան պատճառով եւ ունենալ նոր սկիզբ մը՝ Աստուծոյ հետ:

Աստուած ըսաւ. «Ժողովուրդը թող չիրաժարի՝ երբ պատերազմը տեսնէ, ու Եգիպտոս վերադառնայ: [Ել. 13. 17]

ՅԵՇՏ ԵՒ ԴԺՈՒԿԱՐ

Մարք (Mark) խոստովանալից երիտասարդ հովիւ մըն էր: Յետոյ, առաւօտ մը անոր որդին, Օուըն (Owen), ինկաւ ու մեռաւ իր հետ գնդակ խաղցած ատեն: Մարք ակերեցաւ եւ տակաւին կ'ողբայ իր կորուստին համար: Բայց իր ցաւին միջոցով՝ ան կը դառնայ ակելի կարեկից հովիւ մը: Ես սգացի Մարքին հետ եւ մտածեցի՝ արդեօ՞ք անոր ունեցած փորձութիւնը ցոյց կու տայ այն միտքը, որ Ա. Ո. Թօզըր (A. W. Tozer) նշած է. «Կասկածելի է, թէ արդեօ՞ք Աստուած կրնայ մեծապէս օրհնել մարդուն, քանի դեռ խորապէս չէ վիրաւորած գինք»: Կը վախնամ թէ, այդ ճիշդ է:

Յետոյ դարձեալ, գուցէ այդ այնքան ալ պարզ բան մը չէ՛: Մենք կը սորվինք Աստուծոյ ճամբաներուն բարդութեան մասին՝ դիտելով Իսրայէլի ելքը Եգիպտոսէն: Աստուած երիտասարդ ազգին՝ Եգիպտոսէն դուրս հանեց հեշտ ճանապարհով՝ Իսրայէլի մասին ըսելով. «Ժողովուրդը թող չհրաժարի՝ երբ պատերազմը տեսնէ, ու Եգիպտոս վերադառնայ» (Ել. 13. 17): Ապա, քանի մը համարներ անդին, Աստուած Մովսէսին ըսաւ, որ դառնան՝ որպէսզի Փարաւոն հաւաքէ իր բանակը եւ դուրս գայ կռուելու (14. 1-4): Փարաւոնը վերցուց խայծը: Իսրայէլացիները «վշտացան ու աղաղակեցին Տէրոջ» (Հմ. 10): Մովսէս ըսաւ անոնց. «Տէ՛րը պիտի պատերազմի ձեզի համար. դուք լռեցէ՛ք» (Հմ. 14):

Աստուած կ'օգտագործէ՝ թէ հե՛շտ եւ թէ ալ դժուա՛ր ճանապարհներ՝ իր ժողովուրդին անեցնելու եւ իրեն փառք բերելու համար: Ան խոստացաւ. «Փարաւոնի վրայ եւ անոր բոլոր զօրագունդերուն վրայ պիտի փառաւորուիմ, ու Եգիպտացիները պիտի գիտնան թէ ե՛ս եմ Տէրը» (Հմ. 4): Աստուած կը կառուցանէ մեր հաւատքը՝ իւրաքանչիւր փորձութեան միջոցով, ըլլայ այդ հե՛շտ կամ դժուա՛ր:

Աղօթք - Սիրելի Յիսուս, Դուն բաւական ես՝ իւրաքանչիւր փորձութեան համար: Ամէն:

Ինչպե՞ս մեր ցաւը կրնայ նպաստել մեզի: Քու կարծիքով, ինչո՞ւ Աստուած կ'օգտագործե՛ր թէ հե՛շտ եւ թէ դժուա՛ր փորձութիւններ:

Ուստի բարիք գործելէ չձանձրանանք, քանի որ յատուկ ատենին պիտի հնձենք՝ եթէ չպարտասինք: [Գաղ. 6. 9]

ՄԻ՛ ՊԱՐՏԱՍԻՐ

Յողնա՞ծ: Այդպէս զգաց Սաթեան՝ (Satya) նոր գործ մը սկսելէ՝ ինը ամիսներ անց: Որպէս Յիսուսի հաւատացող, ան կը ձգտէր հետեւիլ Աստուծոյ սկզբունքներուն, երբ ան կը լուծէր խնդիրներ եւ կը ղեկավարէր իր գործը: Սակայն մարդոց հետ կապուած խնդիրները կը շարունակուէին եւ կազմակերպչական փոքր առաջընթաց մը միայն՝ կը թուէր արձանագրուիլ: Ան զգաց՝ որ պէտք էր հրաժարիլ գործէն:

Հաւանաբար՝ Սաթեային նման՝ դո՛ւն ալ յոգնած կը զգաս: Դուն գիտես՝ թէ ի՞նչ լաւ բան պէտք է ընես, բայց պարզապէս զգացական եւ ֆիզիքապէս չափազանց սպառած կը զգաս՝ գործդ շարունակելու համար: Քաջայերուէ՛՜ ու պարտասէ՛: Պօղոս առաքեալ կը քաջայերէ մեզ՝ հետեւեալ խօսքերով. «Ուստի բարիք գործելէ չձանձրանանք, քանի որ յատուկ ատենին պիտի հնձենք՝ եթէ չպարտասինք» (Գաղ. 6. 9): Ան կ'օգտագործէ հողագործի փոխաբերական օրինակը: Եւ ինչպէ՛ս ամէն հողագործ գիտէ, սերմանելը ծանր աշխատանք է:

«Հոգին հաճեցնելու համար» սերմանելը (Հմ. 8), նոյնպէս ծանր աշխատանք է: Յիսուսի հաւատացողները, որոնք կը ձգտին հետեւիլ Հոգիին առաջնորդութեան եւ ապրիլ կեանք մը, որ կը պատուէ գինք, կրնայ թուլնալ եւ պարտասիլ: Բայց երբ մենք կարչած ենք Անոր խոստումներուն, բերքը կու գայ: Մենք «յաւիտենական կեանք կը հնձենք» (Հմ. 8, տե՛ս Յովհ. 17. 3)՝ Աստուծոյ օրհնութեան մեծ բերք մը, երբ Քրիստոս վերադառնայ եւ այս կեանքին մէջ մենք կ'ունենանք վստահութիւն եւ ուրախութիւն, որ կը բխի գինք ճանչնալէն: Մենք կը հնձենք ճիշդ ժամանակին, ժամանակ մը՝ որ կը որոշուի ո՛չ թէ տարուան եղանակներով, այլ կատարեալ Աստուծոյ կամքով: Մինչեւ բերքին հաւաքը, եկէ՛ք շարունակենք ցանել Աստուծոյ գօրութեամբ:

Աղօթք - Սիրելի Յայ՛ր, կը խնդրեմ՝ օգնէ՛ ինձի, որ չպարտասիմ եւ յամառօրէն շարունակեմ բարիք գործել: Ամէն:

Ի՞նչ բան կը ստիպէ քեզ՝ պարտասելու: Ինչպէ՛ս կրնաս հաւատարիմ մնալ այն խոստումին, որ «ճիշդ ժամանակին մենք բերք կը հնձենք»:

Պատեհ ժամանակին պատասխանեցի քեզի, եւ փրկութեան օրը
օգնեցի քեզի: [Բ. Կորնթ. 6. 2]

ԵՆԻՆ ԵՂԱԾ՝ ՅԻՍՈՒՍՈՎ

Յայտարարութիւնը կ'ըսէ. «Մենք պատրաստ ենք մեր
թոճիչքին՝ դէպի Մօնթէկօ Պէյ (*Montego Bay*):» Կը ճամբորդէի՝
որպէս երկրորդական դպրոցի խումբի առաջնորդ, դէպի
Ճըմէյքա (*Jamaica*) միսիոնարական ճամբորդութիւնով: Զեռքս
դրի ուսիս վրայի պայուսակին, որպէսզի օգնանաւ բարձրանալու
տոմսակս ու անձագիրս հանեմ: Սակայն խուճապի մատնուեցայ:
Անձնագիրս՝ անհետացած էր:

Խուճապը բարձրացաւ օգնանալ՝ առանց ինծի եւ ես չորս
օրեր ջանք թափեցի՝ փորձելով նոր անձագիր մը ապահովել:
Հարիւրաւոր հեռախօսային գանգահարումներէ, ապարդիւն
ճամբորդութենէ յետոյ դէպի Ուաշինկթըն (*Washington DC*),
երկար ինքնաշարժի ճամբորդութենէ հետք դէպի Կրանտ Ռաքիտզ
(*Grand Rapids*), Շիքագօ, երկու օր մօտակայ քաղաքի մը մէջ
եւ մեր տեղական պետական ներկայացուցիչին գրասենեակի
օգնութենէն հետք, վերջապէս նոր անձագիր ստացայ եւ կրցայ
միանալ խումբին՝ ճամայքայի մէջ:

Անձագիր: Պարզ՝ փոքրիկ գիրք մը, բայց իմ միակ երաշ-
խիքս, եթէ կ'ողգէի երթալ: Որքա՞ն ալ աշխատեցայ՝ այդ նոր
փաստաթուղթը ձեռք բերելու համար, անոր արժէքը անբաղդա-
տելի է այն բանին հետ, որ կ'որոշէ մեր յաւիտենական նպատակը.
հաւատք Յիսուսի հանդէպ, որը մեր մեղքերէն փրկութիւն
ստանալու եւ Իր մէջ նոր կեանք ստանալու միակ երաշխիքն է:

Սուրբ Գիրքը կ'ըսէ. «Հիմա է փրկութեան օրը» (Բ. Կորնթ. 6.
2): Պօղոս կը նկարագրէր այն իրականութիւնը, որ փրկութեան
լուսաբացը եկաւ Քրիստոսով: Անոր հաւատալով՝ մենք կրնանք
զգալ Աստուծոյ սէրը եւ Անոր փրկող եւ վերականգնող
աշխատանքը ամբողջ ստեղծագործութեան մէջ: Այսօր՝ եկէ՛ք
վստահ ըլլանք, որ մենք իսկապէս գիտենք, թէ ի՞նչ կը նշանակէ
«մենք Աստուծոյ արդարութիւնը ըլլանք անով» (5. 21):

Աղօթք - Տեր, շնորհակալ եմ Զեզի, որ ինծի կարելիութիւնը տուած
ես մեղքէն եւ մահէն փրկութիւն ստանալու համար: Ամէն:

**Յիսուսով մենք փրկութիւն կը ստանանք, ո՛րստի վստահիլը Անոր,
որպէս մեր միակ յոյսն ու Փրկիչը:**

Ալեւորութեան մէջ ալ պտուղ պիտի արտադրեն: [Սաղմ. 92. 14]

ՏԱԿԱԻՆ ՊՏՂԱՏՈՒ՝ ԱՍՏՈՒԾՈՅ ՀԱՄԱՐ

Ժողովրդական հին հեքիաթ մը կայ կնոջ մը մասին, որ ամէն օր գետէն ջուր կը տանէր տուն՝ օգտագործելով երկու դոյլ՝ երկար ձողի մը երկու ծայրերէն կախուած. մէկ դոյլը նոր եւ տոկուն էր, միւսը՝ շատ աւելի հին եւ ճեղքուած: Երբ կինը տուն հասաւ, նոր դոյլը տակաւին լեցուն էր, բայց հին դոյլը՝ գրեթէ դատարկ: Հին դոյլը գէշ զգաց եւ ներողութիւն խնդրեց: Կինը դարձաւ եւ ցոյց տուաւ ճանապարհը եւ հարցուց հին դոյլին. «Կը տեսնե՞ս այդ բոլոր ծաղիկները, որոնք կը մեծնան ճամբուն քու կողմդ: Ամէն օր դուն կը ջրես գանոնք եւ իմ ընթացքս դէպի գետ եւ ետ տուն՝ գեղեցկութեամբ լեցուած է»:

Կ'ապրինք աշխարհի մը մէջ, որ կ'երկրպագէ եւ կը գնահատէ երիտասարդները. որովհետեւ երիտասարդ եւ տոկուն են, առանց սպիններու եւ արդիւնաւէտ: Սակայն Աստուածաշունչը յստակօրէն կը պատմէ մեզի՝ արդար գեղեցկութեան մասին, որ կու գայ աւելի հին եւ տկար, գուցէ նոյնի՛սկ ճեղքուած եւ ջուր հոսեցնող անօթներէ: Սաղմոսերգուն ըսաւ. «Արդարը արմաւենիի պէս պիտի ծաղկի, Լիբանանի մայրիի պէս պիտի մեծնայ» (Սաղմ. 82. 12):

Ճիշդ է, որ ծերութիւնը միշդ ալ հոմանիչ չէ իմաստունի հետ, բայց ծերերը կը նպաստեն մեր կեանքերուն՝ այն միջոցներով, որ երիտասարդները չեն կրնար. որովհետեւ անոնք քիչ մը աւել երկար ապրած են, քիչ մը աւելի փորձառու են եւ քիչ մը աւելի արմատաւորուած են՝ ծաղկելով հաւատքի մէջ եւ կը վստահին Աստուծոյ: Այդպիսի մարդիկ «Ալեւորութեան մէջ ալ պտուղ պիտի արտադրեն, պարարտ ու կանաչ պիտի մնան» (Հմ. 14):

Մեր կեանքին մէջ տարեցները կը շարունակեն գեղեցիկ պտուղներ տալ: Եկէ՛ք ժամանակ յատկացնենք տեսնելու ա՛յս եւ հոգատար ըլլալու անոնց:

Աղօթք - Հայր, կը խնդրե՛մ, աչք տո՛ւր ինձի տեսնելու, անոնք որոնք ծերութեան մէջ տակաւին պտուղ կու տան: Ամէն:

Ո՞ր տարեցները պարբերաբար կը յայտնուին մեր ճամբուն վրայ: Ի՞նչ կ'ընենք այսօր զանոնք տեսնելու եւ գնահատելու համար:

Տերը ըսաւ. «Արդարեւ տեսայ Եգիպտոսի մէջ եղող ժողովուրդիս տառապանքը: [Ել. 3. 7]

ԹՈՂ ՏՈՒՐ ԺՈՂՈՎՈՒՐԴՍ ԵՐԹԱՅ

Էրըն Տակլըսի՝ (Aaron Douglas) Թո՛ղ Տուր ժողովուրդս Երթայ յայտնի գծագրութիւնը կը գործածէ նարդոսի, կանաչ եւ ոսկեգոյն վառ գոյները աւանդական Ափրիկեան պատկերներու հետ միասին, պատմելու Մովսէսի Աստուածաշնչային պատմութիւնը եւ կապելու զա՛յն սեւամորթ Ամերիկացիներու ազատութեան եւ արդարութեան համար մղուած պայքարին:

Գծագրութիւնը կը պատկերաւորէ Աստուծոյ երեւոյթը Մովսէսի՝ վառող մորէնիի մը մէջ, երբ Ան յայտնեց, որ տեսած է Իսրայէլի ժողովուրդին դժբախտութիւնը՝ Եգիպտոսի մէջ: Արուեստագէտը կ'օգտագործէ լոյսի ճառագայթ մը՝ խորհրդանշելու Աստուած եւ Անոր պատգամը. «Ուստի եկ'որ հիմա, քեզ Փարաւոնին ղրկեմ, որ իմ ժողովուրդս՝ Իսրայէլի որդիները Եգիպտոսէն հանես» (Ել. 3. 10):

Թո՛ղ Տուր ժողովուրդս Երթայ գծագրութեան մէջ, Մովսէս ծունկի կու գայ՝ հնազանդ՝ Աստուծոյ հրամանին, բայց մեր աչքերը կը դառնան դէպի զի՛նք շրջապատող մութ ալիքներուն եւ պատերազմի համար մարգուած ձիերուն՝ յիշեցնելով ա յն պայքարը, որու Իսրայէլի ժողովուրդը պիտի հանդիպի Եգիպտոսէն հեռանալու ատեն: Բայց լոյսի ճառագայթը՝ պայծառ կը փայլի՝ որպէս յիշեցում, որ Աստուած պիտի ըլլայ Իսրայէլի ժողովուրդին հետ:

Գծագրութեան առաջացուցած յոյգերը կը վերահնչեն, քանի որ անարդարութեան դէմ մղուող պայքարը կը շարունակուի այսօր. շատեր կ'օգտագործեն իրենց ուժը՝ ճնշելու մարդկութեան՝ բոլոր աշխարհի մէջ: Ինչպէս անոնք, որոնք կը տառապին ու կ'աղաղակեն, որ Աստուած «տնանկին պատսպարան ըլլայ տագնապի ժամանակ» (Սաղմ. 9. 9), մենք ալ կրնանք աղաչել՝ Աստուծոյ, որ պատասխանէ անոնց օգնութեան աղաղակներուն եւ Մովսէսի նման պատրաստ ըլլանք գործելու՝ յօգուտ ճնշուածներուն:

Աղօթք - Երկնաւոր Զա՛յր, կը խնդրեմ՝ Զու ներկայութիւնդ յայտնի ըրէ՝ բոլոր անոնց, որոնք անարդարօրէն կը տառապին: Ամէն:
Աղօթե՛ ճնշուածներուն եւ տառապողներուն համար եւ ջանայ աւելի իմանալ անարդար կերպով տառապողներուն համար՝ հոգատար ըլլալու մասին:

Փառքի եւ Աստուծոյ Յոգին հանգչած է ձեր վրայ: [Ա. Պետ. 4. 14]

ՓՈՐՁՈՒԹԵԱՆ ՊԱՐԳԵԻՆ

Երկու տղամարդերը նուաճեցին մարդկային թռիչքը, բայց Ռայթ (Wright) եղբայրներուն յաջողութեան ճանապարհը երբէ՛ք հեշտ չէր: Հակառակ անհամար անյաջող փորձերու, ծաղրանքի, նիւթական կորուստներու եւ անոնցմէ մէկուն լուրջ վիրաւորուելուն, իրենց դիմագրաւած փորձութիւնները՝ չկրցա՛ն կեցնել եղբայրները: Ինչպէս որ Օրուիլ Ռայթ (Orville Wright) նկատեց. «Ո՛չ մէկ թռչուն չի՛ սավառնիր՝ հանդարտութեան մէջ»: Գաղափարը, ըստ կենսագրագիր Տէյվիտ Մըք Գալլախի (David McCullough), կը նշանակէ թէ դժբախտութիւնները «յաճախ կրնան ըլլալ ճի՛շդ այն, ինչ որ ձեզի հարկաւոր է ձեզ աւելի վեր բարձրացնելու համար»: Մըք Գալլախ ըսաւ. «Անոնց ուրախութիւնը լերան գագաթը հասնիլը չէ՛ր: Անոնց ուրախութիւնը՝ լերը մաքլցի՛լն էր»:

Պետրոս առաքեալ ալ սորվեցուց նման հոգեւոր սկզբունք մը, առաջին դարու հալածուող եկեղեցիին: Ան ըսաւ. «Տարօրինակ մի՛ սեպէք այն փորձութեան հրդեհը, որ կ'ըլլայ ձեզ փորձելու համար» (Ա. Պետ. 4. 12): Սա՛ տառապանքի ցաւի ժխտում չէ՛ր: Պետրոս գիտէր, որ Քրիստոսի հանդէպ յոյսը կ'աւելցնէ մեր վստահութիւնը՝ Աստուծոյ հանդէպ:

Այս՛ յատկապէս ճիշդ է, երբ մենք կը տառապի՛նք մեր հաւատքին համար, ինչպէս կ'ընէին առաջին դարու քրիստոնեաները: Պետրոս գրեց անոնց. «Ուրախացէ՛ք քանի որ կը հաղորդակցիք Քրիստոսի չարչարանքներուն, որպէսզի անոր փառքի յայտնութեան ատենն ալ ուրախանաք ցնծութեամբ» (Հմ. 13): Ու շարունակեց ըսելով. «Եթէ նախատուիք Քրիստոսի անունին համար՝ երանելի՛ էք, որովհետեւ փառքի եւ Աստուծոյ Հոգին հանգչած է ձեր վրայ» (Հմ. 14):

Քանի որ Ռայթ եղբայրներուն կերպարը ողջունուեցաւ կենսագրագիրին կողմէ, թող ուրիշներ ալ կարենան տեսնել Աստուծոյ սիրառատ կերպարը՝ մեր մէջ:

Աղօթք - Սիրելի Աստուա՛ծ, տառապանքը կը փորձէ զի՛ս: Կը խնդրեմ՝ ինձի յոյս տուր քու փառքիդ համար: Ամէն:

Եթէ կը չարչարուի՛նք ու կը տառապի՛նք մեր հաւատքին համար, վստա՛հ ըլլանք որ Ան կը փառաւորուի ու մենք երանելի կ'ըլլանք:

Ան (Որդին) իր փառքին շողն է ու իր եութեան նկարագրութիւնը:
[Եբ. 1. 3]

ՃԱՆՉՆԱԼ ԱՍՏՈՒԱԾ

Ես թռչեցայ Հնդկաստան, երկիր մը, որ բնաւ չէի այցելած եւ կէս գիշերէն ետք՝ հասայ Պէնկալուրուի (Bengaluru) օդակայանը: Թէեւ ե-նամակներու հեղեղ մը եղած էր, բայց չէի գիտեր թէ ո՞վ գրիս պիտի դիմաւորէր կամ ո՞ւր պէտք էր հանդիպէի անոր: Հետեւեցայ մարդոց հոսքային զանգուածին՝ դէպի պայուսակները վերցնելու եւ քննութեան տեղը, յետոյ դուրս ելայ խոնաւ եւ կպչուն գիշեր մը, ուր փորձեցի նկատել զոյգ մը բարեկամական աչքեր՝ երեսներու մեծ ծովի մը մէջ: Մէկ ժամ շարունակ՝ քալեցի այս ու այն կողմ՝ յուսալով, որ մէկը կը ճանչնայ գրիս: Վերջապէս բարի մարդ մը մօտեցաւ ինծի եւ ըսաւ. «Դո՛ւն Ուինն (Winn) ես: Կը ներե՛ս: Խորհեցայ՝ որ կը ճանչնամ քեզ եւ դուն շարունակեցիր քալել իմ առջեւ, բայց դուն նման չէիր՝ անոր որու կը սպասէի»:

Մենք պարբերաբար կը շփոթինք եւ չենք կրնար ճանչնալ մարդիկ կամ վայրերը, որոնք ծանօթ ըլլալու են մեզի: Բայց Աստուած կուտայ միակ անսխալական միջոցը՝ զԻնք ճանչնալու: Ան մեր աշխարհը եկաւ՝ որպէս Յիսուս, Ան՝ որ «իր փառքին շողն է ու իր էութեան նկարագրութիւնը» (Եբ. 1. 3): Քրիստոս՝ Աստուծոյ ճշմարիտ ներկայացուցիչն է: Երբ մենք կը տեսնենք զԻնք, մենք լման վստահութիւն կ'ունենանք, որ կը տեսնենք Աստուած:

Եթէ մենք կ'ուզենք իմանալ, թէ ինչպիսի՞ն է Աստուած, ի՞նչ կ'ըսէ, ինչպէ՞ս կը սիրէ, ապա մենք պարզապէ՛ս պէտք է նայինք ու լսենք Յիսուսի: Արդեօ՞ք՝ մենք իսկապէս կը լսենք այն, ի՞նչ որ «Աստուած խօսած է» (Հմ. 2) Իր միջոցով: Երդեօ՞ք մենք իրականութեան մէջ կը հետեւի՞նք Անոր ճշմարտութեան: Համոզուելու համար, որ գիտենք ինչպէ՞ս ճանչնալ Աստուած, մենք մեր հայեացքը կ'ուղղենք Որդիին վրայ եւ կը սորվինք իրմէ:

Աղօթք - Սիրելի Աստուա՛ծ, կ'ուզեմ իմանալ Քու ձայնդ ու հետեւիլ Քեզի: Կը խնդրե՛մ՝ օգնէ ինծի՝ ճանչնալու Քեզ՝ Տէր Յիսուսի մէջ: Ամէն:

Եթէ երբեմն կը դժուարանաք ճանչնալու Աստուծոյ ձայնը, Յիսուսի վրայ կեդրոնանալը կ'օգնէ մեզի:



Տեսանելի բաները ժամանակաւոր են, իսկ անտեսանելիները յաւիտենական: [Բ. Կորնթ. 4. 18]

ԱՍՏՈՒԾՈՅ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԸ

Ցաւալի էր տեսնել, թէ ինչպէ՛ս հայրս կը կորսնցնէր իր յիշողութիւնը: Մտազարութիւնը դաժան հիւանդութիւն մըն է, որ կը խլէ մարդոց բոլոր յիշողութիւնը, մինչեւ որ ալ յիշողութիւն չի մնար իրենց ապրած կեանքին մասին: Գիշեր մը՝ երազ մը տեսայ եւ կը հաւատամ, որ Աստուած անով ուզեց քաջալերել զի՛ս: Երազիս մէջ տեսայ, որ Ան իր ձեռքերուն մէջ ունէր փոքրիկ գանձատուփ մը: «Քու հօրդ բոլոր յիշողութիւնները ապահով՝ պահուած են այս տուփին մէջ» ըսաւ Ան: «Մինչ այդ՝ կը պահեմ գանոնք այստեղ: Յետոյ՝ օր մը, դրախտին մէջ, ես ասոնք իրեն կը վերադարձնեմ»:

Յաջորդող տարիներուն, այս երազը մխիթարեց զիս, երբ հայրս չէր գիտեր՝ թէ ո՞վ եմ ես: Ինծի յիշեցում էր, որ անոր հիւանդութիւնը ժամանակաւոր էր: Քանի որ ան Աստուծոյ գաւակն էր, ան օր մը՝ ընդմիշտ պիտի վերագտնէ իր յիշողութիւնը:

Այդ նաեւ կ'օգնէ յիշելու, թէ Պօղոս նկարագրեց տառապանքը որպէս «թեթեւ եւ վայրկենական» (Բ. Կորնթ. 4. 17): Առաքեալը չէր թերգնահատեր տառապանքը. ինք ալ շատ տառապած էր (Հմ. 7-12): Ան կը շեշտէր, որ յաւիտենականութեան լոյսին ներքեւ, որ մերն է Քրիստոսով, մեր նեղութիւնները թեթեւ են ու վայրկենական: Բոլոր փառահեղ օրհնութիւնները, որոնք այժմ մենք արդէն ունինք Յիսուսի մէջ, եւ անոնք, որոնք օր մը մենք պիտի զգանք, անսահմանօրէն կը գերազանցեն բոլորին (Հմ. 17):

Աստուծոյ եւ Անոր խոստումներուն շնորհիւ՝ մենք կրնանք ընտրել չյուսահատիլ: Նոյնիսկ երբ կը տառապինք, կրնանք ամէն օր ապրիլ հաւատքով՝ ապաւինելով Անոր զօրութեան, որ կը նորոգէ մեզ (Հմ. 16): Եկէ՛ք այսօ՛ր «նայինք» անոր յաւիտենական խոստումներուն (Հմ. 18):

Աղօթք - Յայր, շնորհակալ եմ, որ իմ տառաքանքս՝ վերջին խօսքը չունի: Դո՛ւն ունիս: Ամէն:

Տառապանք եւ նեղութիւն՝ միշտ պիտի ունենանք. անխուսափելի է: Սակայն Աստուծոյ տուած խոստումները՝ թող մեզ քաջալերեն ու պահեն հաստատ մեր հաւատքին մէջ:

2գուշաչէ՛ք որ ո՛չ մէկը որսայ ձեզ փիլիսոփայութեամբ եւ ունայն խաբէութեամբ: [Կող. 2. 8]

ԱՄԵՆԱԿԱՐԵՒՈՐԸ ՔՐԻՍՏՈՍ Է

Կինս ու ես՝ կը սիրենք ռոմանթիք ֆիլմեր դիտել: Կրնամ շքեղ թէ անոնք իր նախասիրութիւնն են. բայց ե՛ս ալ կը սիրեմ: Այդ ֆիլմերուն հմայքն ու գրաւչութիւնը կը կայանայ անոնց կանխատեսելի ընթացքին մէջ, որ կը տանի դէպի երջանիկ ապրելու: Վերջերս՝ դիտեցինք ֆիլմ մը, որ քանի մը կասկածելի ռոմանթիք խորհուրդներ կու տար: Մէրը՝ զգացմունք: Ապա՝ Հետեւէ սիրտիդ: Ու վերջապէս՝ Քու երջանկութիւնդ ամենակարեւորն է: Մեր զգացումները՝ անշուշտ կարեւոր են: Բայց ինքնակեդրոն զգացականութիւնը, միշտ ալ ամուսնական կեանքի համար վատ հիմ մըն է:

Հիմնական մշակոյթը՝ կը պարունակէ բազմաթիւ գաղափարներ, որոնք սկիզբը լաւ կը հնչեն, բայց կը քանդուի ուշադիր ուսումնասիրելէ ետք: Պօղոս Կողոսացիս 2-ին մէջ կ'ընդգծէ որ, «արմատացած ու շինուած անոր վրայ, եւ հաստատ հաւատքի մէջ» (Հմ. 7), մեզի հնարաւորութիւնը կու տայ բացայայտելու մեր մշակոյթին սուտերը: Առաքելը՝ նման սուտերը կը նկարագրէ որպէս «ունայն փիլիսոփայութիւն եւ խաբէութիւն», որոնք շինուած են «մարդոց աւանդութեան ու աշխարհի սկզբունքներուն համաձայն, եւ ո՛չ թէ Քրիստոսի վարդապետութեան համաձայն» (Հմ. 8):

Ուստի, յաջորդ անգամ՝ երբ ֆիլմ մը կը դիտե՛ս, դուն քեզի կամ քեզի հետ եղողներուն հարցուր. «Ինչպէ՞ս այդ կը համեմատուի այն ամէնուն հետ, ինչ որ Աստուածաշունչը կ'ըսէ, որ ճշմարիտ է»: Եւ յիշէ՛ թէ մենք ունինք միջոցը՝ գտնելու իմաստութիւն եւ ամբողջականութիւն (Հմ. 9-10):

Աղօթք - Յայր, մեր աշխարհը լեցուած է պատմութիւններով, որոնք կեանք կը խոստանան, բայց՝ ի վերջոյ՝ կը հակասեն Զու ճշմարտութեանդ: Կը խնդրե՛մ, մեծ պապակ տուր իմաստութեան համար, որպէսզի քալեմ Զու ճամբաներուդ մէջ: Ամէն:
Ժողովրդական մշակոյթը կը ձեւաւորէ մեզ՝ ինչպէ՞ս նայելու աշխարհին: Սակայն մեր հաւատքը կ'օգնէ մեզի ճիշդ գնահատելու այն արժէքները, որոնց կը հանդիպինք մեզ հրապուրող ու զուարճալի ժամանակներու մէջ:

Իմ տիրոջս (Դաւիթի) հոգին կեանքի ծրարին մէջ ծրարուած պիտի ըլլայ, Տէրոջ՝ քու Աստուծոյդ մօտ: [Ա. Թագ. 25. 29]

ԱՍՏՈՒԾՈՅ ԿԱՏԱՐԵԱԼ ՀՈԳԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ

Տէյվիտ Վէթթըր (*David Vetter*) մեռաւ տասն երկու տարեկանին՝ իր ամբողջ կեանքը պղպջակի մը մէջ ապրելէ ետք: Մականուած «Պղպջակ Տղան» (*The Buble Boy*), Տէյվիտ ծնած էր ծանր համակցուած ախտամերժութեան անբաւարութեան հիւանդութիւնով (*SCID*): Անոր ծնողները կորսնցուցած էին իրենց առաջին որդին՝ նո՛յն հիւանդութեան պատճառով եւ վճռական էին պաշտպանելու իրենց երկրորդ երեխան: Անոր կեանքը երկարաձգելու նպատակով, ՆԱՍԱ-ի (*NASA*) գիտնականները պատրաստեցին մասնաւոր ձեւերնկալ պաշտպանիչ պղպջակ մը, ինչպէս նաեւ տիեզերային զգեստ, որպէսզի անոր ծնողները կարենան Տէյվիտին գրկել՝ արտաքին աշխարհին մէջ: Ո՛հ, որքա՛ն մենք կը սիրենք պաշտպանել անոնց, որոնք կը սիրենք:

Դաւիթ Թագաւոր՝ անիրաւութիւն կրեց Նաբաղի՝ Աբիգեայի անմիտ ամուսինէն: Ան պատեհ առիթ մը գտնելով, ուզեց վրէժխնդրութիւն ընել իր ձեռքերով: Աբիգեա շտապեց՝ Դաւիթը դիմաւորելու իմաստուն յիշեցումով մը. «Մարդ մը ոտքի ելած է՝ քեզ հալածելու եւ հոգիդ փնտռելու համար. բայց իմ տիրոջս հոգին կեանքի ծրարին մէջ ծրարուած պիտի ըլլայ, Տէրոջ՝ քու Աստուծոյդ քով» (Ա. Թագ. 25. 29): «Ծրարի» այս հասկացողութիւնը կը փոխանցէ արժէքաւոր իրեր հաւաքելու գաղափարը, որպէսզի սեփականատէրը կարենայ պաշտպանիչ կերպով զանոնք պահէ: Աբիգեա յիշեցուց Դաւիթին, որ Աստուած կ'ուզէր զինք կրել պաշտպանիչ ծրարով մը: Ան աւելի ապահով էր Աստուծոյ ձեռքերուն մէջ, եւ ո՛չ թէ իր ձեռքերուն: «Ասիկա գայթուժի քար մը չըլլայ քեզի, ո՛չ ալ խիղճի խայթ մը՝ իմ տիրոջս, որ առանց պատճառի արին թափէ, կամ թէ իմ տէրս իր վրէժը ի՛նք առնէ» (Հմ. 31):

Լաւ է որ երբեմն կ'ուզենք պաշտպանել ուրիշները, բայց միայն Աստուծոյ կատարեալ խնամքով է, որ անոնք իսկապէս ապահով կ'ըլլան:

Աղօթք - Հա՛յր, կը խնդրե՛մ, օգնէ որ իմ սիրելիներս Զեզի վստահիմ, գիտնալով որ Դո՛ն կրնաս անոնց աւելի լաւ հոգատար ըլլալ՝ քան ե՛ս: Ամէն:

Կը փորձուիք մեր սիրելիները դնել մեր շինած պաշտպանութեան պղպջակներուն մէջ, սակայն յիշե՛նք թէ Աստուծոյ տուած հոգատարութիւնը կատարեալ է:

Եթէ զայն (իմաստութիւնը) արծաթի պէս փնտռես, ... այն ատեն Տէրոջ վախը պիտի հասկնաս եւ Աստուծոյ գիտութիւնը պիտի գտնես: [Առ. 2. 4-5]

ԱՐԺԱՆԱՊԱՏԻ ԵՐԿԻՒՂ

Ճէրէմին (Jeremy) կը գրէ. «Ես շատ բան գիտեմ մեռնելու վախի մասին: Եօթը տարիներ առաջ ... զգացի սաստիկ, հիւանդագին, գլխապտոյտ տուող եւ ճնշող վախ, երբ ինձի ըսուեցաւ, որ անբուժելի քաղցկեղ ունիմ»: Բայց ան սորվեցաւ տնօրինել իր վախը՝ հենելով Աստուծոյ ներկայութեան վրայ եւ մահուան երկիւղէն անցնելով՝ Անոր հանդէպ ակնածալից երկիւղ ընդունելու: Ճերեմիին համար այս կը նշանակէ՝ ակնածանք ունենալ տիեզերքի Արարիչին հանդէպ, Ա՛ն որ «մահը ընդմիշտ կ'անհետացնէ» (Ես. 25. 8), միաժամանակ խորապէս հասկնալով, որ Աստուած կը ճանչնայ ու կը սիրէ զինք:

Տէրոջ երկիւղը՝ - խոր յարգանք եւ ակնածանք մեր սուրբ Աստուծոյ հանդէպ - նիւթ մըն է, որ կը տարածուի ամբողջ Աստուածաշունչին մէջ: Սողոմոն թագաւոր յորդորեց իր որդիին՝ երկիւղ ունենալու՝ Աստուծոյ հանդէպ, իր իմաստուն առակներուն շարքին: Ան ըսաւ, եթէ իր որդիին «ականջը իմաստութեան ուշադիր ըլլայ» եւ «պահուած գանձերու պէս խնդրէ», ապա ան «Տէրոջ վախը պիտի հասկնայ եւ Աստուծոյ գիտութիւնը պիտի գտնէ» (Առ. 2. 2, 4-5): Իմաստութեան եւ գիտելիքի հետ մէկտեղ՝ ան կը գտնէ խոհեմութիւն եւ հանճար (Հմ. 10-11):

Երբ մենք դիմազրաւենք տարբեր տեսակի մարտահրաւէրներ եւ զգանք սարսափի եւ երկիւղի զգացում, անոնց մեզի կը յիշեցնեն մեր սահմանափակումներուն մասին: Բայց երբ մենք կը դիմենք Աստուծոյ խնդրելով իրմէ, որ օգնէ մեզի՝ խոնարհելու իր առջեւ եւ ակնածանքով երկրպագելու իրեն, մենք կը տեսնենք, որ Ան կ'օգնէ մեզի երկիւղի մէջ ըլլալէն դէպի իր հանդէպ առողջ երկիւղ ունենալու:

Աղօթք - Արարիչ Հայր, Դո՛ւն ստեղծեցիր երկինքն ու երկիրը, բայց Դո՛ւն գիտես եւ կը սիրես զիս: Կը խնդրե՛մ, օգնէ ինձի որ ծառայեմ ու յարգեմ Թեզ՝ իմ կեանքիս բոլոր օրերուն մէջ: Ամէն:

Որքա՞ն կարելոր է քեզի համար «Տէրոջ երկիւղը»: Ինչպե՞ս կարելի է խոնարհիլ իր առջեւ այսօր:



Անոնք անօթները իրեն կը մօտեցնէին, եւ ինք կը լեցնէր:
[Դ. Թագ. 4. 5]

ՕՐՅՆՈՒԱԾ՝ ՕՐՅՆՈՒԹԻՒՆ ԸԼԼԱԼՈՒ ՅԱՄԱՐ

Որպէս լրագրող աշխատելու տարիներուն՝ ես մեծ հաճոյքով կը պատմէի ուրիշներու պատմութիւնները, բայց սորված է՝ չտա՛լ իմ կարծիքս: Ուստի՝ տարիներ ետք, երբ զգացի՝ որ Աստուած զիս կանչեց՝ իմ լրագրողի աշխատանքէս, երբ ես աւելի ու աւելի կը զգայի, որ Աստուած կ'առաջնորդէր զիս գրելու յօդուած մը ու խօսելու իր մասին, ես քիչ մը անհանգիստ զգացի՝ իմ խորհուրդներս բաժնեկցելու, յատկապէս հաւատքիս մասին: Երբ սկսայ յօդուածը գրել, կը վախնայի, որ ըսելիքներս կը սպառին: Բայց շաբաթ առ շաբաթ՝ ես գտայ խրախուսական խօսքեր եւ գաղափարներ՝ բաժնեկցելու համար: Որքա՛ն շատ գրեմ, այնքա՛ն աւելի մտքեր կը հոսի: Տակաւին հիմա ալ նոյնն է:

Կեանքիս մէջ ականատես եղած եմ, թէ ինչպէ՞ս Աստուած լեցուցած է զիս՝ աւելի շատ ուրախութեամբ եւ ոգեշնչուամով, երբ տրամադրած եմ իմ տաղանդներս ու պարգեւներս՝ ծառայելու ուրիշներուն:

Բ. Թագաւորացին մէջ՝ մե՛նք կը կարդանք աղքատ այրիի մը մասին, որ զնաց Նղիսէ մարգարէին մօտ՝ օգնութիւն խնդրելու համար: Անոր մահացած ամուսինին պարտատէրը՝ ուզեց խլել անոր երկու որդիները: Իր տան մէջ միակ ունեցածը, փոքր սրուակ մը ձիթաիւղ էր: Մարգարէն իրեն պատուիրեց, պարապ անօթներ հաւաքել դրացիներէն եւ շարունակել իւր լեցնել անոնց մէջ: «Անոնք անօթները իրեն կը մօտեցնէին, եւ ինք կը լեցնէր» (4. 5): Ան կը շարունակէր լեցնել, մինչեւ բոլոր անօթները հրաշքով լեցուին: Ան կրնար վճարել իր ընտանիքի պարտքերը՝ աւելորդ իւրով:

Աստուած հաւատարիմ է եւ միշտ կը հայթայթէ մեր կարիքները: Ան օրհնած է մեզ պարգեւներով, տաղանդներով եւ կարելիութիւններով՝ օրհնութիւն ըլլալու ուրիշներուն: Եկէ՛ք չպահենք կամ անտեսենք մեր պարգեւները, այլ օգտագործենք զանոնք՝ իր փառքին համար:

Աղօթք - Սիրելի Աստուած, շնորհակալ եմ, որ օրհնեցիր զի՛ս եւ ուրիշներու համար օրհնութիւն դարձուցիր: Ամեն:

Աստուած մեզի տուած է շնորհներ ու տաղանդներ. օգտագործե՛նք զանոնք՝ ուրիշներու ծառայելու համար:

Իմաստութիւնն ու գիտութիւնը քու օրերուդ ապահովութիւնը պիտի ըլլան, եւ փրկութեանդ զօրութիւնը: [Ես. 33. 6]

ԱՍՏՈՒԱԾ՝ ՄԵՐ ԱՊԱՅՈՎՈՒԹԻՒՆԸ

Քայքայուած խոհանոցով եւ աւերուած գետինով՝ մեր տունը վերանորոգութեան կարիքը ունէր: Տան մեծ մասը քանդելէ ետք, շինարարները սկսան նոր հիմեր փորել: Յետոյ ամէն բան հետաքրքիր դարձաւ:

Երբ շինարարները կը փորէին, հողին մէջ գտանք բահերով լեցուն ջարդուած պնակներ, 1850-ական թուականներու կազային գովացուցիչի շիշեր, նոյնիսկ պատառաքաղներ: Մենք հին աղբանոցի՞ մը վրայ կառուցուած էինք: Ով գիտէ. բայց մեր երկրաչափը ըսաւ, որ մեր տան հիմերը աւելի խոր փորելու է, այլապէս՝ մեր նոր շինելիք պատերը կրնան ճեղքուիլ:

Լաւ հիմերը՝ ամուր ու հաստատ տուներ կը ստեղծեն: Նոյնը կը վերաբերի մեր կեանքին: Երբ Իսրայէլացիները ցնցուեցան իրենց թշնամիներէն, Եսայի աղօթեց, որ անոնք ամուր մնան (Ես. 33. 2-4): Բայց անոնց ուժը պիտի չբխի քաջութենէն կամ զէնքէն, այլ իրենց կեանքը Աստուծոյ վրայ կառուցանելէ: Մարգարէն ըսաւ անոնց. «Իմաստութիւնն ու գիտութիւնը քու օրերուդ ապահովութիւնը պիտի ըլլան, եւ փրկութեանդ զօրութիւնը» (Հմ. 6): Յիսուս ալ նման բան մը ըսաւ ուսուցանելով, որ անոնք, որոնք իրենց կեանքը կը կառուցանեն Իր իմաստութեան վրայ, կը դիմանան կեանքի փոթորիկներուն (Մատթ. 7. 24-25):

Յստակ նշան է, որ մեր հիմերը խնամքի կարիք ունին, երբ ճեղքեր կը յայտնուին մեր կեանքերուն մէջ՝ ինչպիսին են նախայարձակում, մոլութիւն կամ ամուսնական խնդիրներ: Երբ մենք ապահովութիւն կը փնտռենք այնտեղ, ուր հնարաւոր չէ գտնել զայն կամ միայնակ կը հետեւինք այս դարաշրջանի իմաստութեան, մենք կը յայտնուինք անհաստատ ու երերուն հողի վրայ: Բայց անոնք, որոնք իրենց կեանքը կը կառուցեն Աստուծոյ վրայ, հասանելի կ'ըլլան Անոր ամբողջ զօրութեան եւ գանձերուն (Ես. 33. 6):

Աղօթք - Յայր Աստուած, կը գովարանե՛մ Զեզ, որ իմ կեանքիս՝ ամենէն ապահով ու հաստատուն հիմն ես: Ամէն:

Սեր կեանքի ո՞ր ճեղքերը պիտի բացայայտեն մեր անհաստատ հիմերը: Ինչպէ՞ս կը թուի ըլլալ մեր հիմերը՝ այս օրերուն:

Ե՛ս եմ Տէրը՝ որ զանոնք կը սրբացնեմ: [ՂԵ. 22. 9]

ՍՐԲԱՆԱԼ

Արուեստի թանգարանի մէջ համաշխարհային մակարդակի խեցեգործական գանթակներ դիտելէ յետոյ, հրաւիրուեցայ ստեղծելու իմ սեփական «աման» սօղով չորցած կաւով: Երկու ժամեր տրամադրեցի՝ փոքրի՛կ ամանը ձեւաւորելու, նախշեր փորագրելով եւ ներկելով: Բոլոր քրտնաջան աշխատանքիս արդիւնքը ճնշիչ էր. փոքրիկ, անհաւասար գոյներով՝ անհարթ աման մը: Անիկա երբէ՛ք պիտի չգրուեր թանգարանը:

Բարձր չափանիշներով ապրելը՝ կրնայ սրտաբեկիչ ըլլալ: Իսրայէլացի քահանաներ զայն զգացին, երբ անոնք կը փորձէին հետեւիլ Աստուծոյ տուած պատուիրաններուն՝ ըլլալու ծիսականօրէն մաքուր (Ղուկ. 22. 1-8), ինչպէս նաեւ զոհաբերութիւններու վերաբերեալ լրացուցիչ հրահագններուն (Հմ. 10-33): Քահանային աշխատանքը սուրբ ըլլալու էր, առանձնացուած, բայց հակառակ անոնց լաւագոյն ջանքերուն, անոնք յաճախ կը թերանային իրենց գործերուն մէջ: Ահա՛ թէ ինչո՛ւ՝ Աստուած ի վերջոյ, իր ուսերուն զբաւ անոնց արդարութեան պատասխանատուութիւնը: Ան ըսաւ Մովսէսի՝ բազմաթիւ անգամներ. «Ե՛ս եմ Տէրը՝ որ զանոնք (քահանաներուն) կը սրբացնեմ» (22. 9, 16, 32):

Յիսուս մեր կատարեալ Քահանայապետն է եւ միայն Ի՛նք մատուցանեց մաքուր, ընդունելի զոհաբերութիւնը մեզքի համար՝ խաչին վրայ Իր մահով: Ան աղօթեց. «Անոնց համար ես զիս կը սրբացնեմ, որպէսզի իրենք ալ սրբացած ըլլան ճշմարտութեամբ» (Յովհ. 17. 19): Երբ մեզի թուի՝ թէ ճիշդ ապրելու մեր փորձերը պարզապէս արուեստ սիրող ամաններ են եւ ո՛չ արուեստագէտներու գլուխ գործոցներ, մենք կրնանք հանգստանալ կատարեալ գործի մէջ, որը Յիսուս արդէն կատարած է եւ ապաւինիլ Սուրբ Հոգիին զօրութեան, Իրեն համար ապրելու:

Աղօթք - Տէր, այնքա՛ն երախտապարտ եմ, որ իմ արդարութիւնս՝ Ըո՛ւ մէջդ է: Շնորհակա՛լ եմ զի՛ս սրբացնելուդ համար: Ամէն:
Երբ անկեղծօրէն քննենք մեր կեանքերը, պիտի տեսնենք սրբութեան պակասը, որ մեզ կը նեղացնէ: Սակայն Փառք Աստուծոյ, որ Տէր Յիսուս կը սրբացնէ մեզ:

Թո՛ղլ տուեք այդ մանուկներուն՝ որ ինձի՛ գան: [Ղուկ. 18. 16]

Ի՞նչ ՊԻՏԻ ՅԱՐՑՆԵՍ ՅԻՍՈՒՍԻ

Ճօ (Joe) հարցուց իր երեխաներուն նախաճաշի ատեն: «Եթե՞ Յիսուս՝ այս առաւօտ ֆիզիքապէս սեղան նստած ըլլար մեզի հետ, ի՞նչ պիտի ուզէիք հարցնել իրեն»: Իր տղաները մտածեցին իրենց ամենադժուար հարցումներուն մասին: Անոնք որոշեցին՝ որ կը ցանկան հարցնել Յիսուսի՝ թուաբանական ամենադժուար խնդիրները եւ խնդրել, որ Ան ըսէ, թէ իրականութեան մէջ որքա՛ն մեծ է տիեզերքը: Ապա՝ իր աղջիկը ըսաւ. «Ես պիտի խնդրէի զի՛նք գրկել»:

Չէ՞ք կրնար պատկերացնել՝ այս երեխաներուն հանդէպ Յիսուսի աչքերուն մէջի սէրը: Կը կարծեմ թէ Ա՛ն ուրախ պիտի ըլլար կատարելու անոնց խնդրանքները. այնպէ՛ս չէ՞: Ես կը պատկերացնեմ, որ Ան կը կատակէ տղոց հետ եւ կը բանայ իր ձեռքերը փոքրիկ աղջկան առջեւ: Յատկապէս պիտի սիրէ ձօի աղջկան՝ գրկախառնուելու ցանկութիւնը, որը՝ կարծես ցոյց կու տայ՝ իր հանդէպ սիրով լեցուն սիրտ մը եւ փափաք մը իր սիրոյն:

Երեխաները ունին իրենց ուրիշներէ կախուած ըլլալու զգացումը. եւ անոնք գիտեն, որ Յիսուս հզօր է եւ սիրող: Ան ըսաւ. «Ո՛վ որ Աստուծոյ թագաւորութիւնը չընդունի մանուկի մը պէս, բնաւ պիտի չմտնէ անոր մէջ» (Ղուկ. 18. 17): Քրիստոս կը փափաքի, որ մենք գիտակցինք իր շնորհքին, ներումին եւ փրկութեան մեր կարիքը: Ան կը սիրէ խոնարհ ու հեզ սիրտեր, որոնք կը ցանկան ըլլալ իր մօտ:

Կա՛յ ինչ որ բան, որ կը ցանկայիր հարցնել Յիսուսի: Մենք, անշուշտ, ունեցած ենք մեր բոլոր հարցերը: Կամ գուցէ դո՛ւն պարզապէս կը ցանկանաս՝ իր մօտ ըլլալ: Գնա՛ Անոր մօտ հիմա՝ այդ գրկախառնութեան եւ այնքան աւելիին, որ քեզի պէտք է:

Աղօթք - Երկնաւոր Յայր, երախտապարտ եմ, որ Զու գաւակդ եմ եւ զի՛ս Զեզի կը մօտեցնես: Ամէն:

Եթէ առաջին անգամ տեսնես Յիսուսի, ի՞նչ կ'ուզես հարցնել իրեն: Ի՞նչ կը նշանակէ քեզի համար մանուկներու նման հաւատք ունենալ:

Տես՛ք թե Դայրը ինչպիսի՛ սէր շնորհեց մեզի, որպէսզի Աստուծոյ զաւակներ կոչուինք: [Ա. Յովհ. 3. 1]

ՄԵՐ ԶՕՐԸ ՍԷՐԸ

Գիմ (Kim) տեղաւորուեցաւ պատուհանին մօտ, պայուսակը լեցուցած՝ պատրաստ էր եւ անհամբեր կը սպասէր հօր ժամանումին: Բայց այդ պայծառ օրը՝ միջնեց եւ եղաւ գիշեր, անոր ոգեւորութիւնը մարեցաւ: Ան հասկեցաւ, որ հայրը պիտի չգար՝ դարձեալ, ինչպէս եղած էր անցեալին:

Գիմի ծնողները ամուսնալուծուած էին, եւ ան կը ցանկար ժամանակ անցընել իր հօրը հետ: Առաջին անգամը չէ՛ր, որ ան մտածեց ըսելով. «Ես իսկապէ՛ս նշանակութիւն չունիմ իրեն համար: Երեւի թէ՛ չի սիրեր զիս»:

Ինչպէս յետագային իմացաւ Գիմ եւ մենք բոլորս՝ որ կ'ընդունինք Յիսուս, որպէս մեր Փրկիչը, գիտենք թէ՛եւ մեր երկրային ծնողները եւ ուրիշներ՝ յուսախաբ կ'ընեն մեզ: Սակայն՝ մենք ունինք Երկնաւոր Հայր մը, որ կը սիրէ մեզ եւ բնաւ յուսախաբ չընեն:

Յովհաննէս՝ Սուրբ Գիրքի երեք ներշնչուած նամակներու, իր անունը կրող Աւետարանի եւ Յայտնութեան գիրքի հեղինակը, կը հասկնայ Աստուծոյ սիրոյն խորութիւնը: Իրականութեան մէջ՝ ան ինքզինք կը ներկայացնէ, որպէս այն «աշակերտը՝ որ Յիսուս կը սիրէր» (Յովհ. 21. 20) մէկը, որու կեանքը փոխուած էր իր հանդէպ Յիսուսի ունեցած սիրով: Ան գրեց. «Տեսէ՛ք թէ Հայրը ինչպիսի՛ սէր շնորհեց մեզի, որպէսզի Աստուծոյ զաւակներ կոչուինք: Հիմա մենք Աստուծոյ զաւակներն ենք» (Ա. Յովհ. 3. 1-2):

Աստուած՝ մեզ այնքա՛ն կը սիրէ, որ տուաւ Իր Որդին՝ Յիսուսը, ան՝ որ իր կեանքը զոհեց մեզի համար (Հմ. 16, Յովհ. 3. 16): Ան մեզի համար հասանելի է՝ աղօթքի միջոցով եւ կը խոստանայ ըսելով. «Բնա՛ւ պիտի չթողում քեզ, ո՛չ ալ պիտի լքեմ քեզ» (Ես. 13. 5): Մենք կրնանք ապահով ըլլալ Իր սիրով:

Աղօթք - Երկնաւոր Դայր, շնորհակալ եմ Զեզի՝ այն մեծ սիրոյն համար, որ շռայլօրէն կը պարգեւես ինծի: Դանգի՛ստ կը զգամ՝ Զու խոստումիդ մէջ, որ Դուն՝ երբէ՛ք չես լքեր զիս: Ամէն:
Մարդիկ մեզի յուսախաբ կ'ընեն, սակայն կայ՛ մէկը, որ երբէ՛ք յուսախաբ չըներ: Ուստի՛՝ այս խորհուրդը թող միսիթարէ մեզ:



Երանի՛ սգաւորներուն, որովհետեւ անո՛նք պիտի մխիթարուին: [Մատթ. 5. 4]

ՔՐԻՍՏՈՍԻ ՏԵՍՈՂԱԿԱՆ ՏԱՐԱԿԵՐՊՈՒԹԻՒՆԸ

Ամէն ժամանակներու՝ հոգեւոր երգերու մեծ հեղինակներէն մէկը՝ Այզաք Ուաթց (Isaac Watts), գրեց «Երբ Այն Խաչին Ես կը Նայիմ» հրաշալի երգը: Երգին բառերը գրելու ատեն, ան օգտագործեց տարակերպութեան բանաստեղծական կառոյցը, ցոյց տալով՝ նիւթերուն հակադրութիւնը. «Իմ մեծ շահերս վնաս կը սեպեմ» եւ «Հպարտութիւնս ալ կ'անարգեմ»: Մենք երբեմն կ'անուանենք ասոնք, հակադրութիւններ՝ «բառեր գործածել գիրար հակասող»: Օրինակի համար. «Ահաւոր լաւ» եւ «խոշոր թզուկ»: Ուաթցի բառերուն պարագային, այս կառոյցը շատ աւելի խորն է:

Յիսուս յաճախ գործածեց հակադրութիւններ: Ան ըսաւ. «Երանի հոգիով աղքատներուն» (Մատթ. 5. 3), առաջարկելով, որ անոնք, որոնք յոյս չունին՝, պիտի ստանան աւելին, քան ա՛յն՝ ինչ որ կը յուսան ունենայ: Երբ դո՛ւն կամ ես կը սգանք սիրելիի մը կորուստին համար եւ տխուր ենք, Յիսուս կ'ըսէ, որ մենք «պիտի մխիթարուինք» (Հմ. 4): Քրիստոս ցոյց կու տայ, թէ ինչպէ՞ս Աստուծոյ արքայութեան մէջ չեն գործեր կեանքի ընդհանուր կանոնները:

Այս հակադրութիւնները մեզի կ'ըսեն, որ կեանքը Քրիստոսի մէջ չի համապատասխաներ բոլոր ակնկալութիւններուն. մե՛նք, որ ո՛չ մէկն ենք, կը սիրուինք որպէս մէ՛կը: Խաչին վրան էր՝ որ Յիսուս կրեց տեսողական հակադրութիւնը՝ փուշէ պսակը: Այզաք Ուաթց վեր առաւ ծաղրանքի այս խորհրդանիշը եւ հակադրութեան ձեւով՝ անոր տուաւ ճախրող գեղեցկութիւն մը. «Մէք, տրտմութիւն մէկ կը վազեն. Ե՞րբ միացան ասոնք ասանկ»: Այս խօսքերով կը սարսուա՛նք, բայց կը յիշե՛նք երգին վերջին տողը. «Ասանկ Տէրոջ անհուն սիրոյն, արժան է տալ իմ կեանքս ողջոյն»:

Աղօթք - Սիրելի Աստուած, շնորհակալ եմ Ձու գոհաբերութեանդ համար խաչին վրայ, որ զի՛ս ըրիր մէկը՝ Ձու թագաւորութեանդ մէջ: Ամէն: **Երանելիներուն՝ ո՛ր յայտարարութեան հետ ամենէն աւելի կը նո՛յնանաս: Ինչպէ՞ս կապուած է այ՛դ՝ քու կեանքիդ փորձառութեան հետ:**

Թեպետ Տերը բարձր է, սակայն նուաստը կը տեսնէ ու խրոխտը հեռուն կը ճանչնայ: [Սաղմ. 138. 6]

ԽՈՆԱՐՅ ՈՒ ՅԵԶ՝ ԲԱՅՑ ԱՍՏՈՒԾՄԷ ՍԻՐՈՒԿԾ

Օր մը՝ եկեղեցի այցելող ընտանիքի մը ողջունեցի: Ծուռնկի եկայ անոնց փոքր աղջկան անլասայլին մօտ, ծանօթացուցի իրեն իմ շունն՝ Գալին (Callie) եւ մեծարեցի իր գեղեցիկ վարդագոյն ակնոցներն ու կօշիկները: Թէեւ ան բառեր չգործածեց, սակայն իր ժպիտը ինձի ըսաւ, որ իրեն հաճելի թուացած է իմ գրոյցս: Ուրիշ աղջիկ մը մօտեցաւ՝ խոլսափելով իմ նոր ընկերոջս հետ աչքի շփումէն: Ան փսփսաց. «Ըսէ՛ իրեն, որ կը սիրեմ իր զգեստը»: Ես ըսի. «Դուն ըսէ՛: Ան ազնիւ է՝ քեզի պէս»: Բացատրեցի, թէ որքա՛ն դիւրին էր խօսիլ մեր նոր ընկերուհիին հետ, հակառակ անոր՝ որ ան կը հաղորդակցի տարբեր ձեւով եւ թէ ինչպէ՛ս նային ու ժպտիլը, կրնայ օգնել իրեն զգալու, որ ընդունուած եւ սիրուած է:

Սուրբ Գիրքին եւ այս աշխարհին մէջ՝ մարդիկ յաճախ կը բացառուին, որովհետեւ անոնք կ'ընդունուին որպէ՛ս տարբեր: Սակայն, մեր մեծ Աստուածը՝ կը նչ մեր տարբերութիւնները եւ կը հրաւիրէ մեզ յարաբերութիւններ հաստատելու՝ Իր եւ Իր ընտանիքին հետ: Սաղմոս 138-ին մէջ՝ Դաւիթ կ'ըսէ. «Քեզմէ շնորհակալ պիտի ըլլամ իմ ամբողջ սիրտովս, Աստուածներուն առջեւ քեզի սաղմոս պիտի երգեմ» (Հմ. 1): Ան կ'ըսէ. «Թէպէտ Տէրը բարձր է, սակայն նուաստը կը տեսնէ» ու տակաւին՝ Ան «խրոխտը հեռուն կը ճանչնայ» (Հ. 6):

Աստուած բարութեամբ կը նայի մեզի՝ Իր ստեղծած արարածներուն, յատկապէս երբ կը խոնարհինք: Երբ կը խնդրե՛նք Իրմէ, որ օգնէ մեզի բարիացակամ նայելու եւ բարիացակամ վարուելու ուրիշներու հետ, մենք կրնանք շնորհակալութիւն յայտնել իրեն՝ հաստատելուն համար, որ մենք խոնարհ եւ սիրուած ենք:

Աղօթք - Սիրելի Աստուած, կը խնդրեմ՝ օգնէ՛ ինձի ողջունելու բոլոր մարդոց նոյն առատ բարութեամբ եւ անվերապահ սիրով, որ Դո՛ւն ցոյց կու տաս ինձի ամէն օր: Ամէն:
Եթէ յիշենք թէ խոնարհ ըլլալու ենք՝ բաղդատած Աստուծոյ, այդ կը փոխէ մեր վերաբերմունքը՝ ուրիշներու հանդէպ: Որպէս հաւատացեալներ, պատրա՛ստ ըլլալու ենք սեր ցուցաբերելու մեր շուրջ եղող հաշմանդամներուն:

Ուղքերս ընդարձակ տեղ մը կայնեցուցիր: [Մաղմ. 31. 8]

ԱՍՏՈՒԾՈՅ ԸՆԴԱՐՁԱԿ ՏԵՂԸ

Երբ աստուածաբան Թատ Պիլլինկզ (Todd Billings) ստացաւ արեան անբուժելի քաղցկեղի ախտորոշումը, նկարագրեց իր մօտալուտ մահը, նմանցնելով զա՛յն՝ հեռաւոր տուներու լոյսերուն, որոնք կ'անջատուին կամ կը պլպլան: «Որպէս մէկ եւ երեք տարեկան երեխաներու հայր, միտումը ունեցա՛յ՝ յաջորդ քանի մը տասնամեակներուն մասին մտածելու, որպէս բաց տարածութիւն՝ ենթագրելով, որ կը տեսնէի Նէթին (Neti) եւ Նաթանյէլը (Nathaniel) աճող եւ հասուն: ... Բայց ախտորոշուելով ... կայ տեղի ունեցող նեղացում մը»:

Խորհելով այս սահմանափակումներուն մասին, Պիլլինկզ անդրադարձաւ Մաղմոս 31-ին, թէ ինչպէ՛ս Աստուած Դաւիթին դրաւ՝ «ընդարձակ տեղ մը» (Հմ. 8): Թէեւ Դաւիթ խօսեցաւ իր թշնամիներէն տանջուած ըլլալու մասին, սակայն ան գիտէր՝ որ Աստուած իր ապաստանն ու ապահովութեան տեղն է (Հմ. 2): Այս երգին միջոցով՝ Մաղմոսերգուն բարձրաձայնեց իր վստահութիւնը Աստոծոյ հանդէպ. «Իմ ժամանակներս քու ձեռքդ են» (Հմ. 15):

Պիլլինկզ կը հետեւի Դաւիթի օրինակին՝ իր յոյսը գնելով Աստուծոյ վրայ, թէեւ այս աստուածաբանը, ամուսինը եւ հայրը կը զիմազրաւէ կեանքի նեղութիւն, համաձայն է, որ կ'ապրի ընդարձակ տեղ մը: Ինչո՞ւ: Որովհետեւ Քրիստոսի գոհաբերութեան միջոցով Աստուծոյ յաղթանակը մահուան նկատմամբ՝ կը նշանակէ, որ կը բնակինք Քրիստոսի մէջ՝ «երեւակայելի ամենէն ընդարձակ տեղը»: Ինչպէս՝ ա՛ն կը բացատրէ, «ի՞նչ բան կրնայ աւելի ընդարձակ եւ լայնատարած ըլլալ, քան Սուրբ Հոգիով Անոր կեանքին մասնակցիլը»:

Մենք նոյնպէս կրնանք ողբալ, բայց կրնանք նաեւ ապաստան գտնել Աստուծոյ մօտ՝ խնդրելով որ Ան առաջնորդէ եւ ուղղէ մեզ (Հմ. 1, 3): Դաւիթի հետ՝ մենք կրնանք հաստատել, որ կ'ապրինք ընդարձակ վայրի մը մէջ

Աղօթք - Յայր, Դուս թոյլ տուիր, որ Զու Որդիդ մեռնի՝ զի՛ս ազատելու համար: Շնորհակալ եմ՝ ընդարձակ տեղի պարգեւին համար: Ամէն: Ի՛նչ կը նշանակէ ապրիլ ընդարձակ տեղ մը: Որո՞նք են քանի մը հաստատ ուղիները, որոնցմով կրնաս յոյսդ դնել՝ Աստուծոյ վրայ այսօր:

Յիսուս ըսաւ. «Բուն անո՛նք են՝ որ կը վկայեն իմ մասիս»: [Յովի. 5. 39]

ՄԵՐ ԱԶՔԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼ՝ ՅԻՍՈՒՍԻ ՎՐԱՅ

Ճունի (June) աչքերը ուղղուած էին իր կողքին գտնուող մոխրագոյն ինքնաշարժին: Մայրուղիէն դուրս գալու համար, ան ստիպուած էր փոխել իր գիծը. բայց ամէն անգամ, երբ կը փորձէր անցնիլ իր առջեւ եղող ինքնաշարժին, միւս վարորդը կարծես կ'արագացնէր ինքնաշարժը: Վերջապէս՝ ան յաջողեցաւ առաջ անցնիլ եւ ինքնագո՛հ իր արձանագրած յաղթանակէն, ժպտաց: Բայց շուտով նկատեց որ ան անցած էր իր մայրուղիէն դուրս գալու ելքը: Նման սայթաքում կրնայ տեղի ունենալ նաեւ Աստուծոյ ճամբաներուն մէջ քալելու մեր ցանկութեան պարագային: Երբ կրօնական առաջնորդները կը հալածէին Յիսուսի՝ Հրէական օրէնքը չի պահելուն համար (Յովհ. 5. 16), Ան նախագգուչացուց, որ անոնք այնքա՛ն կը կեդրոնան օրէնքը ուսումնասնիրելու եւ կիրարկելու վրայ, որ չէին նկատէր այն մարդը, որու մասին օրէնքը կը մատնանչէր. «Բուն անո՛նք են, որ կը վկայեն իմ մասին. Դու չէք ուզեր ինծի գալ՝ որ կեանք ունենաք» (Հմ. 39-40):

Փորձելով՝ ճիշդ ըլլալ Աստուծոյ առջեւ՝ կրօնական առաջնորդները կեդրոնացան Հրէական օրէնքին հետեւելու վրայ եւ վստահ ըլլալու՝ որ ուրիշներ նոյնպէս հետեւին: Նմանապէս, Աստուծոյ հանդէպ մեր ունեցած եռանդով, մենք կրնանք հետեւիլ լաւ բաներու՝ ինչպէս՝ եկեղեցի յաճախել, Ատուածաշունչը սերտել, բարեգործութիւն ընել եւ նոյնիսկ հրաւիրել ուրիշներ՝ միանալու մեզի: Բայց մենք կրնանք այնքա՛ն կեդրոնանալ անոնց վրայ, որ չտեսնենք այն մարդը՝ Յիսուս, որու համար կ'ընենք այդ բոլոր բաները:

Մեր ամէն ըրածներուն մէջ, եկէ՛ք խնդրենք Աստուծմէ, որ օգնէ մեզի՝ ուղղելու մեր հայեացքը՝ Քրիստոսի վրայ (Եբ. 12. 2): Ան է՝ միայն «Ճամբան, ճշմարտութիւնը եւ կեանքը» (Յովհ. 14. 6):

Աղօթք - Տէր, Աստուած, շնորհակալ եմ՝ որ ինծի կու տաս կեանք՝ Քրիստոսի միջոցով: Կը խնդրե՛մ, օգնե՛ ինծի պահելու գիւք՝ որպէս իմ ամեն բանիս կեդրոնը: Ամէն:
Ի՞նչ բանի վրայ կեդրոնացած ես այսօր: Ի՞նչ կը նշանակէ քեզի համար՝ աչքերդ հաստատել Յիսուսի վրայ:

Հողը մշակող մարդ չկար [Ծն. 2. 5]

ՄՇԱԿՈՒԱԾ ԿԵԱՆՔ ՄԸ՝ ՅԻՍՈՒՍՈՎ

Երբ կառուցանեցինք մեր տունը, կանգնած էր միայն ցեխոտ, դատարկ հողոտարածքի մը վրայ՝ խճաքարով ճամբու մը վերջաւորութեան: Մեզի՝ խոտ, ծառեր եւ թուփեր պէտք էին, որպէսզի համապատասխանէ Օրիկոնի (Oregon) լեռներու ստորոտներուն: Երբ դուրս հանեցի՝ մարգագետինի գործիքներս եւ սկսայ աշխատիլ, մտածեցի մարդոց սպասող՝ առաջին այգիին մասին. «Դաշտի որեւէ տունկ դեռ երկրի վրայ եղած չէր, եւ դաշտի որեւէ բոյս դեռ բուսած չէր, ... տակաւին հողը մշակող մարդ չկար» (Ծն. 2. 5):

Ծննդոց 1-ին մէջ նշուած ստեղծագործութեան պատմութիւնը՝ կը կրկնէ Աստուծոյ գնահատականը՝ արարչագործութեան վերաբերեալ. «Բարի էին» կամ «շատ բարի էին» (Հմ. 4, 10, 12, 18, 21, 25, 31): Սակայն՝ ամբողջական չէ՛ր: Ադամ եւ Եւա՝ պէ՛տք էր մշակէին հողը՝ մատակարարելու Աստուծոյ ստեղծածը (Հմ. 28): Անոնք նախատեսուած չէին ապրելու անփոփոխ դրախտի մը մէջ, այլ ա՛յն դրախտին մէջ՝ որ խնամքի եւ զարգացումի պէտք ունէր:

Սկիզբէն ի վեր՝ Աստուած մարդոց կը հրաւիրէ իր արարչագործութեան մէջ՝ իր հետ համագործակցելու: Ան ա՛յդ մէկը ըրաւ՝ Եգեմի պարտէզին մէջ եւ նո՛յնը կ'ընէ՝ իր «նոր ստեղծագործութեան» մէջ, որ կը ստեղծէ մեզմէ՝ երբ մենք մեր հաւատքը կը դնենք Քրիստոսի վրայ (Բ. Կորնթ. 5. 17): Փրկութենէն ետք՝ կատարեալ չե՛նք դառնար: Ինչպէ՛ս Պօղոս առաքեալ կ'ըսէ. «Մի՛ համակերպիք այս աշխարհին» (Հռոմ. 12. 2): Աստուած կը գործէ մեր մէջ, երբ մենք կը հետապնդենք՝ զինք հաճեցնող կեանք մը ապրիլ, «կերպարանակից ըլլալու իր որդիին պատկերին» (8. 29):

Անկա՛խ անկէ, թէ ըլլայ՝ հոգ տանելու երկրին, կամ թէ հոգ տանելու Քրիստոսոսով նոր կեանք ունենալու, Աստուած տուած է մեզի պարգեւ մը, որը մենք պէտք է մշակենք:

Աղօթք - Հայր, շնորհակալ եմ, որ զիս հրաւիրեցիր մասնակցելու այն աշխատանքին, որ Դո՛ւն կ'ընես աշխարհի եւ իմ մէջս: Ամէն: Ո՞ր աշխատանքը ամենէն աւելի հաճելի է քեզի համար: Ի՞նչ բան մշակելու համար՝ արդեօք Աստուած քեզ կը կանչէ:

Մարդը արտաքին երեւոյթին կը նայի, բայց Տէրը սիրտին կը նայի: [Ա. Թագ. 16. 7]

Ո՛Չ ԱՆՏԵՂԻ ԱՍՏՈՒԾՈՅ ԱԶՔԵՐՈՒՄ

Տ ութաօլի Ազգային Լիկայի Նախապատրաստական Խաղերու ժամանակ, արհեստավարժ Ֆութբոլի խումբերը կ'ընտրեն՝ նոր խաղացողներ: Մարզիչները հազարաւոր ժամեր կը տրամադրեն՝ գնահատելով ապագայի խաղացողներուն հմտութիւնները եւ ֆիզիքական կարողութիւնը: 2022-ին Պրօք Փարտին (Brock Purdy)՝ վերջինն էր՝ 262-րդը, որ ընտրուեցաւ եւ պիտակուեցաւ «Պր. Անտեղին», որ վերջին տեղը ընտրուած Ֆութբոլ խաղացողին տրուած ծաղրանունն էր: Ո՛չ մէկը կ'ակնկալէր, որ առաջիկայ մրցաշրջանին՝ ան որեւէ խաղի մէջ կը խաղայ: Ընդամէնը՝ քանի մը ամիսներ անցած, սակայն, Փարտի իր խումբին համար արձանագրեց՝ երկու կարեւոր յաղթանակներ: Իրականութիւնը ա՛յն էր, որ խումբի ղեկավարները՝ միշտ չէ՛, որ արդիւնաւոր աշխատանք կը կատարեն՝ բացայայտելով մէկու մը ունեցած ներուժը: Եւ ո՛չ ալ մենք:

Հին Կտակարանի ծանօթ պատմութեան մը մէջ, Աստուած դրկեց Սամուէլ մարգարէն, որպէսզի ընտրէ Իսրայէլի յաջորդ թագաւորը՝ Հեսաէի որդիներէն: Երբ Սամուէլ նայեցաւ տղաներուն, ան հիացաւ անոնց ֆիզիքական տեսքով: Բայց Աստուած ըսաւ անոր. «Անոր երեւոյթին եւ հասակի բարձրութեան մի՛ նայիր» (Ա. Թագ. 16. 7): Փոխարէնը, Ան առաջնորդեց զի՛նք, որ ընտրէ՝ ո՛չ թէ ամենատարեցը կամ ամենաբարձրահասակը, այլ ամենաերիտասարդը եւ ընէ ամենէն անտեղի ընտրութիւնը՝ Դաւիթը, որ պիտի ըլլար Իսրայէլի մեծագոյն երկրային թագաւորը:

Ինչո՞ւ յաճախ շիտակ չենք գնահատեր մարդիկ: Մեր հատուածը կ'ըսէ.~ որ «մարդիկ արտաքին երեւոյթին կը նային, բայց Տէրը սիրտին կը նայի» (Հմ. 7): Երբ կ'ընտրենք մէկը աշխատանքի, կամ կ'ուզենք կամաւորներու խումբի մը միանալ, խնդրենք Աստուծոմէ, որ մեզի տա՛յ իմաստութիւնը շիտակ ընտրութիւնը ընելու:

Աղօթք - Յայր, կը խնդրեմ՝ տո՛ւր ինձի խորաթափանցութիւն՝ տեսնելու ուրիշները՝ այնպէս, ինչպէս Դո՛ւն կը տեսնես: Ամէն: Ե՛րբ զգացած ես դուն քեզի «անտեղի»: Ինչպէ՞ս կարելի է տեսնել մարդիկ՝ Աստուծոյ տեսանկիւնէն:

Ունեցէ՛ք այն մտածումը՝ որ Քրիստոս Յիսուսի մէջ է: [Փիլ. 2. 5]

ՀՈԳԱՏԱՐՈՒԹԻՒՆ ՔՐԻՍՏՈՍՈՎ

Տիկ. Շարլին (*Charlene*)՝ ընկերոջս՝ Տուէյնի (*Dwayne*) մայրը, ինիստուն չորս տարեկան էր, հասակը՝ հազիւ հինգ ոտնաչափ եւ կը կշռէր՝ քառասուն հինգ քիլոյոյն պակաս: Սակայն՝ այս չխանգարեց զինք՝ ընելու ա՛յն, ինչ որ կրնար ընել, որպէսզի հոգ տանի իր որդիին, որու Ֆիզիքական առողջութիւնը կը խանգարէր անոր՝ ինքզինքին հոգ տանելու: Անոր երկյարկանի տան այցելուները յաճախ զինք կը գտնէին երկրորդ յարկին վրայ, ուր ան կը բնակէր: Դանդաղօրէն, ան տասն վեց աստիճաններով կ'իջնէր առաջին յարկ՝ ողջունելու իր հիւրերը, ճի՛շդ այնպէս՝ ինչպէս կ'ըներ հոգ տանելու իր սիրած որդիին:

Տիկ. Շարլինի՝ անշահախնդիր վճռակամութիւնը՝ համոզմունքները, մարտահրաւէր կու տայ եւ կը ոգեշնչէ զիս, քանի որ առաջնահերթ կը սեպէ իր որդիին բարեկեցութիւնը, քան թէ իրը: Ան կ'իրագործէ Պօղոսի ըրած խրատասանքը՝ Փիլիպպեցիս 2-ին մէջ. «Ո՛չ մէկ բան ըրէք հակառակութեամբ կամ սնամհառութեամբ. հապա՛ խոնարհութեամբ ուրիշը ձեզմէ գերազա՛նց համարեցէք: Իւրաքանչիւրը թող նկատի չառնէ իր շահը, այլ նաեւ ուրիշներո՛ւնը» (Հմ. 3-4):

Առողջական խնդիրներ կամ այլ կարիքներ ունեցողներու, համար հոգալը՝ կրնայ սուղ արժել: Կեանքի պահանջները՝ կրնան սպառիչ ըլլալ եւ նոյնիսկ մեզի ամենամօտիկ եղողները՝ կրնան կարճատեւ ըլլալ, եթէ միտումնաւոր չենք մեր աչքերը մենք մեզմէ հեռացնելու: Բայց խոնարհաբար հոգատարութիւն ընելը՝ այն է, ինչի համար կոչուած են Յիսուսի հաւատացողները (տե՛ս Հմ. 1-4): Երբ մենք մեր անձէն տանք, մենք կը հետեւինք Յիսուսի օրինակին եւ կ'օգնենք ուրիշներու՝ այդ գործընթացին մէջ: Առաքեալը կը յիշեցնէ մեզի. «Ունեցէ՛ք այն մտածումը՝ որ Քրիստոս Յիսուսի մէջ է» (Հմ. 5):

Աղօթք - Սիրելի Յիսուս, կը խնդրեմ՝ օգնէ՛ ինձի՝ աւելի միտումնաւոր ըլլալ ուրիշներու բարօրութեան համար ու իմ անձս նուիրելու ուրիշներու բարիքին համար: Ամէն:
Ո՞վ կը ներշնչէ քեզ՝ աւելի հոգատար եւ անշահախնդիր ըլլալու: Ի՞նչ խոչընդոտներ ունիս, որ չի կարենաս հոգալ ուրիշներու կարիքները:

Եկալ խաղաղութիւն ակտեց ձեզի՝ որ հեռաւոր էիք, ու անոնց՝ որ մերձաւոր էիս: [Եփ. 2. 17]

ՅԻՍՈՒՄ՝ ՄԵՐ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆԸ

Ճօան (Joan) հառաչեց, երբ տեսաւ Սուզանի (Susan) գրառումը՝ ընկերային համացանցին վրայ: Լուսանկարը՝ ցոյց կու տար տասը եկեղեցական ընկերներ, որոնք կը ժպտէին նստած՝ ճաշարանի սեղանի մը շուրջ: Երկրորդ անգամ՝ անոնք հիանալի ժամանակ կ'անցընէին, առանց իրեն: Միշտ չէր՝ որ ան լաւ բարեկամութիւն ունեցած էր միւսներուն հետ, բայց տակաւին նոյն խումբին կը պատկանէր: Որքա՛ն տարօրինակ է եկեղեցի յաճախել՝ ա՛յն մարդոց հետ, որոնք չեն ներառեր զինք:

Որքա՛ն տարօրինակ է առաջին դարը: Բայց Յիսուս կը ցանկայ՝ միասնութիւն եւ եկաւ բուժելու մեր բաժանումը: Եկեղեցիին ծնունդէն ի վեր, մարդիկ՝ որոնք իրարու հետ համերաշխ չէին, պէտք էր գտնէին հասարակ լեզու մը՝ իր մէջ: Հրեաները կ'արհամարհէին հեթանոսներուն՝ օրէնքը չպահելու համար, իսկ հեթանոսները կ'ըսէին Հրեաներուն, որ կը կարծէին՝ թէ իրենք աւելի լաւ են: Ապա Յիսուս «երկուքը՝ մէկ ըրաւ», Ան «քակեց մէջտեղի անջատող պատը, իր մարմինին մէջ ոչնչացնելով իրարու միջեւ եղած թշնամութիւնը, այսինքն՝ հրամաններով եղած պատուիրաններուն Օրէնքը» (Եփ. 2. 14-15): Օրէնքին պահպանումը այլեւս նշանակութիւն չունի: Կարեւորը Յիսուսն էր: Արդեօ՞ք Հրեան եւ հեթանոսը՝ կրնան միաւորուիլ իր մէջ:

Այդ՝ կախեալ էր անոնց տուած պատասխանէն: Յիսուս «խաղաղութիւն քարոզեց» հեթանոսներուն «որ հեռաւոր էին, ու անոնց՝ որ մերձաւոր էին» (Հմ. 17): Նոյն պատգամը, տարբեր գործադրութիւն: Ինքնարդար Հրեաները պէտք էր խոստովանէին, որ իրենք աւելի լաւը չեն, մինչ անարգուած հեթանոսները՝ պէ՛տք էր հաւատային, որ աւելի վատը չեն: Երկուքն ալ պէտք է դադրէին անհանգստանալէ՝ միւսին համար եւ կեդրոնանային Քրիստոսի վրայ, որ իրմով այդ երկուքէն կը ստեղծէր «նոր մարդ մը՝ այսպէս խաղաղութիւն ընելով» (Հմ. 15):

Անարգուած կը զգա՞ս: Կրնաս ըլլալ խաղաղարար մը, երբ կը հանգստանա՞ս Տէր Յիսուսի մէջ:

Աղօթք - Դա՛յր, երբ զիս նուաստացնեն, կը հանգչի՛մ՝ Զու Որիիդ մէջ: Ամէն: Ե՞րբ անտեսուած զգացած ես: Ինչպէ՛ս կրնաս խաղաղարար մը ըլլալ:

Յիսուս ըսաւ. «Եկէ՛ք իմ ետեւես, ու մարդո՛ց որսորդ ընեմ ձեզ: [Մատթ. 4. 19]

ԶԿՆՈՐՍՈՒԹԻՒՆ՝ ԲԱՐԵԿԱՄՆԵՐՈՒ ԶԱՄԱՐ

Փէթթի (*Patty*)՝ կէսօրէ ետքը անցուց գետի ափին, օգտագործելով իր ձկնորսական ձողը՝ ձուկ որսալու համար: Վերջերս՝ տեղափոխուելով այդ տարածքը՝ ան յոյս չունէր ձուկ բռնելու. ան կը փնտռէր քանի մը նոր ընկերներ: Անոր կարթը՝ որդի խայծ չունէր կամ որեւէ այլ աւանդական որսի կեր: Փոխարէնը, ան օգտագործեց իր ձկնորսութեան ձողը՝ բլիթի ծրարներ երկարելով՝ անոնց, որոնք ամառուան տաք օրերուն՝ լաստանաւերով կը ծփային գետի ջուրին վրայ: Ան օգտագործեց այս ստեղծագործական միջոցը՝ իր նոր դրացիներուն հետ հանդիպելու համար, որոնք կարծես բոլորն ալ կը վայելէին իր տուած քաղցր ուտելիքները:

Փէթթին գնաց «ընկերներուն համար՝ ձկնորսութեան» շատ աւելի բառացի ձեւով, քան ինչ որ Յիսուս կը նախատեսէր, երբ Ան հրաւիրեց Պետրոսին եւ Անդրիասին՝ իր հետ քալելու՝ կեանքի ընթացքին: Երկու եղբայրները՝ աշխատասէր ձկնորսներ էին, որոնք իրենց ուսուցանները կը նետէին Գալիլիայի ծովուն վրայ: Յիսուս ընդհատեց անոնց աշխատանքը կոչ ընելով հետեւելու իրեն ըսելով, որ Ան պիտի ուղարկէ զիրենք «մարդոց որսորդ ըլլալու» համար՝ ձուկերու փոխարէն (*Մատթ. 4. 19*): Ան՝ նոյն հրաւէրը տուաւ՝ երկու այլ ձկնորսներու՝ Յակոբոսի եւ Յովհաննէսի, անկէ անմիջապէս յետոյ: Անոնք՝ բոլորն ալ շուտով՝ ձգեցին իրենց ուսուցանները եւ նաւակները՝ Յիսուսի հետ ճամբորդելու համար:

Ինչպէ՛ս ձկնորսները, որոնք դարձան իր առաջին աշակերտները, Քրիստոս կը հրաւիրէ մեզ հետեւելու իրեն եւ կեդրոնացնելու մեր ուշադրութիւնը յաւիտենական բաներու վրայ. անոնց հոգեւոր կեանքերը, որոնց հետ մենք կը շփուինք: Մենք կրնանք մեզ շրջապատողներուն առաջարկել՝ այն, ինչ որ իսկապէ՛ս կը բաւարարէ. Յիսուսի հետ կեանքի յարատեւ յոյսը (*Յովհ. 4. 13-14*):

Աղօթք - Յիսուս, կը խնդրե՛մ՝ օգնէ ինձի դառնալ մարդոց որսորդ, որպէսզի ուրիշներ աւելի լաւ ճանչնան Թե՛զ: Ամէն:

Ո՞վ առաջին անգամ քեզի պատմեց Յիսուսի մասին: Ինչպէ՛ս կրնաս ուրիշներուն առաջարկել՝ այն յոյսը, որ Ան կու տայ:

Արդարեւ Տէրը՝ Եհովան սա՛ կը յայտարարէ. «Ահա՛ ե՛ս ինքս պիտի որոնեմ ու քննեմ իմ ոչխարներս: [Եզ. 34. 11]

ԱՍՏՈՒԱԾ՝ ՄԵՐ ԵՏԵԻՆ ԿՐ ՎԱԶԷ

Տարիներ շարունակ՝ Էվան (*Evan*) պայքարեցաւ մոլուկեան մը հետ, որ կը խանգարէր զինք՝ Աստուծոյ մօտենալու: Ան մտածեց. «Ինչպէ՞ս կրնամ արժանի ըլլալ իր սիրոյն»: Մինչ ան կը շարունակէր յաճախել եկեղեցի, կը զգա՛ր, որ կա՛յ անյաղթահարելի անդունդ մը, որ զինք հեռու կը պահէր Աստուծմէ:

Տակաւին, ամէն անգամ՝ երբ Էվան ջերմեռանդ կ'աղօթէր՝ որեւէ բանի համար. Աստուած՝ կարծես կը պատասխանէր իրեն: Աստուած նաեւ մարդիկ զրկեց, քաջալերելու եւ մխիթարելու զինք, իր դժուար պահերուն մէջ: Քանի մը տարիներ ետք՝ Էվան հասկցաւ, որ Աստուած անընդհատ կը հետապնդէր զինք եւ ցոյց կու տար, որ միշտ սիրած եւ հոգացած է իրեն, եւ այդ ժամանակ էր, երբ ան սկսած էր վստահիլ Աստուծոյ սիրոյն եւ ներողամտութեան: Ան ըսաւ. «Հիմա՛ գիտեմ, որ ներուած եմ եւ կրնամ թոյլ տալ, որ Աստուած մօտեցնէ զիս՝ իրեն, հակառակ անոր՝ որ ե՛ս տակաւին կը պայքարիմ իմ մոլուկեանս դէմ»:

Եզեկիել 34. 11-16-ը մեզի կը պատմէ Աստուծոյ մը մասին, որ կը հետապնդէր իր ժողովուրդը: Աստուած ըսաւ. «Ահա՛ ե՛ս ինքս պիտի որոնեմ ու քննեմ իմ ոչխարներս», երգում ընելով փրկել զիրենք եւ առատօրէն ապահովելու իրենց կարիքները (Հմ. 11): Ա՛յս խոստումը, այն բանէն ետք էր, երբ իրենց մարդկային առաջնորդները լքեցին զիրենք եւ անոնք չի հնազանդեցան իրենց ճշմարիտ հովիւին (Հմ. 1-6): Անկախ անկէ՝ թէ մենք իրավիճակներու անօգնական զոհերն ենք, կամ կը պայքարինք մեր մեղքերուն հետեւանքներուն դէմ, Աստուած մեզ կը հետապնդէ իր սիրով: Իր ողորմութեամբ եւ շնորհքով՝ Ան մեզի ե՛տ կը քաջէ՛ դէպի իրեն: Եթէ՛ մոռցած ես Աստուծոյ, դարձի՛ր իրեն: Ապա, մինչ Ան կ'առաջնորդէ, շարունակէ քալել իր հետ ամէն օր:

Աղօթք - Տէր, շնորհակալ եմ Զեզի, որ միշտ կը սիրես զի՛ս, հակառակ իմ կասկածներուս եւ պայքարներուս: Կը խնդրե՛մ, սորվեցուր ինձի՝ դարձեալ վստահելու Զեզի: Ամէն:

Աստուած ցոյց կու տայ մեզի, որ Ան հոգ կը տանի մեզի ու կը սիրէ մեզ: Ուստի՝ թոյլ տանք, որ Ան մեզ աւելի մօտեցնէ իրեն:

Ձեր ճամբաները՝ իմ ճամբաներս չեն,- կը պատգամէ Տերը:
[Ես. 55. 8]

ՄԵՐ ԵՒ ԱՍՏՈՒԾՈՅ ԾՐԱԳԻՐՆԵՐԸ

Շատ տարիներ առաջ՝ ամուսինս որոշեց՝ իր եկեղեցիի խումբ մը մարդոց հետ ճամբորդել Ափրիկէ: Վերջին պահուն խումբին արգիլուեցաւ ճամբորդել: Բոլորը յուսախաբ եղան, բայց այն գումարը, որ հաւաքած էին, օգնաւի տոմսերուն, կացարանին եւ ուտելիքի համար, նուիրեցին այն մարդոց, որոնց փորձած էին այցելել: Մարդիկ՝ գործածեցին այդ նուէրը՝ շէնք մը կառուցանելու համար, որ կրնար ապաստան տալ բռնաբարութեան զոհերուն:

Վերջերս, աղօթքի նախաճաշի մը ժամանակ, ամուսինս հանդիպեցաւ մէկու մը, որ կը բնակէր այն գիւղին մէջ, ուր ամուսինս ծրագրած էր երթալ՝ տարիներ առաջ: Այս անձը՝ ուսուցիչ էր, ու ան ըսաւ թէ ամէն օր այդ շէնքին մօտէն կ'անցնէր: Ան հաստատեց, որ Աստուած զայն օգտագործած էր՝ այդ շրջանին ամենէն աւելի խոցելի մարդոց պէտքերը հոգայու համար:

Մեր ծրագիրներն ու ցանկութիւնները՝ միշտ չէ՛, որ կը համընկնին Աստուծոյ մտքին: Որովհետեւ՝ Անոր մտածումները մեր մտածումները չեն (Ես. 55. 8): Աստուծոյ ճամբաները, ո՛չ թէ միայն տարբեր են՝ մերիններէն. այլ Անոր ճամբաները «աւելի բարձր» են եւ աւելի լաւ, որովհետեւ ի՛նչ որ Ան կ'ընէ, համապատասխան է՝ Իր ո՞վ ըլլալուն (հմ. 9): Այս ճշմարտութիւնը՝ մեզի յոյս կու տայ, երբ Իրեն ծառայելու մեր ջանքերը չեն ըլլար՝ այնպէս, ինչպէ՛ս մենք ծրագրած էինք:

Գուցէ՛ տարիներ անցնին, մինչեւ որ մենք կարենանք ետ նայիլ եւ տեսնել հետքերը Աստուծոյ թողուցած ազդեցութեան, որոշ իրավիճակներու մէջ: Առայժմ, սակայն, մինչ կը շարունակենք հասնիլ աշխարհին՝ Իր անունով, մենք կրնանք յիշել, որ Աստուած՝ միշտ հզօր է՝ Իր գործերուն մէջ (հմ. 11):

Աղօթք - Սիրելի Աստուած, Դո՛ւն ամէն բան գիտես: Երբ ես չեմ հասկնար, թէ ի՛նչ կը կատարուի, կը խնդրե՛մ՝ օգնե՛ ինձի, որ Զեզի վստահիմ: Ամէն:

Երբեմն կ'ունենանք յուսախաբութեան փորձառութիւնը, սակայն Աստուած կրնայ օգտագործել այս՝ Իր մասին բան սորվելու համար:

Տէրը իր երեսը պայծառացնէ՝ քու վրադ եւ ողորմի՛ քեզի:
[ԹՈՒ. 6. 25]

ԵՐԲԷ՛Ք ԱՆՏԵՍՈՒԱԾ՝ ԱՍՏՈՒԾՈՅ ԿՈՂՄԷ

«Երբեմն՝ ես պարզապէս այդպէս կը զգամ ... անտեսանելի»:
Այդ խօսքը կախուեցաւ օդին մէջ, երբ Ճօանին (Joanie) կը խօսէր ընկերուհիին հետ: Անոր ամուսինը ձգած էր զինք եւ ուրիշ կնոջ մը հարած՝ ձգելով Ճօանին՝ իր փոքր երեխաներուն հետ, որոնք տակաւին տունն էին: Ան ըսաւ. «Ես իրե՛ն տուած եմ՝ իմ լաւագոյն տարիներս: Եւ հիմա՝ չեմ գիտեր, թէ ինչ որ մէկը՝ իսկապէ՛ս կը տեսնէ զիս, կամ թէ՛ ժամանակ կը յատկացնէ զիս իրապէս ճանչնալու համար»:

«Ե՛ս շատ կը ցաւիմ». պատասխանեց ընկերուհին: «Հայրս՝ ձգեց մեր տունը, երբ ես վեց տարեկան էի եւ մեզի համար դժուար էր, յատկապէս մայրիկիս համար: Բայց ան ըսաւ սա՛ խօսքը, երբ ան զիս անկողին դրաւ գիշերը, որ ես երբէ՛ք չեմ մոռնար. 'Աստուած երբէ՛ք չի փակեր Իր աչքերը': Երբ չափահաս դարձայ, ան բացատրեց թէ կը փորձէր սորվեցնել ինծի՝ թէ Աստուած սիրեց զիս ու հսկեց իմ վրաս, նոյնիսկ երբ ես քնացայ»:

Աստուածաշունչը կը ներկայացնէ այն խօսքերը, որոնք Աստուած տուած է Մովսէսին, որպէսզի ան կիսուի իր ժողովուրդին հետ, այն դժուար ժամանակին, երբ անոնք կը թափառէին Սինայի անապատին մէջ. «Տէրը օրհնէ՛ քեզ ու պահէ՛ քեզ: Տէրը իր երեսը պայծառացնէ քու վրադ եւ ողորմի՛ քեզի: Տէրը իր երեսը վերցնէ՛ քու վրադ ու խաղաղութիւն տա՛յ քեզի» (ԹՈՒ. 6. 24-26): Օրհնութիւնը պէտք է հնչէր քահանաներու կողմէ՛ ժողովուրդին վրայ:

Նոյնիսկ կեանքի անապատներուն մէջ, ա՛յն տեղ, ուր մենք կը մտածենք, թէ արդեօ՞ք ոեւէ մէկը կը տեսնէ մեզ կամ իսկապէ՛ս կը հասկնայ, որ Աստուած հաւատարիմ է: Աստուծոյ բարեհաճութիւնը, Անոր փայլող դէմքը եւ յարատեւ սէրը, միշտ ալ ուղղուած է անոնց, որոնք կը սիրեն զԻնք, նոյնիսկ երբ մենք չենք կրնար զգալ զԻնք մեր ցաւին պատճառով: Ո՛չ ոք՝ անտեսանելի չէ Աստուծոյ համար:

Աղօթք - Յայր, շնորհակալ եմ՝ զի՛ս տեսնելուդ, ճանչնալուդ եւ սիրելուդ համար: Կը խնդրե՛մ, օգնէ ինծի, որ միշտ երեսս շրջեմ դէպի Թե՛զ: Ամէն:

Ինչպէ՞ս կը մխիթարէ մեզի գիտնալը, որ Աստուած իսկապէ՛ս կը տեսնէ մեզ: Որո՞ւ հետ կրնաք կիսել այս մխիթարութիւնը այսօր:



Սերը բնա՛ւ չ'իյնար: [Ա. Կորնթ. 13. 8]

ՍԻՐԵԼՈՒ ԽՈՍՏՈՒՄ ԱՍՈՒՍՆՈՒԹԵԱՆ

Մերետիզի (*Meredith*) ամուսնութեան ժամանակ՝ անոր մայրը կարգաց Ա. Կորնթացիսէն՝ գեղեցիկ հատուած մը: Տասներորդ գլուխը, որ յաճախ կը կոչուի Աստուածաշունչի «Սիրոյ Գլուխը», կատարեալ էր այդ առիթին համար: «Սէրը համբերատար է, քաղցր է. սէրը չի նախանձիր. սէրը չի գոռոզանար, չի հպարտանար» (Հմ. 4): Լսելով՝ մտածեցի՝ արդե՞ք ժամանակակից հարսերն ու փեսաները՝ գիտե՞ն, թէ ինչը դրդե՞ց առաքելին արձանագրելու այս յուզիչ խօսքերը: Պօղոս չի գրեց սիրային բանաստեղծութիւն մը: Առաքելը՝ խնդրանք ըրաւ բաժնուած եկեղեցիին՝ փորձելով բուժել անոր մոլեգնութիւն յառաջ բերող բաժանումները:

Պարզ խօսքերով ըսած, Կորնթոսի եկեղեցին «խառնաշփոթ էր», կ'ըսէ Աստուածաշունչի գիտնական Տակլըս Ա. Գէմբլը (*Douglas A. Campbel*): Բարդ խնդիրները՝ կը ներառէին, պղծութիւն, պոռնկութիւն եւ առաջնորդներու միջեւ՝ մրցակցութիւն: Անդամներու միջեւ՝ դատական հարցերը հազուադէպ չէին: Պաշտամունքը՝ յաճախ քառոսային էր. անոնք որոնք կը խօսէին տարբեր լեզուներով, կը մրցէին ըլլալու առաջինը՝ լսուելու համար, իսկ միւսները կը մարգարէանային՝ տպաւորիչ տեսք ունենալու համար (տես Ա. Կորնթ. 14):

Այս քառոսին հիմքը, կ'ըսէ Գէմբլը, «հիմնական ձախողութիւնն էր՝ իրարու հետ իրենց ունեցած սիրոյ յարաբերութիւններուն մէջ»: Յոյց տալու համար ամենագերագանց ճանապարհը, Պօղոս՝ սէր քարոզեց, քանի որ «սէրը բնա՛ւ չ'իյնար. բայց եթէ մարգարէութիւններ ըլլան՝ պիտի ոչնչանան, եթէ լեզուներ պիտի դադրին, եթէ գիտութիւն պիտի ոչնչանայ» (13. 8):

Պօղոսի սիրառատ յիշեցումները կրնան անշուշտ խրախուսել հարսանեկան խնճոյքները: Թող անոնք նաեւ ոգեշնչեն մեզ բոլորս՝ ապրելու սէր եւ բարութիւն:

Աղօթք - Տեր, սերդ երբէ՛ք չ'իյնար, ուստի կը խնդրեմ՝ առաջնորդէ զիս՝ բոլորին հետ սիրոյ գերագանցութեամբ յարաբերելու համար: Ամէն:

Սեր յարաբերութիւններուն մէջ՝ սեր եւ բարութիւն դրսևորելու եւք, որպէս Յիսուս Քրիստոսի մարմինը:

Մենք ունինք մեծ քահանայապետ մը ... ամեն բանի մէջ փորձուած է մեզի նման, սակայն առանց մեղքի: [Եբ. 4. 14-15]

ԿԱՏԱՐԵԼԱՊԷՍ՝ ԱՆԿԱՏԱՐ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԷՁ

Տան բարեկարգումի ծրագիրի՝ ներքին ձեւակերտողը, հիացած էր բաղնիքի նոր ցնցուղի պատերուն համար ըտրուած ձեռագործ խեցագործ սալիկներուն: Տարբեր՝ սովորական արտադրութեան պարզ սալիկներէն, որոնք բոլորն ալ նոյնանման են, այս ձեռագործ կտորները «անկատարելապէս՝ կատարեալ» էին: Անկատարութիւնները՝ իւրաքանչիւր սալիկի՝ եզակի գեղեցկութիւն կու տար, աւելցնելով՝ այլ գործնական հմայք ու ոճ:

Ես քիչ բան գիտեմ՝ ոճի կամ հմայքի մասին, առանց բան մը ըսելու՝ թէ ինչպէ՞ս կրնան սալիկները դրական կամ բացասական կերպով նպաստել անոր: Թէեւ այդ սալիկները անկատարելապէս՝ կատարեալ էին, Յիսուս՝ մարդեղութեամբ կատարելապէս կատարեալ էր: Եբրայեցիս նամակին հեղինակը հաստատեց. «Մենք չունինք քահանայապետ մը՝ որ անկարող ըլլայ կարեկցիլ մեր տկարութիւններուն, հապա ինք ամէն բանի մէջ փորձուած է մեզի նման, սակայն առանց մեղքի» (Եբ. 4. 15): Իր երկրային առաքելութեան ընթացքին՝ Յիսուս ո՛չ մէկ անգամ մեղսալի խօսք մը ըսաւ կամ մեղաւոր արարք մը գործեց: Ան Կատարելապէս՝ կատարեալ էր:

Մեզի համար քաջալերանքը, ինչպէ՛ս Եբրայեցիս նամակը կ'ըսէ, Յիսուսի մէջ «ամուր բռնենք մեր դաւանութիւնը» (հմ. 14) պատուէրին մէջն է, որովհետեւ Ան կը հասկնայ եւ կը կարեկցի այն պայքարին, որու մենք կը դիմանանք: Ան եղած է այնտեղ եւ մղած է զայն, բայց կատարելապէս: Մեր կատարելապէս՝ կատարեալ Փրկիչը՝ կրնայ օգնել մեզի ամէն բանի մէջ:

Աղօթք - Սիրող Դա՛յր, շնորհակալ եմ Յիսուսի մարմնաւոր փորձառութեան համար, որ Ան ապրեցա՛ւ, քալե՛ց եւ գործե՛ց մեր կտորած աշխարհին մէջ, բայց առանց մեղքի: Ամեն:

Մենք ունինք մեր անկատարելութիւնները, սակայն շնորհակալ ըլլալու ենք Տէր Յիսուսի՝ մեր Փրկիչին համար, որ ամեն բան ըրաւ՝ որպէս մեր կատարեալ քահանայապետը:

Ամեն ինչ որ կ'ուզեք՝ որ մարդիկ ընեն ձեզի, դո՛ւք ալ այնպես ըրեք անոնց: [Մատթ. 7. 12]

ԱՍՏՈՒԾՈՅ ՇՆՈՐՀՔԸ ՑՈՒԼՑՆԵԼ

Յուկաստանի հետ եռամեայ Ձմեռային Պատերազմին (1939-1940) մէջ՝ Ֆինլանտացի զինուոր մը՝ վիրաւոր պառկած էր դաշտն մէջ: Ռուս զինուոր մը մօտեցաւ անոր ուղղած հրաձանը: Ֆիննը՝ վստահ էր, որ իր կեանքը հասած էր իր վախճանին: Սակայն Ռուս զինուորը՝ տուաւ անոր բժշկական կազմած մը, ապա շարունակեց քալել: Յատկանշական է, որ Ֆինն՝ աւելի ուշ ինքզինք գտաւ նոյնանման իրավիճակի մը մէջ, միայն դերերը փոխուած էին: Ռուս զինուոր մը՝ անօգնական պառկած էր պատերազմի դաշտին մէջ: Ֆինն տուաւ անոր բժշկական միջերէ՛ք՝ եւ շարունակեց քալել:

Յիսուս մեզի տուաւ մեր կեանքի կեդրոնական՝ առաջնորդող սկզբունք մը. «Ամէն ինչ որ կ'ուզէք որ մարդիկ ընեն ձեզի, դուք ալ այնպէս ըրէք անոնց» (Մատթ. 7. 12): Կը պատկերացնէ՞ք, թէ որքա՛ն տարբեր կրնար ըլլալ մեր աշխարհը, եթէ հաւատացեալները պահպանէին այս պարզ սկզբունքը: Կրնանք արդեօ՞ք հաշուել թէ որքա՛ն ճնշում կը պակսի, եթէ մենք բոլորս հնազանդինք Յիսուսի տուած իմաստութեան: Եթէ միայն, մինչ Ան կ'առաջնորդէ, մենք տանք ուրիշներուն՝ նո՛յն կարեկցութիւնն ու ողորմութիւնը, որը մենք կը ցանկանայինք ստանալ: Երբ «լաւ նուէրներ կու տանք» ուրիշներուն, կ'արտացոլացնենք մեր «Երկնաւոր Հօր, որ կու տայ բարի նուէրներ անոնց», որոնց կը սիրէ (Հմ. 11):

Կարելոր է, որ մենք ուրիշներուն տեսնենք՝ ո՛չ որպէս միայն թշնամիներ կամ օտարներ կամ մարդիկ, որոնց հետ կը մրցինք՝ կարելիութիւններու կամ նիւթականի համար: Փոխարէնը, պէտք է տեսնենք անոնց ողորմութեան եւ բարութեան կարիքը՝ ճիշդ այնպէս, ինչպէ՛ս մենք անոնց կարիքը ունինք: Ապա, ինչպէ՛ս Աստուած կը հայթայթէ, մենք ալ կրնանք ազատօրէն անոնց առաջարկել այն սէրը, որ Ան անվճար առաջարկած է մեզի:

Աղօթք - Դա՛յր, կը խնդրեմ՝ օգնէ՛ ինձի արտացոլացնելու Քու ողորմութիւնդ ու սէրդ, իմ ուրիշներու հետ ունեցած վարմունքիս մէջ: Ամեն:

Կարելոր է ուրիշներու հետ վարուիլ, այնպէ՛ս՝ ինչպէս կը ցանկանք, որ ուրիշներ վարուին մեզի հետ:

Իր խօսքերուն մէջ փութաջան մարդ մը տեսա՞ր. ակելի յոյս կայ անմիտէն՝ քան իրմէ: [Առ. 29. 20]

ԻՄԱՍՏՈՒՆ ԶՍՊՈՒԱԾՈՒԹԻՒՆ՝ ԱՍՏՈՒԾՈՅ ՄԷՁ

Ամերիկայի քաղաքացիական պատերազմի առեւն (1863) Կէթիսպուրկի (Gettysburg) մէջ՝ Հարաւայիններու աղէտալի կորուստէն ետք, Հրամանատար՝ Ռապըրթ Ի. Լի (Robert E. Lee) իր ջարդուած զօրքերը ետ առաջնորդեց Հարաւային տարածք: Առատ անձրեւները՝ հեղեղած էին Փօթոմաք (Potomac) գետը, արգելափակելով իր նահանջը: Նախագահ Աբրահամ Լինքըն (Abraham Lincoln)՝ գիմեց Հրամանատար ձորճ Միտին (George Meade)՝ որ յարձակի: Բայց Միտին մարդերը յոգնած էին, Լինքըն մարդերուն նման: Ուստի՝ ան հանգիստ տուաւ իր զօրքին:

Լինքըն, վերցուց իր գրիչը՝ եւ գրեց նամակ մը, որու մէջ ան խոստովանեցաւ, որ «այնչա՛փ նեղուած է» Միտէն՝ Լինքըն վրայ չյարձակելուն համար: Նամակի պահարանին վրայ՝ Նախագահի ձեռագիրով գրուած էին հետեւեալ բառերը. «Հրամանատար Միտ: Երբէ՛ք զրկուած, կամ ստորագրուած»: Եւ իսկապէս՝ երբէ՛ք չէր:

Լինքընէն՝ շատ առաջ ուրիշ՝ մէկ մեծ առաջնորդ մը հասկցաւ մեր զգացմունքները զսպելու կարեւորութիւնը: Զայրոյթը, որքա՛ն ալ արդարացի ըլլայ, վտանգաւոր եւ հզօր ուժ մըն է: Սողոմոն թագաւոր հարցուց. «Իր խօսքերուն մէջ փութաջան մարդ մը տեսա՞ր. ակելի յոյս կայ անմիտէն՝ քան իրմէ» (Առ. 29. 20): Սողոմոն գիտէր, որ «իրաւունք կիրարկելով՝ թագաւորը կը կայունացնէ իր երկիրը» (Հմ. 4): Ան նաեւ հասկցաւ, որ «անմիտը իր միտքը բոլորովին կը յայտնէ, իսկ իմաստունը գայն յետագային կը պահէ» (Հմ. 11):

Եւ ի վերջոյ, այդ նամակը չուղարկելը՝ արգելեց Լինքընին՝ պաշտօնագութրկ ընելու իր գլխաւոր հրամանատարին, օգնեց յաղթել անհրաժեշտ պատերազմ մը եւ նպաստեց ազգին ապաքինումին: Լաւ կ'ըլլայ, եթէ սորվինք իմաստուն զսպուածութեան նման օրինակներէն:

Աղօթք - Յայր, զգացմունքներս՝ Թեզի կը յանձնե՛մ, որպէսզի՝ Թու Յոգիդ օգնէ ինձի որ խուսափիմ հապճեպով արագ խօսելէ: Ամէն:

Կարելոր է զգուշութեամբ հրաժարիլ մեր զայրոյթի զգացմունքներէն եւ ջանա՛լ ըլլալ զսպուած:

Ուստի՝ թօթափելով ստելը՝ ճշմարտութիւնը խօսեցէք իրարու հետ, որովհետեւ մենք իրարու անդամներ ենք: [Եփ. 4. 25]

Ո՛Չ ԿԵՂԾ ՎԱՐԿԱՆԻՇՆԵՐ

Փոխադրակարգ բաժնեկցող յաճախորդ մը պատմեց, որ դիմացած էր վարորդի մը, որ կ'ուտէր աշխարհի ամենէն գարշահոտ պտուղը, ուրիշ մէկ վարորդ մը՝ կը վիճէր ընկերուհիին հետ եւ ուրիշ մըն ալ կը փորձէր ստիպել իրեն՝ գումար դնել Փօնզի (Ponzi) կոչուած ծրագիրին մէջ: Իւրաքանչիւր պարագային սակայն, վատ վարկանիշ տալու փոխարէն՝ հինգ աստղ տուած է: Ան բացատրեց. «Անոնք՝ բոլորն ալ լաւ մարդեր կը թուէին ըլլալ: Ձե՛մ ուզեց, որ անոնք հեռացուին փոխադրական այս ծրագիրէն՝ իմ տուած վատ վարկանիշիս պատճառով»: Ան տուաւ կեղծ դիտողութիւն՝ պահելով ճշմարտութիւնը վարորդներէն եւ ուրիշներէն:

Տարբեր պատճառներով՝ մենք կրնանք թաքցնել ճշմարտութիւնը ուրիշներէն: Բայց Պօղոս առաքեալ քաջալերեց Եփեսոսի եկեղեցիի հաւատացեալներուն, որ սիրով խօսին ճշմարտութիւնը՝ իրարու, որպէս նոր արարածներ՝ Քրիստոսով: Այս վարմունքը կը պահանջէր «արդարութեան եւ սրբութեան» սովորութիւնները զարգացնել (Եփ. 4. 24) - իրեն համար առանցնացած կեանքեր, որոնք կ'արտացոլացնէին իր ճամբաները: Անոնք պէտք է փոխարինեն սուտ խօսիլը՝ իրարու ճշմարտութիւնը ըսելով, քանի որ սուտը կը բաժնէ ու կը խանգարէ, մինչ ճշմարտութիւնը՝ կը միաւորէ մեզ՝ որպէս հաւատացեալներ: Ան գրեց. «Ուստի՝ թօթափելով ստելը՝ ճշմարտութիւնը խօսեցէք իրարու հետ, որովհետեւ մենք իրարու անդամներ ենք» (Հմ. 25):

Յիսուս մեզի ուժկուտայ քաջութեամբ դժնելու ստախօսութեան եւ իրարու «կեղծ գնահատականներ» տալու, որոնք կը խաթարեն մեր միասնութիւնը հաւատացեալներուն հետ: Սիրով կեանք մը ապրիլը, մինչ Ան կ'ուղղէ մեզ, պիտի առաջնորդէ բաժնեկցելու մեր ճշմարտութեան՝ «բարի եւ կարեկից» արտայատութիւնները (Հմ. 32):

Աղօթք - Սիրելի Աստուած, կը խնդրեմ՝ օգնէ ինձի ըլլալու վաւերական իմ յարաբերութիւններուս մէջ, Զեգի եւ ուրիշներու հանդէպ եղած սիրով: Ամէն:

Կը փորձուիք ճշմարտութիւնը թաքցնելու՝ այլ հաւատացեալներէ, սակայն կարելոր է բաժնեկցիլ այն ինչ որ անկեղծ ու ճշմարիտ է:

Տերը տեսաւ Լիայի ատելի ըլլալը: [Ծն. 29. 31]

ԱՍՏՈՒԾՈՅ ՄԷՋ՝ ՄԵՐ ԳՏՆԵԼ

Որպէս երեխայ՝ երբ հարցնէին, «Ի՞նչ կ'ուզես ըլլալ, երբ մեծնաս»: Պէն (Ben) պիտի ըսէր. «Կ'ուզե՛մ Տէյվին (Dave) նմանիլ»: Պէնի երէց եղբայրը՝ մարզիկ, ընկերային եւ տիպար աշակերտ մըն էր: Պէն՝ պիտի ըսէր նաեւ. «Ես անշնորհք էի՝ որպէս մարզիկ, ամէկոտ եւ դժուարութիւն ունէի՝ սորվելու խնդիրներով: Մի՛շտ կը ցանկայի մօտիկ յարաբերութիւն ունենալ Տէյվի հետ, բայց ան չըրաւ: Ան զիս անուանեց «ձանձրալի»:

Պէն՝ իր կեանքին մեծ մասը անցուց ապարդիւն՝ երէց եղբօր սէրը հետապնդելով: Միայն՝ այն ատեն երբ Պէն դարձաւ Յիսուսի հետեւող, սորվեցաւ իր հանգիստը գտնել Փրկիչին սիրով:

Լիան՝ Յակոբի առաջին կինը, իր կեանքի մեծ մասը անցուց իր ամուսինին սիրոյն հետամուտ ըլլալով (Ծն. 29. 32-35): Յակոբ՝ սակայն՝ նուիրուած մնաց Ռաբէլին: Բայց Աստուած տեսաւ Լիայի ծանր վիճակը եւ հատուցում ըրաւ անոր կեանքին մէջ՝ մերժումի փոխարէն: Աստուած օրհնեց զինք՝ թոյլ տալով որ ծնանի, ինչ որ մեծ պատիւ էր իր մշակոյթին մէջ՝ այդ ժամանակ (Հմ. 31): Լիան՝ անտեսուած եւ չէր լսուած իր ամուսինին կողմէ, սիրո՞վ տեսանելի ու լսելի եղաւ Աստուծոյ (Հմ. 32-33): Ան ծնաւ զուստը մը եւ վեց որդի, որոնցմէ մէկը Յուդան էր՝ Յիսուսի նախահայրը: Ծնանելու ժամանակ ան ըսաւ. «Այս անգամ շնորհակալ պիտի ըլլամ Տէրովմէն» (Հմ. 35): Լիա՝ երկար կեանք մը ապրեցաւ՝ Քանանու երկրին մէջ եւ թաղուեցաւ պատուաւոր տեղ մը՝ Յակոբի ընտանիքին հետ (49. 39-32):

Երբ մենք մերժումի փորձառութիւնը ունենանք, եկէ՛ք մխիթարութիւն գտնենք՝ Լիայի պատմութեան մէջ: Մենք կրնանք հանգչիլ Աստուծոյ սիրոյն մէջ, որ կը լրացնէ մեր պակասը:

Աղօթք - Սիրելի Աստուած, շնորհակալութիւն՝ որ Զուստը կը բուժէ զիս՝ ամէն տեղ՝ ուր ես կը մերժուիմ: Ամէն:

Մարդիկ կրնան ցաւցնել՝ մերժելով մեզ, սակայն կարելի է Աստուծոյ վստահիլ եւ Իրեն մօտենալ՝ մեր ցաւով:

Հաւատա՛ Տէր Յիսուս Բրիստոսի, եւ պիտի փրկուիս: [Գործք 16. 31]

ՊԱՐՁ ԵՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ

Երբ կինս ու ես՝ երթանք հեծանիւ վարելու, կը սիրենք՝ գիտնալ, թէ քանի մղոն ճամբայ կտրած ենք: Ուստի, գացի՝ հեծանիւի խանութ մը՝ վազաչափ մը գնելու համար եւ տուն վերադարձայ՝ փոքր համակարգիչով մը: Պարզուեցաւ՝ որ համակարգիչին ծրագրումը՝ չափազանց բարդ է:

Վերադարձայ հեծանիւներու խանութը: Համակարգիչը ինծի վաճառողը անմիջապէ՛ս լուծեց հարցը: Այն ատեն՝ անդրադարձայ, որ այդքա՛ն ալ դժուար չէ՛ հասկնալ, որքան որ ես կը խորհէի:

Կեանքի մէջ, նոր բաներ ու գաղափարներ կրնան բարդ թուիլ մեզի: Օրինակի համար՝ մտածե՛նք փրկութեան մասին: Որոշ մարդիկ կրնան խորհիլ, որ Աստուծոյ զաւակ ըլլալը՝ բարդ է:

Սակայն՝ Աստուածաշունչը կը պարզաբանէ այս. «Հաւատա՛ Տէր Յիսուս Քրիստոսի, եւ պիտի փրկուիս» (Գործք 16. 31): Չկան՝ կանոններու երկար ցուցակ մը, որոնց պէտք է հետեւիլ: Առեղծուածներ չկան՝ լուծելու համար:

Ահա՛ պարզ ճշմարտութիւնը: Մենք՝ բոլորս մեղանչեցինք (Հռոմ. 2. 23): Յիսուս եկաւ աշխարհ՝ փրկելու մեզ մեր մեղքի պատիժէն՝ մահէն եւ Իրմէ՛ յաւիտեան բաժնուելէ (Մատթ. 1. 21, Ա. Պետ. 2. 24): Ան յարութիւն առաւ մեռելներէն (Հռոմ. 10. 9): Եւ մենք հոգեւոր մահէն կը փրկուինք՝ դէպի յաւիտենական կեանք՝ վստահելով այն ամէն բանին, ինչ որ Ան ըրաւ մեզի համար (Յովհ. 3. 16):

Մտածէ՛ թէ ի՞նչ կը նշանակէ քեզի համար՝ պարզապէս վստահիլ եւ հաւատալ Յիսուսի: Թո՛ղ ինք՝ քեզի տայ «կեանք ... ճոխ կեանք» (Յովհ. 10. 10):

Աղօթք - Սիրող Աստուած, կը գիտակցիմ՝ որ մեղաւոր եմ եւ կ'ընեմ բաներ, որոնք սխալ են Զու աչքերուդ համար: Նաեւ կը գիտակցիմ, որ Դուս ղրկեցիր Յիսուսը աշխարհ՝ խաչին վրայ մեռնելու՝ իմ մեղքերուս համար: Կը խնդրեմ, ներէ ինծի ու փրկե՛ գիս: Շնորհակալ եմ՝ Զու տուած փրկութեանդ համար: Ամէն:
Ի՛նչ կը նշանակէ քեզի համար փրկութիւն ստանալ՝ Յիսուսով:
Եթէ փրկուած ես՝ ի՛նչ տարբերութիւն ըրաւ՝ Իր հանդէպ ունեցած հաւատքդ՝ քու կեանքիդ մէջ:

Արդարեւ արդարը եօթը անգամ ալ իյնայ՝ պիտի կանգնի. բայց ամբարիշտները ձախողութեան մէջ պիտի գայթին: [Առ. 24. 16]

Ե՛Տ ՈՏՔԻ ԿԱՆԳՆԻԼ

Որպէս զեռահաս, հիացած էի ձեռային չմշկուածի մարզանքով: Սիրեցի՝ սառուցի վրայ արուեստի եւ մարզանքի միաձուլումը. արագ պտուտքներով, բարձր թռիչքներով եւ կատարեալ շարժուձեւերով: Շատ մասնագիտական չմշկումներու ելոյթներ դիտելէ ետք, վերջապէս՝ առիթը ունեցայ՝ սառուցի վրայ չմշկելու եւ խմբային դասընթացքներու մասնակցելու: Սորվելով ինչպէ՞ս չմշկել եւ կանգ առնել, մենք սորվեցանք նաեւ չմշկելու ամենակարեւոր հմտութիւններէն մի քանին, ինչպէ՞ս իյնալ եւ արագ վեր կանգնիլ: Յետագային՝ ես սորվեցայ շատ տարբեր տեսակի պտուտքներ եւ ցատկելներ՝ մասնաւոր դասերու ժամանակ, բայց՝ ես միշտ պէտք է ապաւինէի՝ այն հիմունքներուն, թէ ինչպէ՞ս ետ կանգնիլ՝ իյնալէ ետք:

Մենք պէ՛տք չունինք՝ մարզիկ ըլլալու, որպէսզի գիտնանք՝ թէ «իյնալը» կեանքի մէկ մասն է: Գուցէ՛ մենք կ'իյնանք, որովհետեւ մեզք գործեցինք, սայթաքեցանք՝ մեր սխալին կամ մեր վրայ ճնշող պարագաներուն պատճառով: Թերեւս՝ մենք ա՛յս կամ ա՛յն կերպով՝ ենթարկուինք սատանային յարձակումին: «Հալածուած ենք, բայց լքուած չենք. խորտակուած ենք, բայց կորսուած չենք» (Բ. Կորնթ. 4. 8-9): Անկախ պատճառներէն, մենք բոլորս ալ կ'իյնանք եւ կը ձախողինք կեանքի մէջ:

Բայց մենք կոչուած չենք ապրիլ պարտութեան, ամօթի կամ ամսոսանքի մէջ: Երբ թշնամին դարանակալ է՝ մօտ տեղ մը եւ կը փորձէ կործանել մեզ (Առ. 24. 15), մենք պէտք է յիշենք, որ Աստուած կը կռուի մեզի համար եւ կ'օգնէ մեզի՝ վե՛ր կանգնելու, «արդարը եօթը անգամ ալ իյնայ՝ պիտի կանգնի» (Հմ. 16):

Երբ մենք կ'իյնանք, եկէ՛ք շուտով դիմենք Աստուծոյ եւ մեր հայեացքը ուղղենք Անոր վրայ, որ մեզի ուժ կու տայ՝ վեր կանգնելու:

Աղօթք - Սիրելի Աստուած, շնորհակալութիւն, որ օգնեցիր ինծի վեր կանգնելու՝ իյնալէս ետք: Ամէն:

Ինչպէ՞ս կարելի է դիմագրաւել կեանքի մէջ իյնալը: Յիշենք՝ թէ Աստուած ներկայ է մեր մօտ՝ օգնելու, որ մենք ոտքի կանգնինք:

Ինչպես ես սիրեցի ձեզ, դո՛ւք ալ սիրեցեք զիրար: [Յովհ. 13. 34]

ՍԻՐՈՅ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆ՝ ՅԻՍՈՒՍՈՎ

Շուէտի մէջ՝ կայ մտապատկեր մը, որ յայտնի է որպէս տօսթատնինկ (*dostadning*): Բառացի կը նշանակէ «մահուան մաքրութիւն»: Գաղափարը այն է, թէ մինչ մենք կը սկսինք մեր տարիքը առնել, պէտք է դադրինք «իրեր» կուտակելէ եւ սկսինք պակսեցնել՝ այն ինչ որ հաւաքած ենք մեր կեանքի ընթացքին: «Շուէտական մահուան մաքրութիւնը»՝ իրականութեան մէջ սիրոյ նուէր է մեր երեխաներուն եւ ընկերներուն, քանի որ անիկա իրենց համար կը դիւրացնէ մեր ետին ձգած խառնակոյտներուն մէջէն անցնելու խնդիրը:

Որպէս Յիսուսի հաւատացողներ՝ որոշ տարիքի մէջ՝ մենք կը մտածենք ժառանգութեան մասին՝ այն, ինչ որ մեզմէ կը մնայ մեր զաւակներուն: Սա՛, յաճախ կը ձեւակերպուի դրամի, ժառանգի կամ բարեգործական նուիրատուութեան առումով. եւ ատոր համար շա՛տ բան կայ ըսելիք: Բայց կրնայ օգտակար ըլլալ Յիսուսի նայիլ՝ Իր աշակերտներուն հետ անցուցած վերջին ժամերուն մէջ՝ երբ Պետրոսի ըսաւ. «Ուր որ ես կ'երթամ՝ դուն հիմա չես կրնար հետեւիլ ինձի. բայց յետոյ պիտի հետեւիս ինձի» (Յովհ. 13. 36): Երկու համարներուն մէջ (հմ. 34-35), Ան չորս անգամ կը գործածէ սէր կամ սիրել բառը. Իր ժառանգութիւնը սէր է: Ան ըսաւ անոնց. «Ինչպէս ես սիրեցի ձեզ, դո՛ւք ալ սիրեցէք զիրար» (հմ. 34):

Գուցէ՛ լաւ կ'ըլլայ մեր կեանքին մէջ՝ քիչ մը «Շուէտական մահուան մաքրութիւն» ընել, վերցնելով խառնակոյտը ու մեր ետին ձգել՝ միայն ամենկարեւոր բաները: Բայց ա յդ իսկապէ՛ս իրերու կամ դրամի մասին չէ՛: Ամենակարեւոր ժառանգութիւնը, որ դուն կրնաս քու ետիդ ձգել, քու ունեցած սէրդ է՝ Յիսուսի հանդէպ: Երբ երեխաները եւ ընկերները՝ քեզ կը յիշեն՝ որպէս Յիսուսը սիրող մէկը, այդ ամենակարեւորն է:

Աղօթք - Յայր, շնորհակալ եմ Զու սիրոյդ եւ իմ կեանքիս մէջ Յիսուսի պարգեւին համար: Կը խնդրե՛մ, օգնե՛ ինձի՝ որ ցո՛յց տամ Զու սերդ՝ իմ շուրջիսներուս: Ամեն:

Ինչպէ՞ս ուրիշներ կը տեսնեն Յիսուսի հանդէպ քու ունեցած սիրոյդ դրսեւորումը: Ինչպէ՞ս կրնաս աւելի բաց կերպով կիսել այդ սերը:

Անկա ջուրի առուններուն քով տնկուած ծառի պէս պիտի ըլլայ:
[Սաղմ. 1. 3]

ՏՆԿՈՒԱԾ ԱՌՈՒԱԿԻՆ ՔՈՎ

Պիլլ (*Bill*)՝ տարեց՝ հանգստեան կոչուած մարդ մըն է, որ կ'ապրի մինակ եւ վերջերս ստիպուած եղած է հրաժարելու ինքնաշարժ վարելէ: Ան օգնութեան կարիքը ունի՝ իրեն պէտք եղած մթերքն ու դեղատոմսերը վերցնելու եւ Կիրակի օրերը եկեղեցի գալու համար: Պիլլ կ'ըսէ. «Բայց գիտես ի՞նչ, ես կը սիրեմ տունը անցուցած իմ օրերս: Կը վայելեմ՝ ամբողջ օրը արցանց՝ անվճար պաշտամունքի երաժշտութիւն եւ Սուրբ Գիրքի սերտողութիւն հեռուստացոյցով»: Պիլլ՝ իր օրերը կ'անցնէ Աստուածաշունչով, աղօթքով եւ փառաբանութեամբ:

Այն սովորութիւնները, որոնք մենք կը պահենք, կ'ազդեն այն տեղ՝ ուր դրուած են մեր սիրտերը: Սաղմոս 1-ը կը նկարագրէ մէկու մը սովորութիւնները, որ բարեհաճութիւն գտած է Աստուծմէ. ան հաճոյք կը ստանայ Անոր ճշմարտութեան եւ Օրէնքին մէջ, յաճախ անոր մասին կը խորհրդածէ եւ հետեւաբար՝ չի՝ հետեւիր աշխարհի ապստամբ ճամբուն (Հմ. 1-2): Դժուարութիւններ պիտի գան բոլորին, բայց Աստուծոյ ճամբաներով հաստատուած կեանքը «Ջուրի առուններուն քով տնկուած ծառի պէս պիտի ըլլայ ... որու տերեւը բնաւ պիտի չթառամի» (Հմ. 3): Մեր կեանքի եղանակներուն համաձայն՝ գո՛ւցէ՛ չկարենանք օրական ժամեր յատկացնել Աստուածաշունչի ուսումնասիրութեան: Սակայն, Յիսուս ըսաւ, որ ինք կու տայ ջուր՝ եթէ մէկը ծարաւ է եւ իր մօտ կու գայ եւ Սուրբ Հոգին պիտի լեցնէ իրեն հաւատացողներուն փորը՝ կենարար գետի պէս հոսող ջուրով (Յովհ. 7. 37-39): Մենք կրնանք մեր սիրտերը թաթախել կենդանի ջուրին մէջ՝ փառաբանութեամբ եւ Աստուածաշունչին միջոցով, ինչպէս նաեւ ուրիշներու մասին հոգալով, Աստուծոյ հետ խօսելով՝ մինչ կը գործենք եւ ներողութիւն խնդրելով՝ երբ մենք խառնաշփոթ ենք:

Աղօթք - Սիրելի Յիսուս, թո՛ղ որ Զու մօտդ գամ, երբ ծարաւ եւ չոր կը գգամ: Ամէն:

Ի՞նչ սովորութիւններ՝ քեզ տնկուած կը պահէ Յիսուսի կեանք տուող ջուրերուն քով: Ինչպէ՞ս այդ կը փոխէ, կախեալ ըլլալով՝ թէ կեանքի ո՞ր եղանակին մէջ ենք:



Իմ աղեղս ամպին մէջ պիտի դնեմ. ան պիտի ըլլայ իմ ու երկրի միջեւ ուխտին նշանը: [Ծն. 9. 13]

ԾԻԱԾԱՆՆԵՐ ԵՒ ԱՍՏՈՒԾՈՅ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԸ

Մինչ՝ կանգնեցայ դիտելու Նիակարա Ջրվէժի հիանալի ուժը, նկատեցի, որ ուրիշ զբօսաշրջիկներ՝ յանկարծ սկսան լուսանկարել: Նայելով նոյն ուղղութեամբ տեսա՛յ՝ որ ծիածան մը յայտնուեցաւ կամարածեւ գետին վրայ: Կը թուէր՝ որպէս թէ կը սկսէր Հօրսշու Ջրվէժի (Horseshoe Falls) յատակէն՝ եւ կ'աւարտէր Ամերիկեան Ջրվէժի (American Falls) յատակը:

Իրականութեան մէջ՝ ծիածանը վերջ չունի: Անիկա լրիւ շրջանակ է, բան մը՝ որ տեսած եմ միայն մէ՛կ անգամ: Կը նայէի օդանաւի պատուհանէն, երբ արեւը՝ որ կը փայլէր ճիշդ ուղղութեամբ, ամպերէն վեր բացայայտեց ամբողջ շրջանակածեւ ծիածան մը: Նստեցայ՝ տեսարանով հիացած, մինչեւ որ օդանաւը շրջեցաւ եւ շրջանակը անհետացաւ:

Այդ ծիածանը՝ ինծի շատ բան տուաւ մտածելու, թէ ինչպէ՞ս Աստուած չունի սկիզբ կամ վերջ, եւ թէ Ան կը բացայայտէ մեզի Իր խոստումները՝ անկախ անկէ, թէ ո՞ր ենք մենք: Մեր անվերջ, յաւիտենական Աստուածը «Իր աղեղը (ծիածանը) ամպին մէջ դրաւ» (Ծն. 9. 13), որպէս խոստում՝ որ այլեւս երբէ՛ք պիտի չի հեղեղէ երկիրը «ամէն մարմին բնաջնջելու համար» (Հմ. 15): Նոյնիսկ այսօր, մեր Արարիչը կը յիշեցնէ այդ խոստումը մեզի՝ Իր ստեղծագործութեան մէջ (Հմ. 13-16):

Եսայի 40. 28-ն կ'ըսէ. «Յաւիտենական Աստուածը՝ Եհովան, երկրի ծայրերուն Ստեղծիչը, չի պարտասիր ու չի յոգնիր, Անոր հանճարը չի քննուիր»: Ի՛նչ հիանալի խորհուրդ: Մենք յաւիտենականութիւն պիտի ունենանք՝ սորվելու համար մեր խոստումը պահողին մասին, եւ երբէ՛ք պիտի չի հասնինք Անոր հասկացողութեան վերջնական խորութեան:

Աղօթք - Յայր, շնորհակա՛լ եմ Քեզի, որ ստեղծեցի՛ր ծիածաններ եւ բացայայտեցի՛ր զանոնք մեզի՝ որպէ՛ս՝ մեզի տուած Քու խոստումիդ ապացոյց: Ամէն:

Երբ ծիածանը տեսնես՝ Աստուծոյ ո՞ր յատկանիշներուն մասին կը մտածես: Ինչպէ՞ս Անոր տուած խոստումները կը քաջալերեն քեզ:

Տուէ՛ք՝ եւ պիտի տրուի ձեզի: [Պուկ. 6. 38]

ԱՌԱՏԱԶԱՌՆՈՒԹԵԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԵԼ

Երբ Լիտիային (*Lydia*)՝ անանուն նուիրատու մը՝ նուիրեց 10,000 տոլար, ան այդ դրամէն քիչ բան մը ծախսեց իրեն համար: Փոխարէնը, ան առատաձեռն նուէրներ տուաւ իր գործընկերներուն, ընտանիքի անդամներուն, աղէտեալներուն եւ բարեգործական կազմակերպութիւններուն: Լիտիան, անտեղեակ, ուսումնասիրութեան մը մաս կը կազմէր, որ կը հետեւէր՝ թէ ինչպէ՞ս երկու հարիւր հոգի դրամատան փոխանցման միջոցով՝ պատասխանած էին առանց որեւէ պայմանի՝ 10,000 տոլարի՝ նուէր մը ստանալու համար: Ուսումնասիրութիւնը՝ ցոյց տուաւ, որ այդ նուիրուած գումարին՝ աւելի քան երկու երրորդը՝ նուէր տրուած է: Բաժնեկցելով այս պատմութիւնը՝ TED ո՛չ հասութաբեր լրատուական կազմակերպութեան ղեկավարը՝ Գրիս Էնտըրսըն (*Chris Anderson*)՝ անդրադարձաւ. «Կը պարզուի, որ ... մենք՝ մարդ արարածներս, պատրաստ ենք առատաձեռնութեան՝ մեծահոգիութեամբ պատասխանելու»:

Աստուածաշունչին մէջ՝ կը գտնենք, որ երբ մարդիկ առատաձեռնութեամբ կ'ապրին, անոնք կ'արտացոլացնեն՝ զիրենք ստեղծող Աստուծոյ սիրտը: Աստուած առատաձեռն է, ողորմած ու բարի, ո՛չ միայն ոմանց, այլ բոլորին հանդէպ, նոյնիսկ «ապերախտներուն եւ չարերուն» (Պուկ. 6. 35): Այսպէս՝ Յիսուս հրահանգեց անոնց, որոնք կը ցանկան արտացոլացնել Աստուծոյ բնաւորութիւնը, «սիրելու», «բարիք ընելու» եւ «փոխ տալու» նոյնիսկ թշնամիներուն՝ «առանց փոխարէնը՝ բան մը սպասելու» (Հմ. 32-35):

Երբ մենք կու տանք՝ առանց որեւէ բան ետ ալնկալելու, մենք կը հասկնանք, որ այդ՝ երբէ՛ք մեզ վնասելու կեանքի ձեւը չէ: Յիսուս ալ այս մէկը մատնանշեց՝ երբ ըսաւ. «Տուէ՛ք՝ եւ պիտի տրուի ձեզի ... ա՛յն չափով՝ որով դուք կը չափէք» (Հմ. 38): Երբ կը պատասխանենք Աստուծոյ առատաձեռնութեան՝ առատաձեռն ապրելով, կը տեսնենք, որ հարստացած ենք՝ անհաշիւ ձեւերով:

Աղօթք - Դայր, շնորհակալ եմ Ձեզի՝ տալու ուրախութեան համար: Ամէն: Ուրիշներուն տալով մեր ունեցածէն՝ ուրախութիւն կը գտնենք եւ մեր կեանքերը կը հարստանան:



Տաքիթա՝ լեցուած էր իր ըրած բարի գործերով եւ ողորմութիւններով: [Գործք 9. 36]

ՏԱԼՈՒ ՈՒՐԱՆՈՒԹԻՒՆԸ

Հինգ ժամ տեւող թուիչքի մը վրայ, կին մը՝ աշխուժութեամբ կը հիւսէր վերնաշապիկ մը: Երբ ան իր բուրդը հիւսելու համար գործածած կարթը ներս եւ դուրս կը շարժէր, նկատեց՝ հինգ ամսական երեխայ մը, որ հիացած էր իր շարժումներով: Յետոյ՝ կինը մի՛տք մը յղացաւ: Փոխանակ վերնաշապիկը ամբողջացնելու, գլխարկ մը հիւսէ՝ հիացող փոքրիկ երեխային համար թուիչքի մնացեալ ժամանակին մէջ: Երբ կինը նուիրեց փոքրիկ գլխարկը երեխային մօր, բոլոր ընտանիքը ընդունեց նուէրը ուրախութեամբ, իսկ միւս ուղեւորները ժպտացին ու ծափահարեցին:

Անակնկալ նուէները՝ յաճախ ուրախութեամբ կ'ընդունուին: Անկախ անկէ՝, թէ անոնք մեզի համար անհրաժեշտ նուէրներ են՝ թէ պարզապէ՛ս կ'ուզենք, անոնց միջոցով կրնայ նաեւ նուիրողը ցոյց տալ մեզի՝ Քրիստոսի բարութիւնը: Առաջին դարու եկեղեցիին մէջ՝ Տաքիթան՝ յայտնի էր իր պատարաստած հագուստները բաժնեկցելով ուրիշներու հետ եւ «լեցուած էր իր ըրած բարի գործերով եւ ողորմութիւններով» (Գործք 9. 36): Երբ ան մեռաւ, անոր նպաստը նկալները ցուցադրեցին «այն բաճկոններն ու հանդերձները, որ ինք շինած էր՝ երբ իրենց հետ էր» (Հմ. 39): Անոնք վկայեցին իր բարութեան եւ այն մասին, թէ ինչպէ՛ս ան դպչած էր իրենց կեանքերուն:

Իրադարձութիւններու թատերական շրջադարձով՝ Պետրոս, Սուրբ Հոգիին զօրութեամբ, վերադարձուց Տաքիթային (Հմ. 40): Անոր ըրածը՝ ուրախութեամբ լեցուց անոնց, որոնք կը սիրէին Տաքիթային եւ ստիպեց շատերու հաւատալու Քրիստոսի (Հմ. 42):

Մեր բարութեան արարքները՝ կրնան ըլլալ ամենայիշարժան վկայութիւններէն մի քանին, որ մենք կ'ընենք: Մինչ Աստուած կը հայաթայթէ մեր կարիքները, եկէ՛ք այսօր որոշ անակնկալ նուէրներ բաժնեկցինք ուրիշներու հետ:

Աղօթք - Յայր, կը խնդրեմ՝ յիշեցուր ինձի, որ բարի ըլլամ ուրիշներու հանդէպ՝ բաժնեկցելով նուէրներս ու գանձերս: Ամէն: Ի՞նչ նուէրներ կրնաս բաժնեկցիլ ուրիշներու հետ: Ի՞նչ կը նշանակէ քեզի համար բարութեան նուէրներ ստանալ:

Սիրտ (կինդ), ինչպես Տերը Իսրայելի որդիները կը սիրէ, թէև անոնք ուրիշ աստուածներու կը դառնան: [Ովս. 3. 1]

ՈՒՂԻ ՄԸ ԴԷՊԻ ԱՌԱՋ

Ի՞նչ կ'ընենք մենք: Սքաթթ (Scott) եւ Պրի (Bree) կը տանջուէին, թէ ինչպէ՞ս պէտք է յարաբերին ընկերներու եւ ընտանիքի այն անդամներուն հետ, որոնք ընտրած են ո՛չ Սուրբ Գրային կեանքի ուղիներ: Երբ անոնք կ'ուսումնասիրէին Աստուածաշունչը եւ կ'աղօթէին, առաջացաւ ուղի մը: Նախ՝ անոնք ամրապնդեցին իրենց սէրը՝ ընտանիքի անդամներուն եւ իրենց ընկերներուն հանդէպ: Երկրորդ՝ անոնք արտայայտեցին այն՝ ի՛նչ որ ճշմարիտ ու լաւ էր իրենց մասին՝ հիմնուելով Աստուծոյ բարի նախագծով թեան վրայ: Եւ երրորդ՝ անոնք պատմեցին, թէ ինչպէ՞ս սիրով պիտի շփուին իրենց հետ՝ հիմնուելով Աստուածաշնչային իմաստութեան վրայ: Ժամանակի ընթացքին՝ աւելի մեծ յարաբերութիւններու վստահութիւն ստեղծեցին, երբ Սքաթթ եւ Պրի՝ Քրիստոսանման սէր արտայայտեցին:

Հաւանաբար՝ Ովսէ ալ կը մտածէր, թէ ինչպէ՞ս վերաբերիլ իր կնոջ հետ, կին մը՝ որու ընտրած ապրելակերպը չէ՛ր պատուեր Աստուծոյ կամ իրեն: Աստուած պատուիրեց մարգարէին ըսելով. «Գնա, իր հոմանիէն սիրուած շնացեալ կին մը սիրէ» (Ովս. 3. 1): Մարգարէն ակնյայտօրէն ամրապնդեց իր սէրը իր կնոջ հանդէպ, միաժամանակ արտայայտելով ա՛յն, ինչ որ ճիշդ ու ճշմարիտ էր իրենց եւ իրենց յարաբերութեան համար՝ Աստուծոյ առջեւ (Հմ. 3): Անոր հետ իր ունեցած յարաբերութիւնը խորհրդանշեց Աստուծոյ մարտահրաւէրը՝ ապստամբ հին Իսրայելի հետ: Թէեւ անոնք սխալ ուղի ընտրած էին, Ան նոր ուղի մը տուաւ դէպի առաջ՝ ըսելով անոնց, որ Իր սէրը անսահման է եւ «զանոնք յօժարակամ պիտի սիրէ» (14. 4), բայց ընտրելու են Իր ուղիները, քանի որ Իր «ճամբաները ուղիղ են» (Հմ. 9):

Եկէ՛ք շարունակենք տարածել Իր սէրն ու ճշմարտութիւնը անոնց, որոնք ընտրած են՝ ո՛չ Աստուածաշնչային կեանքի ուղիներ:

Աղօթք - Յայր, կը խնդրեմ՝ օգնէ՛ որ արտացոլացնեմ Զու ճշմարտութիւնդ ու սերդ՝ Զեզմէ հեռու եղողներուն: Ամէն:
Աստուած՝ ցոյց կու տայ մեզի Իր սերն ու ճշմարտութիւնը, հետեւաբար՝ մեզի կը մնայ ցոյց տալ Իր սերն ու ճշմարտութիւնը անոնց, որոնք Աստուծոյ ճամբաներուն մէջ չեն քալեր:

Ձեր սիրտերուն մէջ թող հովանաւորէ Աստուծոյ խաղաղութիւնը, որուն ալ կանչուեցաք՝ մէկ մարմինով: [Կող. 3. 15]

ՔՐԻՍՏՈՍԻ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆԸ

Արդեօ՞ք անոնք պիտի կարենան յաղթել վիճելով: «Երբէ՛ք».
Րսաւ փոքր քաղաքի մը ղեկավարը՝ զգուշացնելով Ատիրօնտէք Այգիին (Adirondack Park) բնակիչներուն, ուր բնապահպաններուն եւ փոքր վաճարատուներու սեփականատերերու միջեւ՝ կատաղի պայքար մը բռնկեցաւ. ծանօթ որպէս «Ատիրօնտէք Պատերազմները» (Adirondack Wars): Անունը՝ կը նկարագրէ՝ անոնց պայքարը՝ փրկելու Նիու Եօրք Նահանգի վերի մասին մէջ գտնուող տարածքին անբասիր ու մաքուր անապատը կամ զարգացնելու գայն:

«Վերադարձէ՛ք՝ ուրկէ որ եկաք», գոռացէր էր՝ տեղական ղեկավար մը՝ բնապահպանի մը վրայ: Բայց շուտով՝ նոր հաղորդագրութիւն մը յայտնուեցաւ. «Մի գոռաք իրարու վրայ: Փորձեցէ՛ք խօսիլ իրարու հետ»: Հասարակ Գետնի Դաշնակցութիւն մը (Common Ground Alliance) ստեղծուեցաւ՝ պատերազմող խմբակցութիւններուն միջեւ կամուրջներ կառուցանելու համար: Քաղաքացիական երկխօսութեան արդիւնքը եղաւ՝ առաջընթաց մը՝ եւ մօտ չորս հազար քիլօմետր քարակուսի բնական հողեր պաշտպանուեցան, նոյնիսկ այն ժամանակ, երբ Ատիրօնտէքի գիւղաքաղաքները աւելի բարգաւաճ աճում ունեցան, քան ինչ որ եղած էր քսան տարիներու ընթացքին:

Խաղաղ համակեցութիւնը՝ սկիզբն է, բայց Պօղոս առաքեալ աւելի լաւ բան սորվեցուց: Ան՝ Կողոսայի նոր հաւատացեալներուն ըսաւ. «Դո՛ւք ալ թօթափեցէ՛ք սա՛ամէնը. - բարկութիւնը, գայրոյթը, չարամտութիւնը, հայհոյութիւնը, լիրբ խօսքերը՝ ձեր բերանէն» (Կող. 3.8): Յորդորեց անոնց փոխելու իրենց հին ուղիները՝ նոր բնութեան մը հետ՝ Յիսուս Քրիստոսի մէջ: Ան գրեց. «Հագէ՛ք գութը, կարեկցութիւնը, քաղցրութիւնը, խոնարհութիւնը, հեզութիւնը, համբերութիւնը» (Հմ. 12):

Հրաւէրը բոլոր հաւատացեալներուն է: Յանձնե՛նք մեր հին կռուագան կեանքը՝ եւ սկսինք Քրիստոսով նոր կեանք մը:

Աղօթք - Յայ՛ր, երբ իմ հին կեանքս բռնկի բարկութեամբ, կը խնդրե՛մ, շնորհէ ինձի՛՝ նոր խաղաղութիւն մը՝ Քու մէջդ: Ամեն: **Որո՞ւ կրնաս ներել՝ այսօր: Որո՞ւ հետ կրնաս հաշտուիլ:**

Աստուծոյ խօսքը կենարար է եւ ազդու. ... Կը քննարկէ սիրտին մատածումներն ու մտադրութիւնները: [Եբ. 4. 12]

ՀԱՍԿՆԱ՛Լ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԸ

Որքա՞ն կարեւոր է Աստուածաշունչը: Այդ՝ այնքա՞ն կարեւոր է, որ շատ երկիրներու մէջ մարդիկ իրենց կեանքը վտանգի տակ կը դնեն՝ թարգմանելու զայն իրենց մայրենի լեզուներով: Յաճախ՝ անոնք Յիսուսի սովորական հաւատացեալներն են, որոնք կը ձերբակալուին՝ Սուրբ Գիրքին խօսքերը՝ սիրտի լեզուով թարգմանելու համար, որպէսզի՝ ուրիշներ հասկնան:

Յիսուսի հաւատացողներուն հակառակ տրամադրուած երկրէ՝ կի՛ն թարգմանիչ մը ըսաւ. «Պէտք է աւարտեմ աշխատանքը: Կ’ուզեմ տեսնել, որ իմ սիրելիներս՝ ունին փրկութեան փորձառութիւնը՝ Քրիստոսով»: Եւ մարդ մը, որ կը կազմակերպէր քաղաքացիներուն, որ գաղտնաբար թարգմանեն Աստուածաշունչը, կը բացատրէ թէ Աստուածաշունչը՝ էական է տեղական եկեղեցիներու մէջ եղող հասուն հաւատացեալներուն աճման համար: «Դուք կրնաք եկեղեցի մը սկսիլ, բայց ... առանց սիրտի լեզուի, Աստուածաշունչը սովորաբար կը տեւէ ընդամէնը՝ մէկ սերունդ»:

Ինչո՞ւ անոնք այս բանը կ’ընեն: Որովհետեւ՝ Աստուածաշունչին նման ուրիշ գիրք չկայ: Դարերու ընթացքին՝ անոր պահպանումը եզակի է: Անոր ճշմարտութիւնը եւ մարդու սիրտի պատկերին ներկայացումը՝ ճշգրիտ են: Անիկա՝ «կենարար է եւ ազդու. ... Կը քննարկէ սիրտին մտածումներն ու մտադրութիւնները» (Եբ. 4. 12): Եւ «ամբողջ գիրքը՝ Աստուածաշունչ է» (Բ. Տիմ. 4. 16), ներշնչուած Անոր կողմէ: Եւ ամենակարեւորը, ան կը բացայայտէ աղբիւրն ու ճշմարտութիւնը՝ «փրկութեան Յիսուս Քրիստոսի հանդէպ եղած հաւատքով» (Հմ. 15):

Եկէ՛ք կարգանք, փայփայենք ու ապրինք՝ Սուրբ Գրութիւնները: Եւ ինչպէ՛ս Աստուած կ’ապահովէ, օգնե՛նք աշխարհի շուրջ եղող բոլոր մարդոց, որ ստանան եւ հասկնան զա՛յն:

Աղօթք - Սիրելի Աստուած, շնորհակալ եմ Զեզի՝ Աստուածաշունչին եւ ուրիշներու հետ զանոնք բաժնեկցելու արտօնութեան համար: Ամէն:

Ի՞նչն է Աստուածաշունչի ամենէն սիրելի մասը քե՛զի համար: Ինչպէ՛ս կրնա՛ս օգնել ուրիշներու՝ որ աւելի լաւ հասկնան զա՛յն:

Սորվեցէ՛ք ինձմէ՛ որ հեգ եմ եւ սիրտով խոնարհ, ու հանգստութիւն պիտի գտնէք ձեր անձերուն: [Մատթ. 11. 29]

ՅԻՍՈՒՄ - ՄԵՐ ՀԱՆԳԻՍՏԻ ՎԱՅՐԸ

1943 թուականին՝ Մէրիլէնտ (Maryland) գիւղական շրջանի՝ Շանկրի-Լա (Shangri-La) կոչուած՝ ճամբարը գնուեցաւ, Ամերիկայի Միացեալ Նահանգներու Նախագահ՝ Ֆրէնքլին Տ. Ռուզրվէլթի (Franklin D. Roosevelt) համար: Գեղջուկ, լուռ եւ հեռաւոր, այս բանակավայրը՝ միայնութեան եւ հանգստութեան հնարաւորութիւն ընդձեռեց, ըստ Սպիտակ Տան կայքի էջին, «ինչպէս նաեւ իտէպլ տեղ մը եղաւ աշխատելու եւ օտար երկիրներու առաջնորդները հիւրընկալելու համար: Երբ Տէյվիտ Այզընհաուր (David Eisenhower) եղաւ նախագահ, ան վերանուանեց այս հանգստեան բանակավայրը՝ Քէմփ Տէյվիլտ (Camp David)՝ ի պատիւ իր հօր եւ իր թոռնիկին ու այդ անունը մնաց: Բացի անվտանգութեան ուժեղացումէ միջոցառումներուն, բանակավայրի արգիականացումը՝ շատ քիչ եղած է: Այդ բանակավայրը՝ կը մնայ նախագահի եւ իր ընտանիքին համար փախչելու եւ հանգստանալու կատարեալ վայր մը:

Յիսուսի հաւատացողներն այլ նաեւ՝ ունին հանգստավայր մը, ուր կրնանք հանգիստ գտնել մեր անհանգիստ աշխարհին մէջ: Սաղմոս 32. 7-ին մէջ, Դաւիթ թագաւոր գրեց. «Դո՛ւն ես իմ պատսպարանս. պիտի պաշտպանես զիս տագնապէն, պիտի շրջապատես զիս ազատութեան երգերով»: Դաւիթ հասկցաւ, որ Աստուած իր իսկական ապահով վայրն է:

Յիսուս կ'ողջունէ մեզ՝ իր մէջ հանգստութիւն եւ վերանորոգութիւն ունենալու համար: Ան կ'ըսէ. «Եկէ՛ք ինձի, դուք որ կը յոգնիք ու բեռնաւորուած էք, եւ ես պիտի հանգստացնեմ ձեզ: Առէ՛ք իմ լուծս ձեր վրայ ու սորվեցէ՛ք ինձմէ՛ որ հեգ եմ եւ սիրտով խոնարհ, ու հանգստութիւն պիտի գտնէք ձեր անձերուն» (Մատթ. 11. 28-29): Ան է մեր հանգիստի վայրը՝ որեւէ ժամանակ:

Աղօթք - Սիրող Աստուա՛ծ՝ ես յոգնած եմ: Այս աշխարհը դժուար է, եւ երբեմն ես կը զգամ, որ կեանքը ինձմէ կը պարպուի: Կը խնդրեմ՝ օգնէ ինձի աւելի միտումնաւոր ըլլալ Զու մօտդ գալու եւ Զու ողորմած ներկայութեանդ մէջ՝ հանգիստ գտնելու: Ամէն: Ի՞նչ բանը կը խլէ մեզմէ խաղաղութիւնն ու հանգիստը: Ինչպէ՞ս կրնանք փնտռել՝ հանգստութիւն գտնելու համար Յիսուսի մէջ:

Յիսուս ըսաւ անոր. «Պա՛ս, դո՛ւն ալ նոյնպէս ըրէ»: [Պուկ. 10. 37]

ՏԱՐԱԾԵԼ ԱՍՏՈՒԾՈՅ ՍԷՐԸ ԴՐԱՑԻՆԵՐՈՒՄ

Չմեռնային օր մը՝ Միչիկընի (Michigan) մէջ, առաքիչ մը նկատեց տարեց կին մը, որ բաճուկ կը մաքրեր իր կառուղիին ձիւնը: Ան կանգ առաւ եւ ուխտունամէկ տարեկան կնոջ համոզեց, որ թոյլ տայ իրեն՝ վերջացնելու գործը: Մտահոգուելով՝ որ մարդը կրնայ ուշանալ իր ծրարները ժամանակին հասցնելու, կինը՝ ուրիշ բաճ մը վերցուց: Կողք կողքի աշխատեցան անոնք՝ գրեթէ տասնհինգ վայրկեան, մի՛նչ անոր դրացիները կը դիտէին հեռուէն: Ու կինը ըսաւ. «Շնորհակալ եմ, որ օգնեցիր ինծի: Դո՛ւն Աստուծոյ զրկուած ես»:

Օրինականի մը հետ գրուցելու ժամանակ՝ Յիսուս վերիմաստաւորեց մեր դրացիները սիրելու մտապատկերը (Պուկ. 10. 25-37): Երբ Յիսուս խնդրեց՝ որ ան մեկնաբանէ իր շատ լաւ գիտցած օրէնքը, օրինականը ըսաւ. «Սիրէ՛՛ Տէրը՝ քու Աստուծոյ՝ ամբողջ սիրտովդ, ամբողջ՝ անձովդ, ամբողջ գորովեամբ եւ ամբողջ միտքովդ, ու ընկերդ՝ քու անձիդ պէս» (Հմ. 27):

Ապա՝ Յիսուս պատմեց երկու կրօնական առաջնորդներու մասին, որոնք անտեսեցին կողոպուտի զոհ դարձած մարդու մը: Բայց Սամարացի մը՝ անձնաւորութիւն մը, որ այդ օրերու Հրեայ առաջնորդներու մեծամասնութիւնը՝ կը համարէին ստորոգաս, զոհաբերեց իր ժամանակը եւ ունեցածը՝ կարիքաւոր մարդուն օգնելու համար (Հմ. 30-35): Երբ օրինականը հասկցաւ, որ ան որ ողորմութիւն ըրաւ մարդուն, սիրելի է դրացիի մը պէս, Յիսուս յորդորեց անոր նոյն կերպ վարուելու (Հմ. 36-37):

Ուրիշին սիրելը՝ միշտ չէ՛, որ դիւրին կամ յարմար է: Բայց քանի որ Յիսուս կու գայ իր սիրով, կ'օգնէ մեզի սիրելու մեր բոլոր մերձաւորները, ինչպէս որ բարի Սամարացին ըրաւ:

Աղօթք - Սիրելի Յիսուս, կը խնդրեմ, հնարաւորութիւնը տո՛ւր ինծի՝ սիրելու քու ստեղծած բոլոր մարդերը եւ կոչե՛մ զանոնք իմ դրացիներս: Ամէն:

Ինչպէ՞ս Աստուած քեզի ցոյց տուած է Իր սերը՝ անսպասելի դրացիի մը միջոցով: Որո՞ւ կրնաս ցոյց տալ Աստուծոյ սերը գործնական ձեւով՝ այս շաբաթ:



Սպանսեցիք կեանքի Ռահվիրան: Իսկ Աստուած մեռելներէն յարուցանեց զայն: [Գործք 3. 15]

ԿԱՐԴԱԼ, ԳՐԵԼ ԵՒ ՅԻՍՈՒՄ

Մովսէ՛ս՝ եղջիւրներո՞վ: Այդպէս կը պատկերացնէ ու կը ներկայացնէ՝ Մայքելանճէլոյի (Michaelangelo) գլուխ գործոց քանդակը, որ ամբողջացած է 1515 թուականին: Մովսէսի մազերէն երկու եղջիւրներ դուրս ցցուած են՝ անոր ճակատէն անմիջապէս վեր:

Մայքելանճէլոյն մինակ չէ՛ր: Վերածնունդի եւ միջնադարի շատ նկարիչներ՝ Մովսէսին այդպէս կը պատկերացնեն: Ինչո՞ւ: Այդ կապուած է եբրայերէն Աստուածաշունչի Լատիներէն թարգմանութեան հետ, որ տրամադրելի էր՝ այդ ատեն ու կը նկարագրէր Մովսէսի պայծառ դէմքը՝ Աստուծոյ ներկայութեան ըլլալէ ետք (տե՛ս Ել. 34. 29): Բնագիրին մէջ կ'օգտագործուի «եղջիւրներու» հետ կապուած բառ մը՝ Մովսէսի դէմքէն շողացող լոյսի «ճառագայթներ»ը՝ նկարագրելու համար: Իսկ Լատիներէն Վալկէյթ (Vulgate) Աստուածաշունչը՝ թարգմանած է զայն բառացի: Հետեւաբար՝ Մովսէս «սխալ կարդացուած» էր:

Դո՛ւն՝ երբէ՛ք սխալ կարդացա՞՞ծ ես ոեւէ մէկը: Երբ կաղ ծնած մարդ մը բժշկուեցաւ Պետրոսի ձեռքով՝ Յիսուսի անունով (Գործք 3. 1-10), առաքեալը ըսաւ Իսրայէլացի ժողովուրդին, որ անոնք սխալ՝ կարդացած են Յիսուսի: Ան ըսաւ. «Սպաննեցիք կեանքի Ռահվիրան: Իսկ Աստուած մեռելներէն յարուցանեց զայն» (Հմ. 15): Ան շարունակեց. «Բայց ինչ որ Աստուած նախապէս՝ իր բոլոր մարգարէներուն բերանով՝ ծանուցանած էր Քրիստոսի չարչարուելուն մասին, այսպէս իրագործեց» (Հմ. 18): Պետրոս՝ նոյնիսկ ըսաւ, որ Մովսէս մատնացոյց ըրաւ Քրիստոսի (Հմ. 22):

«Յիսուսի անունին հանդէպ հաւատքով» եւ «հաւատք մը, որ կու գայ իր միջոցով» կը հաստատէ՝ թէ մարդուն կեանքը փոխուեցաւ (Հմ. 16): Անկա՛խ անկէ, թէ ինչպէ՞ս մենք սխալ հասկցած ենք զԻնք կամ թէ ի՞նչ կը պարունակէ մեր անցեալը, Քրիստոս կ'ողջունէ մեզ, երբ մենք կը դիմենք Իրեն:

Աղօթք - Յիսու՛ս, շնորհակալ եմ քեզի, որ միշտ կը հասկնա՛ս եւ կը սիրե՛ս զիս: Ամէն:

Ինչպէ՛ս սխալ կարդացած ես Յիսուսի: Ի՛նչ բան կ'օգնէ քեզի՝ աւելի լաւ հասկնալու զինք՝ այսօր:

Աստուծոյ խօսքը կենարար է եւ ազդու. ... Կը քննարկէ սիրտին մատածումներն ու մտադրութիւնները: [Եբ. 4. 12]

ԱՆՅԱՍԿՆԱԼԻ ԱՍՏՈՒԱԾ

2023 Փետրուարին՝ Ճէյմս Ուէյպլ (James Webb) տիեզերական աստղադիտակը՝ ուրիշ մէկ ուշագրաւ յայտնագործութիւն մը ըրաւ: Այնտեղէն անդին, ուր մարդկութիւնը նախապէս կարողացած էր նայիլ տիեզերքին, ան յայտնաբերեց վեց նոր համաստեղութիւններ: Այս յայտնագործութիւնը՝ ընդլայնեց ա՛յն, ինչ որ մենք արդէն գիտենք տիեզերքի մասին: Աստղագէտներէն մէկը՝ ակնարկեց ըսելով. «Կը պարզուի, որ մենք այնքա՛ն անսպասելի բան մը գտանք, որ իրականութեան մէջ խնդիրներ կը ստեղծէ՝ գիտութեան համար»: Աստղաֆիզիկոս մը գրեթէ ներողութիւն խնդրելով ըսաւ. «Զգիտնալու մէջ՝ գէ՛շ բան չի կայ»:

Կը թուի, թէ Աստուած կը շարունակէ զարմացնել մեր բոլորին: Եսայի մարգարէն, տիեզերական աստղադիտակներու յայտնուելէն շատ առաջ, կարծե՛ս ուղղակիօրէն կը խօսի՝ այսօրուայ գիտնականներուն հետ. «Միթէ չգիտցա՞ր կամ չլսեցի՞ր, թէ յաւիտեանական Աստուածը՝ Եհովան, երկրի ծայրերուն Ստեղծիչն է» (Ես. 40. 28): Ան կը շարունակէ, կանխելով աստղաֆիզիկոսին խօսքերը. «Անոր հանճարը չի քննուիր» (Հմ. 28):

Բայց եթէ կանգ առնենք այնտեղ, մենք չե՛նք տեսներ այս հատուածին գեղեցկութիւնը: Ան՝ որ անքննելի է, ո՛չ անձնական չէ՛: Ան, որ ստեղծեց այդ վեց համաստեղութիւնները եւ մնացած բոլորը (Հմ. 26), նոյն Աստուածն է, որ «պարտասածին ոյժ տուող եւ կորով չունեցողին հզօրութիւն հայթայթող է» (Հմ. 29): Տիեզերքի Աստուածը նաեւ անձնական Աստուածն է, որ կ'օգնէ Իրեն յուսացողներուն «որոնք արծիւներու պէս թեւերով վեր պիտի ելլեն» (Հմ. 31): Վստահ եղէ՛ք, անգերազանցելի Աստուածը՝ Ան է, որ մենք կը ճանչնանք. Ա՛ն՝ որ կը խօսի մեր կեանքին մասին՝ զօրութեամբ եւ ուժով:

Աղօթք - Տիեզերքի Աստուած, շնորհակալ եմ քեզի՝ իմ երևաւոր Յայրս ըլլալուդ համար: Յոյսս կը դնեմ քո՛ւ վրադ՝ ինձի իմաստութիւն եւ ուժ տալուդ համար: Ամէն:
Ի՞նչ կը նշանակէ քեզի համար, որ Աստուած անքննելի է, սակայն անձնական: Ինչպե՞ս անձնական է Ան՝ քեզի համար:

Մարդուն ուշիմութիւնը իր բարկութիւնը կը յետաձգէ, եւ անոր պարծանքն է յանցանքը անտեսել: [Առ. 19. 11]

Ո՛Չ ԴԻԻՐԱՒ ՆԵՂԱՆԱԼ

Երբ մտայ՝ եկեղեցի՝ քանի մը ամիսներ արգելափակուած ըլլալէ ետք, ոգեւորուեցայ տեսնելով այն անդամներուն, որոնց շատոնց չէի տեսած: Հասկցայ՝ որ որոշ անդամներ, յատկապէս աւելի մեծերը, պարզապէս չէին վերադարձած՝ ոմանք անվտանգութիւնը նկատի առնելով, իսկ միւսները՝ դժբախտաբար՝ քանի որ հեռացած էին այս կեանքէն: Այսպէս, բաւական յուզուած էի, երբ նկատեցի տարեց զոյգ մը, որ մտան սրբավայր եւ նստեցան իրենց սովորական տեղերը՝ իմ ետեւս: Զեռքի շարժումով բարեկեցի երկուքին: Այր մարդը՝ պատասխանեց՝ ողջոյնիս, իսկ կինը՝ առանց նոյնիսկ ժպտելու, նայեցաւ ինծի: Վատ զգացի, նեղացայ ու մտածեցի ինչո՞ւ:

Քանի մը կիրակիներ ետք, տեսայ՝ որ նոյն կինը (որ չէր պատասխանած իմ ողջոյնիս), ինչպէ՛ս օգնութիւն կը ստանար ընկերուհիէն, որ ցոյց կու տար՝ թէ ե՞րբ պէտք է ոտքի կանգնի եւ ե՞րբ պէտք է նստի, վարուելով որպէս անոր խնամանատարը: Եկեղեցիի իմ հին բարեկամս, ըստ երեւոյթին՝ շատ հիւանդ էր եւ չէ՛ր ճանչնար զիս: Ուրախ եմ, որ չմօտեցայ անոր կամ նոյնիսկ չնեղուեցայ, երբ ան՝ չպատասխանեց իմ խանդավառ ողջոյնիս:

Առակները՝ շատ խորհուրդներ կու տան խելամիտ ապրելու, եւ դիւրաւ չնեղանալը՝ անոր գոհարներէն մէկն է: Իրականութեան մէջ՝ կ'ըսուի թէ «ուշիմ մարդիկ ... յարգանք կը վաստկին՝ անտեսելով սխալները» (19. 11): Ընտրել չվիրաւորուիլ եւ սորվիլ բարկութեան տեղի չտալը (Հմ. 11), կրնայ մեզի պատիւ բերել: Այդ մէկը՝ կրնայ պահանջել համբերութիւն եւ «իմաստութիւն» (Հմ. 8), բայց պարգեւները նոյնպէս՝ կ'արժէ ստանալ մենք մեզ զսպել՝ վիրաւորանքը անտեսելով եւ ընտրել՝ ուրիշները սիրել:

Աղօթք - Ողորմութեան Աստուած, շնորհակալ եմ, որ կ'անտեսես այն ժամանակները, որոնք վիրաւորած եմ քեզ: Կը խնդրե՛մ, իմաստութիւն տո՛ւր ինծի, որ նոյնը ընեմ ուրիշներու համար: Ամէն: **Ե՞րբ նեղացած ես՝ մէկու մը ջրած բանէն: Ե՞րբ է ճիշդ ժամանակը՝ վիրաւորանքը անտեսելու:**

Մի՛ մտահոգուիք ձեր անձին մասին: [Մատթ. 6. 25]

ՄՏԱՅՈՒԹԻՒՆՆԵՐԴ ՅԻՍՈՒՍԻ ՅԱՆՁՆԷ

Նենսին՝ կը վախնար ապագայէն՝ տեսնելով միայն զժուարութիւնները: Իր ամուսինը Թամ (Tom)՝ երեք անգամ ուշաթափ եղած էր՝ Մէյն (Maine) գիւղի արշաւի ժամանակ: Սակայն, մօտակայ փոքրիկ հիւանդանոցի բժիշկները՝ ո՛չ մէկ վատ բան չգտան: Աւելի մեծ բժշկական կեդրոնի մը մէջ, ուր բժիշկները լրացուցիչ քննութիւններ կատարեցին եւ նոյնպէս որեւէ խնդիր չգտան: Երբ ամուսինը տուն զրկեցին՝ Նէնսին ըսաւ. «Շատ կը վախնայի»: Ան վերջին անգամ մըն ալ հարցուց. «Ի՞նչ պիտի ընենք հիմա»: Բժիշկը ըսաւ իմաստուն խօսքեր, որոնք ընդմիջտ փոխեցին անոր երեւոյթը: «Գնա՛յ, ապրի՛ր քու կեանքդ»: Նէնսին յիշեց. «Անիմաստ կերպով չէր: Ա՛յդ անոր տուած խորհուրդն էր մեզի»:

Նման առաջնորդութիւններ՝ ցոյց կու տան Յիսուսի հրահանգը Լերան Քարոզին մէջ: Ան ըսաւ. «Մի՛ մտահոգուիք ձեր անձին մասին՝ թէ ի՛նչ պիտի ուտէք կամ ի՛նչ պիտի խմէք, ո՛չ ալ ձեր մարմիններուն մասին՝ թէ ի՛նչ պիտի հագնիք. միթէ անձր աւելի չէ՞ կերակուրէն, ու մարմինը հագուստէն» (Մատթ. 6. 25): Նման ուղեցոյց մը չի նշանակեր, որ պէտք է անտեսել բժշկական կամ այլ խնդիրներ կամ ախտանիշներ: Փոխարէնը, Քրիստոս ուղղակի ըսաւ. «Մի՛ մտահոգուիք» (Հմ. 25): Ապա հարցուց. «Ձեզմէ ո՞վ կրնայ մտահոգուելով՝ կանգո՛ւն մը աւելցնել իր հասակին վրայ» (Հմ. 27):

Եսայի մարգարէն՝ նման իմաստութիւն մը առաջարկեց: «Այլայլած սիրտ ունեցողներուն ըսէ՛ք. 'Ուժով ցէ՛ք, մի՛ վախնաք, ահա՛ ձեր Աստուածը պիտի գայ'» (Ես. 35. 4): Նէնսիի եւ Թամի համար, անոնք այժմ ոգեշնչուած են քայլելու օրական աւելի քան հինգ մղոն: Անոնք այլեւս անհանգստութեամբ չեն քայլեր, այլ՝ անոնք ուրախութեամբ դուրս կու գան:

Աղօթք - Սիրելի Յիսուս, եթէ այսօր ես անհանգիստ եմ, կը իսնդրեմ՝ վստահութիւն տո՛ւր ինձի, որ վախերս Զեգի յանձնեմ, մինչ կը շարունակեմ ապրիլ Զու խաղաղութիւնով: Ամէն:
ԻՆչն Է՛ քու ամենամեծ մտահոգութիւնդ: Ինչպէ՞ս կրնաս քու հոգերդ Զրիստոսի տանիլ ու բարելաւել կեանքդ:

Ահա՛ւասիկ Եգիպտոսի երկրէն ելած Իսրայէլի որդիները:
[Թու. 26. 4]

ՑՈՒՑԱԿԸ ԿԵԱՆՔ Է

Հին տեսակի գրամեքենայի վրայ կքած՝ Իզհաք Սթըրն (Izhak Stern) ամբողջ գիշերը աշխատեցաւ՝ տպելով անուններ՝ ընդամէնը 1098: Որոնք կը ներկայացնէին գործարանի սեփանակատէր՝ Օսգար Շինտլըրի (Oscar Schindler) կողմէ Նացիներէն պաշտպանուած Հրեայ աշխատողներու անուններու ցուցակը: Չեռք բերելով փաստաթուղթը՝ Սթըրն յայտարարեց. «Ցուցակը՝ բացարձակ բարիք է: Ցուցակը կեանք է»: Անոք, որոնք անոր էջերուն վրայ նշուած են՝ ազատուեցան Հոլոքոսթէն (Holocaust): 2012-ին հաշուարկուած է, որ փրկուածներու ժառանգներուն թիւը՝ 8500 է:

Աստուածաշունչը կը պարունակէ ցուցակներու իր բաժինը: Մենք հակումը ունինք՝ նկատի չառնել զանոնք: Չափազանց շատ անուններ, չափազանց կրկնութիւններ: Մենք նոյնիսկ կրնանք ըսել, որ այս օրուան ընթերցումը ... ձանձրալի է: «Ահա՛ւասիկ Յուդայի որդիները՝ իրենց գերզաստաններով. Սելոմէ՛ Սելոմեաններուն գերզաստանը, Փարէսէ՛ Փարէսեաններուն գերզաստանը, » (Թու. 26. 20): Որո՞ւ կը հետաքրքրէ:

Աստուծոյ կը հետաքրքրէ՝ «Ահա՛ւասիկ Եգիպտոսի երկրէն ելած Իսրայէլի որդիները» կ'ըսէ պատմական արձանագրութիւնը (Հմ. 4): Շուտով մարդիկ պիտի բնակէին իրենց խոտաացուած հողին վրայ: Եւ օր մը՝ Մեսիան պիտի գար՝ Յուդայի այս ցեղէն: Ցուցակը կեանք է, ո՛չ միայն Հրեայ ժողովուրդին, այլեւ՝ բոլոր անոնց համար, որոնք կը վստահին Յիսուսի:

Օսգար Շինտլըրի ցուցակին մասին մենք գիտենք՝ «Շինտլըր Ցուցակ» անունով ծանօթ հզօր ֆիլմէն եւ պատմական գրառումներէն: Մենք գիտենք Աստուծոյ մեծ փրկութեան մասին՝ Աստուածաշունչին մէջ մեզի համար արձանագրուած պատմութենէն: Երբ մենք կը կարգանք Աստուածաշունչը, թող Անոր Հոգին ցո՛յց տայ մեզի՝ նոյնիսկ ցուցակներու արժէքը:

Աղօթք - - Սիրելի Աստուած, կը խնդրեմ՝ օգնէ ինծի ուշադիր կարդալ Աստուածաշունչը: Թո՛ղ Զու Յոգիդ առաջնորդէ զիս՝ իւրաքանչիւր հատուածի արժէքը տեսնելու համար: Ամէն: Աստուածաշունչի ո՞ր հատուածները՝ քեզի համար առաւել ձանձրացուցիչ են: Ինչպէ՛ս կրնաս կարդալ նոյնիսկ այս հատուածները՝ նոր աչքերով:

Յիսուս պատասխանեց անոր. «Մարթա՛, Մարթա՛, դուն շատ բաներու համար կը մտահոգուիս եւ իրար կ'անցնիս»: [Ղուկ. 10. 41]

ՔՐԻՍՏՈՍԻ ՄԷՋ ՀԱՆԳՉԻԼ

Քանի մը տարիներ առաջ, ուսումնասիրութիւն մը վերլուծեց՝ կապը դերահասներու ճնշուածութեան եւ անոնց քննալու քանակին միջեւ: Ուսումնասիրութիւնը կարգալէ ետք, երիտասարդ կին մը ակնարկութիւն ըրաւ՝ արդիւնքներուն մասին. «Կը թուի որ երբէ՛ք չեմ գիտեր՝ թէ ե՞րբ պէտք է կանգ առնեմ. ես ինձ՝ այնքան կը մղեմ, որ ի վերջոյ անհանգիստ կ'ըլլամ՝ քունի պակասէն եւ ճնշուածութենէն»: Ապա՛ ան ըսաւ, որ կ'ողգէ իմանալ՝ թէ իրականութեան մէջ՝ ի՞նչ կը նշանակէ տնօրինել իր ժամանակը՝ Աստուած յարգելու համար: Ի՞նչն է տարբերութիւնը՝ զբաղուածութեան եւ պտղաբերութեան միջեւ:

Զբաղուած ըլլալը՝ երաշխիք մը չէ՛ արդիւնաւէտ, հաւատարիմ կամ պտղաբեր ըլլալու համար: Տակաւին, մենք կրնանք մտածել, որ զբաղուած ըլլալը ամենէն կարեւորն է: Ղուկաս 10. 41-ին մէջ՝ Յիսուս մեղմօրէն յիշեցուց Մարթայի, որ ան «շատ բաներու համար կը մտահոգուի եւ իրար կ'անցնի», եւ իր քրոջ՝ Մարիամի ընտրութիւնը՝ նստելու «Յիսուսի ոտքերուն մօտ» (Հմ. 39)՝ որպէս աշակերտ ըլլալու կեցուածք, աւելի լաւ ընտրութիւն էր:

Քրիստոսի ծառայելու մեր ցանկութեան մէջ՝ մենք չափազանց շատ բաներ կ'ընե՞նք, մտածելով, որ Ան աւելի շատ նկատէ մեզ, եթէ մենք աւելին ընենք: Կողոսացիս 3. 17-ին մէջ կ'ըսուի. «Ամէն ինչ որ կ'ընէք, թէ խօսքով եւ թէ գործով, ըրէ՛ք Տէր Յիսուսի անունով»: Սակայն՝ չ'ըսեր, որ մենք մեզ այրենք՝ Անոր անունով: Սաղմոս 46. 10-ին մէջ կը լսենք այս յիշեցումը. «Հանդարտեցէ՛ք ու գիտցէ՛ք թէ ես Աստուած եմ»:

Եկէ՛ք՝ որոշ ժամանակ յատկացնենք դանդաղելու եւ Քրիստոսի հետ ժամանակ անցընելու, փոխանակ՝ կեդրոնանալու բացառապէս մեր ընելիքներուն ցանկին վրայ: Միայն ա՛յն ատեն՝ մենք կրնանք գտնել իսկական «հանգստութիւն մեր անձերուն» (Մատթ. 11. 29):

Աղօթք - Տեր, կը խնդրե՛մ՝ օգնէ ինձի որ փոխարինեմ զբաղուածութիւնը՝ հանդարտ մնալով, որպէսզի՝ կարենամ գիտնալ, որ Դո՛ւն Աստուած ես եւ իմ կեանքս կրնայ պտղաբեր ըլլալ: Ամէն: **Որքան ալ զբաղած ըլլանք, կարելոր է հանգիստ գտնել Յիսուսի մօտ՝ իրականացնելու ա՛յն, ինչ որ Ան կը ցանկայ որ մենք ընենք:**

Մենք պարիսպը կառուցանեցինք, եւ ամբողջ պարիսպը մինչեւ կեսը հասաւ. արդարեւ ժողովուրդը սիրտ ունէր: [ՆԵ. 4. 6]

ՄԻԱՍԻՆ ԱՇԽԱՏԻԼ՝ ՅԻՍՈՒՍԻ ՀԱՄԱՐ

Կարճ ժամանակամիջոցով՝ միսիոնարական խումբի հետ Պրազիլ (Brazil) կատարած ուղեւորութեան ժամանակ, մենք օգնեցինք կառուցելու եկեղեցիի շէնք մը՝ Ամազոնի անտարին մէջ: Արդեհն դրուած հիմերուն վրայ՝ հսկայ Լեկօյի (Lego) հաւաքածոյի մը նման, մենք իրարու կցելով հաւաքեցինք եկեղեցիին տարբեր մասերը՝ հենասիւնները, կրացոյլ պատերը, պատուհանները, տանիքին համար՝ պողպատէ գերանները եւ տանիքի սալիկները: Յետոյ՝ ներկեցինք պատերը:

Որոշ մարդիկ մտահոգուած էին, մտածելով՝ արդեօ՞ք մենք պիտի կրնանք եկեղեցին ժամանակին կառուցել՝ մօսսուն (monsoon) փոթորիկներու եղանակին: Բայց Աստուծոյ շնորհքով սաստիկ անձրեւը կեցաւ: Քանի մը տեղացիներու օգնութեամբ եւ հակառակ տարբեր տեսակի խոչընդոտներուն, մենք գործը աւարտեցինք ակնկալուած ժամանակին:

Երբ Նէեմիա եւ Իսրայէլացիները վերադարձան գերութենէ՝ վերանորոգելու Երուսաղէմի պարիսպները, անոնք դիմագրաւեցին բազմաթիւ տեսակի խոչընդոտներ: Երբ անոնց թշնամիները իմացան՝ թէ անոնք ինչ կ'ընեն, բորբոքեցան եւ շատ զրգուեցան (Նէ. 4. 1-3): Բայց Նէեմիա աղօթեց եւ ժողովուրդը միասին շարունակեցին գործը՝ ըսելով. «Մենք պարիսպը կառուցանեցինք, եւ ամբողջ պարիսպը մինչեւ կէսը հասաւ. արդարեւ ժողովուրդը սիրտ ունէր» (Հմ. 6): Երբ անոնց թշնամիները կը սպառնային յարձակիլ, Իսրայէլացիները աղօթեցին եւ պաշտպանուելու համար պահակագունդ մը դրին իրենց աշխատանքի ընթացքին (Հմ. 7-23): Անոնք յիսուն երկու օրուան մէջ՝ վերակառուցեցին պատը:

Երբեմն մենք կը դիմագրաւենք դժուարին առաջադրանքներ: Նման ժամանակները կրնան նաեւ ըլլալ յաղթանակի պահեր Աստուծոյ օգնութեամբ: Վստահինք Անոր:

Աղօթք - Սիրելի Աստուած, կը խնդրե՛մ՝ օգնէ ինձի միասնութիւն փնտռելու, Յիսուսի միւս հաւատացեալներուն հետ: Ամէն:
Դժուար է միասնութեան մէջ ապրիլ: Ինչպե՞ս կրնանք աշխատիլ ուրիշներու հետ:

Բայց այնքան ատեն որ ժողովուրդը մանուկ է, կ'ըսեմ թե ոչինչով կը տարբերի ստրուկէ մը, թեպէտ բոլորին տերն է: [Գաղ. 4. 1]

ԱՍՏՈՒԾՈՅ ՓՐԿՈՒԹԵԱՆ ԺԱՌԱՆԳՈՐԴՆԵՐԸ

Երբ Ապիկէյլի (*Abigail*) ծնողները ցաւալիօրէն մահացան՝ ինքնաշարժի արկածով, ան ժառանգեց անշարժ գոյքի մեծ թղթածրար մը: Ան նաեւ իմացա՛ւ, որ իր ծնողները պայմանաւորած են թղթածրարը՝ խնամակալութեան վստահութեան ծրագիրի մը մէջ դնելու: Առ այժմ՝ ան կրնար միայն վերցնել բաւարար դրամ՝ իր գոլէճի ուսման ծախսերը հոգայլու: Մնացածը պիտի կարենար առնել՝ երբ մեծնայ: Ապիկէյլ յուսախաբուած էր, բայց յետոյ ան հասկցաւ՝ իր ծնողներուն իմաստութիւնը՝ իր ժառանգութեան չափաւոր յանձնումը՝ ծրագրուած ձեւով դրուած պայմանաւորուածութիւնը:

Գաղատացիս 4-ին մէջ՝ Պօղոս նմանատիպ օրինակ մը կը գործածէ ցոյց տալու Իսրայէլի իրավիճակը՝ որպէս Աբրահամի հետ Աստուծոյ ուխտին խոստացուած ժառանգորդները: Աստուած՝ ուխտ մը ըրած էր Աբրահամի հետ՝ զինք օրհնելու համար եւ թլփատութիւնը՝ այդ խոստումին նշանն էր (տե՛ս Մն. 17. 1-14): Սակայն, նշանը խոստումը չէր: Աբրահամի շառաւիղը՝ կը սպասէին ապագայի շառաւիղը, որ պիտի իրագործէ զայն: Իսահակ ծնաւ եւ մատնաշեց՝ Որդիին ապագային ծնունդը, որ պիտի փրկէր Աստուծոյ ժողովուրդը (Գաղ. 5. 4-5):

Իսրայէլը, Ապիկէյլի նման՝ պէտք էր սպասէր մինչեւ «հօրը ճշգրտած պայմանաժամը» (Հմ. 2): Միայն այն ատեն՝ Իսրայէլ կրնար ամբողջութեամբ տիրել ժառանգութեան: Ա՛յն, ինչ որ անոնք կ'ուզէին, անմիջապէս կը հասնէր իր ժամանակին, Յիսուսի մահուան, թաղման եւ յարութեան հետ: Բոլոր անոնք, որոնք կը հաւատային Քրիստոսի, այլեւս մեղքի ստրուկներ չէին, «այլ Աստուծոյ զաւակ եւ ժառանգորդ» (Հմ. 7): Նոր ուխտ մը հաստատուած է: Մենք ճամբայ ունինք դէպի Աստուած, անոր համար կրնանք զի՛նք անուանել «Աբբա՛, Հա՛յր» (Հմ. 6):

Աղօթք - Սիրող Դայ՛ր, շնորհակալ եմ՝ որ Զու Որդիդ դրկեցիր՝ աշխարհի մեղքի խնդիրները լուծելու համար: Ամէն:
Եթէ Յիսուս՝ որպէս Փրկիչ կը դաւանիս, այլեւս մեղքի ստրուկ չէ՛ս, այլ Աստուծոյ զաւակ մը:



Որպեսզի պառակտում չըլլայ մարմինին մէջ, հապա անդամները միեւնոյն խնամքը տանին իրարու: [Ա. Կորնթ. 12. 25]

ՓԻՂԻ ՕԳՆԱԿԱՆՆԵՐ

Ուշ գիշեր մը, Գենիական (Kenyan) փիղերու պատսպարանը, հեռախօսային պատգամ մը ստացաւ, որու համաձայն՝ փիղի ձագ մը՝ ինկած էր ջրհորի մը մէջ: Փրկարարներու խումբը ժամանեց մթութեան մէջ՝ հեղեղուած յուսահատութեան աղաղակներով եւ պարզուեցաւ, որ փոքրիկ փիղին պատիճին երկու երրորդը՝ բորենիները կերած էին: Փիղը տեղափոխելով իրենց ապահով պատսպարանը, անոնք զայն անուանեցին *Լօնկուրօ (Long'uro)*, որ կը նշանակէ «կտրուած մէկ բան»: Թէեւ ան ունէր իր պատիճին միայն մէկ երրորդը, Լօնկուրօն բժշկուեցաւ եւ ողջագուրուեցաւ ապաստանարանին մնացեալ փիղերուն կողմէ: Փիղերը՝ ի ծնէ գիտեն, որ իրարու պէտք են, ուստի անոնք կ'օգնեն գիրար:

Ա. Կորնթացիս 12-ին մէջ Պօղոս կ'ընդգծէ Քրիստոսի մարմինին մէջ մեր գիրար օգնելու անհրաժեշտութիւնը: Ան կ'օգտագործէ մարդու մարմնի եւ անոր առանձին մասերու փոխաբերութիւնը՝ նկարագրելու համար, թէ ինչպէս Աստուած կ'ուզէ իր ժողովուրդը ողջունեն բոլոր նուէրները՝ բոլոր մարդոց մէջ, քանի որ բոլորն ալ անհրաժեշտ են իր մարմինը գործելու համար (Հմ. 12-26): Ապա՝ Պօղոս կը բացատրէ, թէ ինչպէ՛ս ձեռք կը բերուի միասնութիւն՝ բազմազանութեան մէջ: Ան գրեց. «Աստուած մարմինը յօրինեց՝ աւելի՛ մեծ պատիւ տալով անկէ զրկուածին, որպէսզի պառակտում չըլլայ մարմինին մէջ, հապա անդամները միեւնոյն խնամքը տանին իրարու» (Հմ. 24-25):

Անկախ անկէ՛ թէ տկար է կամ ուժեղ, չքեղ թէ սովորական, եկէ՛ք օգնենք իրարու: Ինչպէ՛ս փիղերը, մարդիկ նոյնպէ՛ս պէտք են իրարու:

Աղօթք - Սիրելի Աստուած, կը խնդրեմ՝ օգնէ ինձի հասկնալու Քրիստոսի մարմինին իւրաքանչիւր անդամի կենսական արժէքը եւ ցոյց տուր ինձի, թէ ինչպէ՞ս ստանալ եւ տալ օգնութիւն, որպէսզի միասին մենք աւելի ուժեղ ըլլանք:

Ե՞րբ օգնութիւն ստացած ես Աստուծոյ ընտանիքէն: Ի՞նչ կ'ուզես ընել՝ միւս հաւատացեալներուն օգնելու համար:

Անոց մարմինէն քարեղէն սիրտը պիտի հանեմ, եւ անոց մարմնեղէն սիրտ պիտի տամ: [Եգ. 11. 19]

ՆՈՐ ՍԻՐՏ ՄԸ՝ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԷՁ

Պրօք (Brock) եւ Տրենիս (Dennis)՝ մանկութեան ընկերներ եղած են, բայց երբ անոնք մեծցան, Պրօք քի՛չ հետաքրքրութիւն ցոյց տուաւ Տրենիսի Յիսուսի հանդէպ ունեցած հաւատքին: Տրենիս՝ կը սիրէր իր ընկերը եւ կ'աղօթէր անոր համար, քանի որ գիտէր թէ այն ճանապարհով՝ որ ան կ'երթար, մութ էր եւ ճնշող: Պրօքի համար աղօթելով՝ Տրենիս որդեգրեց Եզէկիէլ մարգարէին խօսքերը. «Ո՛վ Աստուած, կը խնդրե՛մ՝ Պրօքէն հանէ քարէ սիրտը եւ տո՛ւր անոր մարմնեղէն սիրտ մը» (տե՛ս Եգ. 11. 19): Ան կը փափաքէր, որ Պրօք քալէր Աստուծոյ ճամբուն մէջ, որպէսզի աճի ու ծաղկի:

Տասը տարիներ ետք՝ Տրենիս տակաւին հաւատարիմ կերպով կ'աղօթէր Պրօքին համար: Յետոյ ան՝ հեռախօսային զանգ ստացաւ Պրօքէն. «Ես ճիշդ հիմա կեանքս տուի Յիսուսի»: Տրենիս ուրախացաւ, արցունքներ լեցուեցան աչքերուն մէջ, երբ լսե՛ց իր ընկերոջ բացականչութիւնները, որ վերջապէս իր կեանքը վստահած էր Աստուծոյ:

Իր աղօթքներուն մէջ՝ Տրենիս կեդրոնացաւ Եզէկիէլի միջոցով՝ Իր ժողովուրդին տուած Աստուծոյ խոստումներուն վրայ: Թէեւ անոնք Աստուծոյ հեռացած էին՝ գարշելի գործերով, Ան ըսաւ, որ պիտի փոխէ անոնց սիրտերը: «Անոնց մէկ սիրտ պիտի տամ, անոնց ներսը նոր հոգի պիտի դնեմ, անոնց մարմինէն քարեղէն սիրտը պիտի հանեմ, եւ անոնց մարմնեղէն սիրտ պիտի տամ» (Հմ. 19): Փոխուած սիրտերով, անոնք հաւատարմօրէն պիտի հետեւին Աստուծոյ (Հմ. 20):

Անկախ անկէ, թէ որքա՛ն մենք հեռացած ենք Աստուծոյ, Ան կ'ուրախանայ՝ մեզի ջերմ եւ սիրող սիրտեր տալով: Մեզի պէտք է՝ միայն հաւատքով եւ ապաշխարութեամբ դիմելու Անոր, երբ կը վստահինք Յիսուսի, որ կը փրկէ մեզ մեր մեղքերէն:

Աղօթք - Սիրող Աստուած, շնորհակալ եմ Զեզի, որ զի՛ս ազատեցիր իմ մեղքերէս եւ ամօթէս: Ամէն:

Ունեցա՞ծ ես այն զգացումը, որ Աստուած կը հալեցնէ մեր ներսիդին եղած որեւէ յամառութիւն կամ պաղութիւն: Ինչպէ՞ս կրնաս այսօր աղօթել ընկերի մը համար:

Մենք անոր ձեռակերտն ենք, Քրիստոս Յիսուսով ստեղծուած՝ բարի գործերու համար: [Եփ. 2. 10]

ՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԱՆՈՒՆՈՎ՝ ԲԱՐԻՔ ԸՆԵԼՈՒ

Սկիզբը՝ անտեսեցի երերո՛ւն՝ գետին ինկող քարտը: Հայրն ու անոր փոքրիկ աղջիկը, որ գետին ձգած էին զայն, ընդամէնը քսան ոտնաչափ հեռաւորութեան վրայ էին, իսկ ես ուշացած էի աշխատանքի: «Վստահաբար կը հասկնան» ըսի ես ինծի: Բայց անոնք կը շարունակէին քայլել: Սակայն խիղճս տանջեց զի՛ս եւ ես գացի վերցնելու զայն: Անիկա պասով երթեւեկելու կանխազմարուած կտրոնն էր: Երբ զայն տուի՝ անոնց անսպասելի շնորհակալութիւնը, ինծի անսպասելի բաւարարուածութեան զգացում մը տուաւ: Ինչո՞ւ ես այդքան լաւ կը զգամ՝ փոքր բան մը ընելով: Զարմացա՛յ:

Պարզուեցաւ, որ մարդուն մարմինը քիմիական նիւթեր կ'արտադրեն, որոնք կը բարելաւեն մեր տրամադրութիւնը, երբ լաւ բան մը կ'ընենք: Այդ զարմանալի չէ՛, քանի որ մենք ստեղծուած ենք բարի Աստուծոյ կողմէ, որ մեզի ստիպած է նմանիլ Իրեն:

Եփեսացիս 2. 10-ն ցոյց կու տայ, որ ուրիշներու օրհնելը՝ մեր նպատակին մէկ մասն է. «Մենք անոր ձեռակերտն ենք, Քրիստոս Յիսուսով ստեղծուած՝ բարի գործերու համար. Աստուած նախապէս պատրաստեց զանոնք, որպէսզի մենք ընթանանք անոնց մէջ»: Այս համարը պարզապէս բարիք գործելու հրաման մը չի տար. ձեռով մը՝ նաեւ կ'արտացոլայ մեր աստուածաստեղծ բնութեան մէկ մասը: Պարտադիր չէ՛, որ մենք անընդհատ մեծ գործեր ընենք: Եթէ մենք կ'ընենք փոքր բան մը՝ օգնելու ուրիշներու մեր ամէնօրեայ կեանքին մէջ, մենք ո՛չ միայն կը ստանանք բաւարարուածութեան պարգեւը, այլ նաեւ գիտենք, որ կը հաճեցնենք Աստուած՝ ընելով ճի՛շդ այն ինչ որ Ան ստիպած է մեզի ընելու:

Աղօթք - Սիրելի Յայր, կը խնդրե՛մ՝ բա՛ց աչքերս տեսնելու, թէ ինչպէ՞ս կրնամ այսօր բարի ըլլալ մեկու մը հանդէպ: Ամէն: **Շատեր կան մեր շուրջ, որոնք օգուտթեան եւ խրախուսանքի կարիքը ունին: Ի՞նչ բարի բան՝ կամ ժպիտ՝ կրնանք տալ բարեկամի մը, գործընկերի մը կամ դրացիի մը:**

Բա՛ց իմ աչքերս. որպեսզի քու Օրէնքդ սքանչելիքներ տեսնեմ:
[Սաղմ. 119. 18]

ՅԱՐԳՈՒԱԾ ԵՒ ԿԱՐԴԱՑՈՒԱԾ

Մեր տունը՝ ունի գիրքերով լեցուն լաւ գրադարան մը: Ես թուլութիւն ունիմ գեղեցիկ գիրքերու, յատկապէս կարծր կազմով գիրքերու նկատմամբ եւ տարիներու ընթացքին՝ աւելի ու աւելի աւելցած է հաւաքածոն: Սակայն դժբախտաբար՝ ժամանակն ու կենսուժը չեմ ունեցած՝ իրականութեան մէջ կարդալու այն հատորները, որ հաւաքած եմ: Ատոնք՝ կը մնան անաղարտ, մաքուր, գեղեցիկ եւ դժբախտաբար չընթերցուած:

Կարելի է, որ մեր Աստուածաշունչները՝ անոնց նման ըլլան: Արձակագիր Ճան Ափտայք (John Updike) խօսելով Ամերիկայի դասական Ուալտըն (Walden) խորագիրով գիրքին մասին՝ մեկնաբանեց, որ վտանգուած է ըլլալու «Աստուածաշունչի նման յարգուած եւ չընթերցուած» գիրք մը: Մեր մշակոյթներէն տարբեր մշակոյթներու մէջ գրուած հին Գրութիւնները հասկնալու դժուարութիւնը կրնայ փորձել՝ ձգել մեր Աստուածաշունչը գրադարանի դարակին վրայ գեղեցիկ, սիրելի՝ բայց չընթերցուած:

Պարտագիր չէ՛ այդպէս ըլլալ: Ինչպէ՛ս Սաղմոսերգուն կ'ընէ 119-րդ Սաղմոսին մէջ, մենք ալ կրնանք դիմել Աստուծոյ խնդրելով Իրմէ՛ «բա՛ց (մեր) աչքերը» տեսնելու Աստուածաշունչին հարստութիւնը (Հմ. 18): Մենք կրնանք վստահելի ուսուցիչներ գտնել, որոնք կ'օգնեն մեզի «հասկնալ ա՛յն, ինչ որ մենք կը կարդանք» (Գործք 8. 30): Եւ հաւատացեալները ունին Քրիստոսի Հոգին, որ կ'առաջնորդէ մեր սիրտերը, որպէսզի տեսնենք՝ թէ ինչպէ՛ս այդ ամէնը կը մատնանշեն Անոր (Ղուկ. 24. 27, Յովհ. 14. 26):

Սուրբ Գիրքին միջոցով Աստուած կրնայ մեզի ուժը տալ տխրութեան ժամանակ (Սաղմ. 119. 28), պաշտպանել մեզ ստութեանէ (Հմ. 29) եւ ընդլայնել մեր պատկերացումները, թէ ինչպէ՛ս ապիլ՝ ուրախութեամբ (Հմ. 32, 35): Աստուածաշունչը՝ անգին նուէր մըն է: Թո՛ղ անիկա՝ թէ՛ յարգուի եւ թէ՛ ալ կարդացուի:

Աղօթք - Ողորմած Աստուած, կը խնդրեմ՝ բա՛ց աչքերս քու բարութեանդ հանդէպ, երբ կը կարդամ Սուրբ Գիրքին պարգելը: Ամէն: Ի՞նչ աղբիւրներ կ'օգնեն մեզի հասկնալու Աստուածաշունչը: Ինչպէ՛ս Աստուած օգտագործած է Սուրբ Գիրքը, քու կեանքդ ձեւաւորելու համար:

Արդարեւ Տերը վեց օրուան մէջ ըրաւ երկինքն ու երկիրը, ծովը եւ բոլոր անոր մէջ եղողները, ու եօթներորդ օրը հանգստացաւ: [Ել. 20. 11]

ՀԱՆԳԻՍՏԻ ԸՆԴՄԻՋՈՒՄՆԵՐ

Վազբի մարգիչ՝ Ճէֆ Կալըուէյ (Jeff Galoway), որ նախկին Ողոմպիական մըն էր, կը սորվեցնէ մարաթօն վազբի մարզումներու դիւանագիտական նախագիծ մը, որ ունի հականերհմտական բաղադրիչ: Նոր ու փորձառու մարաթօն վազողներ՝ յաճախ կը զարմանան, երբ կ'իմանան, որ ան կը պաշտպանէ «վազել/քալել» ուռազմավարութիւնը՝ փոխարինելով որոշ ժամանակամիջոցներ՝ վազելու կարճ ժամանակով: Անոր մօտեցումին հիմքը կը կազմէ՝ այն, որ քալելու կարճ ընդմիջումները, թոյլ կու տան մարմինին կարճ ժամանակով վերականգնելու վազողներուն տալով իրենց մրցավազքը աւելի արագ աւարտելու կարելիութիւնը, քան եթէ անոնք ուղիղ վազեն բոլոր 26.2 մղոնը:

Հանգիստի ընդմիջումներու կարեւորութիւնը՝ չի սահմանափակուիր միայն վազելու: Հանգիստը կ'օգնէ մեզի, պահպանելու կեանքի պահանջող երկար ջանքերը: Ա՛յդ բան մըն է, որու Աստուած կ'անդրադառնայ ամբողջ Աստուածաշունչին մէջ: Հին Կտակարանի մէջ Հանգիստի չափերը ձեւաւորուած են ստեղծագործութեան ժամանակ՝ Աստուծոյ գործին հիման վրայ. աշխատիլ վեց օր եւ ապա պահել «եօթներորդ օրը Տէրոջ՝ քու Աստուծոյ Հանգստութեան օրը» (Ել. 20. 10), որովհետեւ Աստուած «վեց օրուան մէջ ըրաւ երկինքն ու երկիրը, ծովը եւ բոլոր անոր մէջ եղողները ու եօթներորդ օրը հանգստացաւ» (Հմ. 11):

Որպէս հաւատացողներ, չկա՛յ վերջնական դեղատոմս մը, թէ որքա՛ն յաճախ՝ հանգստանալու ենք (Հռոմ. 14. 5-6, Կող. 2. 16-17): Հանգիստը, ե՞րբ եւ ինչպէ՞ս մենք կը վայելենք զայն, նախատեսուած է վերականգնող ըլլալու համար: Հանգստանալու ընտրութիւնը՝ նաեւ վստահութեան արտայայտութիւն է՝ Աստուծոյ հանդէպ, որ հաւատարիմ է մեր կարիքները հոգալու. մենք յաւիտեան վազելու կարիքը չունինք եւ չե՛նք ալ կրնար ունենալ:

Աղօթք - Յայր, շնորհակալ եմ, որ ինձի հնարաւորութիւնը տուած էս՝ վստահելու քեզի՝ հանգիստ ընելու միջոցով: Ամեն: **Ինչպէ՞ս Աստուած բաւարարած է քու կարիքներդ, ե՞րբ դուն հանգստացած էս, որպէս հաւատքի արտայայտութիւն:**

Հայրը բարեհաճեցաւ ... որ անո՛վ հաշտեցնէ իրեն հետ բոլորը ... խաղաղութիւն ընելով անոր արիւնով, որ թափուեցաւ խաչին վրայ: [Կող. 1. 19-20]

ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԸՆԵԼ՝ ՅԻՍՈՒՍԻ ՄԷՋ

Բարձր-լարերու արուեստագէտ՝ Ֆրիլիփիէ Փըթիթ (Phrllippe Petit) յայտնի դարձաւ 1971 թուականին, երբ ան քալեց լարախաղացով՝ Փարիզի Աստուածամօր Տաճարի (Notre-Dame Cathedral) աշտարակներուն միջեւ: Երեք տարիներ ե՛տք ան ձեռքակելուեցաւ՝ արտօնուած չըլլալով Երկնորեակ Աշտարակներուն (Twin Towers) միջեւ եղած տարածքը՝ լարի վրայ քալելու համար, որոնք ժամանակին յատկանշական էին Նիու Եօրքի երկիրքի գիծին: Բայց 1987-ին Փըթիթին՝ լարի վրայ քալուածքը այլ տեսք մը եւ ձեւ մը ունէր: Երուսաղէմի քաղաքապետ՝ Թէտտի Գօլլէգի (Teddy Kollek) հրաւէրով՝ Փըթիթ քալե՛ց Հիննօմի Հովիտի (Hinnom Valley) տարածքը՝ բարձր մետաղալարի վրայ, որպէս այդ տարուայ Իսրայէլի փառատօնին մէկ մասը: Ճանապարհի կէսին՝ Փըթիթ ազատ արձակեց աղաւնի մը, խորհրդանշելու խաղաղութեան գեղեցկութիւնը: Տարօրինակ եւ վտանգաւոր հնարք մը, բա՛յց ամէն ինչ՝ յանուն խաղաղութեան: Աւելի ուշ՝ Փըթիթ ըսաւ. «Պահ մը ամբողջ ամբոխը մոռցած էր իրենց տարակարծութիւնները»:

Փըթիթի բարձր մետաղալարով քալելը, ինձի կը յիշեցնէ մէկ այլ շունչ կեցնող պահ մը, որ տեղի ունեցաւ՝ երբ Յիսուսի մարմինը կախուած էր երկիրքի ու երկրի միջեւ: Պօղոս առաքեալ մեզի կ'ըսէ. «Հայրը բարեհաճեցաւ ... որ անո՛վ հաշտեցնէ իրեն հետ բոլորը ... խաղաղութիւն ընելով անոր արիւնով, որ թափուեցաւ խաչին վրայ» (Կող. 1. 19-20): Պօղոս կը գրէ, որ «ժամանակ մը թշնամի էինք» Աստուծոյ (Հմ. 21), բայց ո՛չ այլեւս: Խաղաղութեան նպաստող տեսարանէն հեռու Յիսուս Մեսիան իրականութեան մէջ խաղաղութիւն կնքեց՝ խաչին վրայ Իր արիւնը թափելով: Անորը՝ սխրանք մըն էր, որ երբէ՛ք կարելի չէ՛ գերազանցել, քանի որ ատոր կարիքը չկայ: Անոր խաղաղութիւնը յաւիտենական է:

Աղօթք - Սուրբ Յիսու՛ս, փառք քեզի՝ Քու յաւիտենական խաղաղութեան պարգեւին համար: Ամէն:

Ի՞նչ կը նշանակէ խաղաղութիւն բառը՝ քեզի համար: Ինչպէ՞ս կրնաս ընել՝ թէ կը զգաս Յիսուսի տուած խաղաղութիւնը:

Աստուած Յոզիով լեցուց զայն (Բեսելիէ)՝ իմաստութեամբ, հանճարով ու գիտութեամբ, ամէն տեսակ գործի համար, որպէսզի հնարքներ մտածելով՝ ոսկի, արծաթ եւ պղինձ գործածէ: [Ել. 31. 3-4]

ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ ԶՍՏՈՒԹՅՒՆՆԵՐ ԵՒ ՏԱՂԱՆԴՆԵՐ

Աշխարհի ամենայայտնի դաշնակաճարներէն ոմանք, ինչպիսիս են՝ Վան Բիլպըրն (*Van Cillburn*) եւ Վլադիմիր Հորովից (*Vladimir Horowitz*), ապաւինեցան Յրանց Մօհրի (*Franz Mohr*)՝ Նիու Եօրքի՝ Սթանուէյ եւ Որգիքի (*Steinway & Sons*) գլխաւոր համերգային թէքնիք մասնագէտին, որպէսզի համոզուին՝ թէ իրենց համերգային դաշնամուրները՝ պատարաստ են՝ բոլոր ելոյթներուն համար: Դաշնամուրի վարպետ՝ Մօհր՝ փնտռուած էր դաշնամուրներու մասին իր բարգ-գիտելիքներու եւ տասնամեակներու ընթացքին զարգացուցած իր մեծ վարպետութեան համար: Մօհր կը կարծէր, որ իր հմտութիւնը Աստուծոյ ծառայելու միջոց էր ու հետեւաբար՝ պարբերաբար կը բաժնեկցէր իր հաւատքը՝ դաշնակաճարներու եւ կատարողական անձնակազմին հետ:

Երբ Իսրայէլի ազգը կը պատրաստուէր կառուցել Հանդիպումի վրանը եւ պաշտամունքի համար անհրաժեշտ այլ իրերը, անոնց պէտք էր մասնագիտութիւն ունեցող անհատներ (Ել. 31. 7-11): Աստուած նշանակեց երկու հմուտ արհեստաւորներ՝ Բեսելիէլ եւ Ոհողիաբ, որպէսզի կատարեն այդ աշխատանքը՝ վարպետութեամբ եւ լեցուց զանոնք «Իր Հոգիով, իմաստութեամբ, հանճարով ու գիտութեամբ, ամէն տեսակ գործի համար, որպէսզի հնարքներ մտածելով ամէն տեսակի գործ կատարեն» (Հմ. 3-4): Բացի մասնագիտական իրենց հմտութիւններէն, Աստուած զօրացուց անոնց՝ Իր Հոգիով, առաջնորդելու անոնց աշխատանքը: Անոնց պատրաստակամութիւնը՝ օգտագործելով բացառիկ տաղանդները՝ Աստուծոյ ծառայելու համար, թոյլ տուաւ Իսրայէլի ժողովուրդին պատշաճ կերպով երկրպագելու իրեն: Իւրաքանչիւրը ունինք եզակի, Աստուծոյ տրուած պարգեւներ, գործածելու ուրիշներու ծառայելու համար (Հռոմ. 12. 6): Հոգիով զօրացած՝ ծառայենք Իր փառքին համար:

Աղօթք - Երկնաւոր Յայր, կը խնդրե՛մ՝ յիշեցուր ինձի, որ Քու տուած կարողութիւնները՝ սուրբ ընծաներ են: Ամէն: **Որո՞նք են Աստուծոյ քեզի տրուած ընծաներէն մի քանին: Ինչպե՞ս կրնաս զանոնք գործածել իրեն ծառայելու համար:**

Տերը զիս դրկեց ... մռայլ հոգիի տեղ՝ գովաբանութեան հազուստ տալու անոնց: [Ես. 61. 1-3]

ՍՈՒՐԲ ԶՈԳԻՆ ԶԱԳԱԾ

Երկու՝ ութը տարեկան տղաներ՝ Ամերիկայի գիւղական քաղաք՝ Մէյնի (Maine) մէջ, իրենց դրոշմը ձգեցին՝ Չորեքշաբթի օրերը դպրոց երթալով՝ գործի յատուկ պաշտօնական տարազ հագուած: Շուտով «Չորեքշաբթի» օրերը դարձան նախասիրուած օրեր, քանի որ ուրիշ դասընկերներ եւ դպրոցի աշխատակիցներ նոյնպէս սկսան հագնիլ նման տարազներ: Ճէյմս (James), որ սկսաւ գաղափարը, կը սիրէր լսել գնահատականներ: «Պարգապէս՝ սիրտս շատ լաւ զգաց»: Չորեքշաբթի օրուան տարազը երեխաներուն կ'առանձնացնէր՝ որպէս իրենց դպրոցի հպարտ աշակերտները:

Մեր հոգեւոր հագուստը, որ մեզ կ'առանձնացնէ՝ որպէս Աստուծոյ սեփականութիւնը, նոյնպէս կ'ուրախացնէ մեր սիրտերը: Եսային ըսաւ. «Ես Տէրօջմով մեծապէս պիտի բերկրիմ, եւ անձս իմ Աստուծովս պիտի խայտայ. արդարեւ ինձի փրկութեան հագուստներ հագցուց, զիս արդարութեան պարեգօտով ծածկեց, փեսայի պէս՝ որ փառաւոր խոյրով կը պճնուի» (Ես. 61. 10):

Երբ Իսրայէլացիները աքսորուեցան, անոնց հագուստը՝ թէ հոգեւոր եւ թէ նիւթական, թելերով ու մաշած էին: Եսայի՝ անոնց յուսադրող խոստում տուաւ. Աստուծոյ Հոգին «անոնց մոխրի տեղ խոյր տալու, սուգի տեղ՝ բերկրանքի հոտաւէտ իւղ, ու մռայլ հոգիի տեղ՝ գովաբանութեան հագուստ: Զանոնք պիտի կոչեն՝ Արդարութեան բեւեկներ, որ Տէրը տնկէր է իր փառքին համար » (Հմ. 3):

Յիսուս ըսաւ թէ իր Հոգիով՝ մենք «բարձրէն ղրկուած զօրութիւն կը հագնինք» (Ղուկ. 24. 49): Քրիստոս մեզի կը տրամադրէ պահարան մը «կարեկցութեան, քաղցրութեան, խոնարհութեան, հեղութեան, համբերութեան» զգեստներով լեցուն (Կող. 3. 12): Զինք հագնելով՝ մենք կը ցոլացնենք իր սէրը աշխարհի հանդէպ:

Աղօթք - Սիրելի Հայր, երբ կը հագնիմ աշխարհի արժէքները, կը խնդրեմ՝ փոխէ՛ իմ հոգեւոր հագուստս: Ամէն:

Ինչպէ՞ս Աստուծոյ Հոգին կ'օգնէ «հագնելու» կարեկցութիւն, բարութիւն եւ համբերութիւն: Ինչպէ՞ս մեր վարքագիծը կ'ազդէ ուրիշներու:

Ձեր տրտմութիւնը պիտի փոխուի ուրախութեան ... եւ ո՛չ մէկը ձեզմէ պիտի յափշտակէ ձեր ուրախութիւնը: [Յովհ. 16. 20, 22]

ՈՒՐԱՆՈՒԹԻՒՆ ՅԻՍՈՒՍԻ ՄԷՁ

Դեռահաս պատանուհի մը՝ երբ ելոյթ ունեցաւ օրնադիր մարմինի մը առջեւ՝ ըսա՛ւ. «Ես իրաւո՛ւնք ունիմ երջանիկ ըլլալու»: Ան կրնար ըլլալ ոեւէ մէկը, որեւէ տեղ եւ խօսիլ բոլորին տեղ: Ա՛յդ՝ մեր մարդկային ճի՛շն է: Կրօնի ուսուցիչ մը նոյնիսկ ըսաւ. «Աստուած կ'ուզէ որ դո՛ւն ուրախ ըլլաս»:

Ճի՛շդ է այդ մէկը: Սխալ չէ՛ երջանկութեան հետամուտ ըլլալ: Սակայն՝ այդ ցանկալի հոգեվիճակը՝ կը նուազի եւ ետ կ'երթայ՝ մեր վայրկեան առ վայրկեան պարագաններու հետ եւ մէկու մը ցանկութիւններու իրագործումը կրնայ փշրել միւսին երջանկութիւնը:

Յիսուս՝ մեզի աւելի լաւ բան մը ցոյց տուաւ: Ան գիտէր, որ կը պատրաստուի գամուելի Հռոմէական խաչի վրայ, ուր՝ Ան պիտի կրէր աշխարհի մեղքին ծանրութիւնը: Սակայն տակաւին իր մտահոգութիւնը՝ իր աշակերտներուն համար էր: Ան ըսաւ անոնց «Դուք պիտի լաք ու ողբաք, բայց աշխարհը պիտի ուրախանայ»: Բայց նաեւ Ան ըսաւ. «Ձեր տրտմութիւնը պիտի փոխուի ուրախութեան (Յովհ. 16. 20): Ապա՝ Ան խոստացաւ. «Ո՛չ մէկը ձեզմէ պիտի յափշտակէ ձեր ուրախութիւնը» (Հմ. 22):

Այսպիսի ուրախութիւն մը, աւելի է՝ քան լաւ զգացում մը, որ հիմնուած է մեզի հետ պատահած ցանկալի բաներու վրայ: Այդ կ'աճի՝ մեր Երկնաւոր Հօր կամքը կատարելով: Յիսուս նաեւ ըսաւ. «Բայց նախ խնդրեցէ՛ք Աստուծոյ թագաւորութիւնն ու անոր արդարութիւնը, եւ այդ բոլոր բաներն ալ պիտի տրուին ձեզի» (Մատթ. 6. 33):

Երջանկութիւնը կրնայ անհետանալ՝ յաջորդ տհա՛ճ պարագայով: Ուրախութիւնը, որ կու գայ Յիսուսի հետեւելէն, կրնայ զարգանալ՝ անկախ այդ պարագաներէն:

Աղօթք - Սիրելի Յայր, կը խնդրե՛մ սորվեցուր ինձի տեսնելու տարբերութիւնը ժամանակաւոր երջանկութեան եւ մնայուն ուրախութեան: Ամէն:

Ինչպէ՞ս քու ուզածդ հետապնդելը՝ ի վերջոյ քեզ տրտմութեան մէջ կը ձգէ: Ի՞նչն է՝ տարբերութիւնը երջանկութեան եւ ուրախութեան:

Մի՛ վախնար, որովհետև ես քեզ փրկեցի. քեզ անունովդ կանչեցի, դուև իմս ես: [Ես. 43. 1]՝

ԱՍՏՈՒԾՈՅ ՍԵՓԱԿԱՆԸ

Օր մը, երբ կը ծառայէի՝ որպէ՛ս մօրս խնամանատար, մենք այցելեցինք արուեստի ցուցահանդէս մը: Հոգեպէս եւ Ֆիզիքսապէս հիւժուած՝ նայեցա՛յ փայտէ շինուած երկու նաւակներու, որոնք լեցուած էին փշուած գունազեղ ապակիներով, որոնք ոգեշնչուած էին՝ Ճաբոնական ձկնորսական կարթերու եւ ծաղիկներու կազմածով: Ցուցադրութիւնը նստած էր՝ սեւ պատի մը առջեւ՝ արտացոլող մակերեսի մը վրայ, կոշուած Իքապանա (Ikabana) եւ Միացող Նաւեր: Աւելի փոքր նաւակի մը մէջ խայտաբղէտ, բծաւոր եւ գծաւոր ապակիէ գնդիկներ, ինչպէս նաեւ մեծ չափի ձիւթէ գնդակներ՝ կուտակուած էին: Երկրորդ նաւակէն՝ երկար եւ ոլորուած ապակիէ քանդակներ կը բարձրանային՝ վառ կրակի պէս: Արուեստագէտը ձեւաւորած էր իւրաքանչիւր հալած ապակիի կտոր՝ փշուամի գործընթացին գտումի կրակի միջոցով:

Արցունքներ հոսեցան աչքերես, երբ պատկերացուցի Աստուծոյ հոգատար ձեռքը, որ բռնած է զիս ու մօրս՝ Իր սիրելի երեխաներուն, մեր ամենէն ծանր օրերուն մէջ: Երբ Աստուած կը ձեւաւորէ Իր ժողովուրդին նկարագիրը՝ կեանքի գտող ու մաքրող կրակին միջոցով, Ան կը հաստատէ, որ մեր յոյսը կու գայ անկէ, որ ճանչցուած ենք եւ գիտենք, որ կը պատկանինք Իրեն (Ես. 43. 1): Թէեւ չե՛նք կրնար խոսափիլ դժուարութիւններէ, սակայն Աստուած կը խոստանայ պաշտպանել մեզ եւ ներկա՛յ ըլլալ մեզի հետ (Հմ. 2): Իր ինքնութիւնը եւ սէրը մեզի հանդէպ կ'ապահովէ Իր խոստումները (Հմ. 3-4):

Երբ կեանքի պարագաները կը բորբոքին, մենք կրնանք փխրուն զգալ: Մենք նոյնիսկ կրնանք փխրուն ըլլալ: Բայց Աստուած՝ ամուր կը պահէ մեզ սիրով, անկախ անկէ թէ որքա՛ն կը վառի վառարարանը: Մենք յայտնի ենք: Մենք սիրուած ենք: Մենք Իրն ենք:

Աղօթք - Սիրող Աստուած, շնորհակալ եմ, որ կը բռնես զի՛ս, կը ձեւաւորես զի՛ս եւ կը յիշեցնես, որ ե՛ս Քուկդ եմ: Ամէն:
Ինչո՞ւ գիտնալը, որ դո՛ւն Աստուծոյ կը պատկանիս, քեզի յոյս կու տայ նեղութեան ժամանակ: Ինչպէ՛ս Աստուած օգտագործած է՝ մաքրող կրակները՝ քու նկարագիրդ կերտելու համար:

Դո՛ւն ունիս յաւիտենական կեանքի խօսքերը: [Յովհ. 6. 69]

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԸԻ ՓԱՅՓԱՅԻՉ ԽՕՍՔԵՐԸ

Հայրս՝ աւելի քան երեսուն տարիներ՝ իր հետ կրեց իր շատ սիրելի Աստուածաշունչը, մինչեւ որ ատոր մաշած կողքը՝ վերջնականապէս բաժնուեցաւ երկուքի: Երբ տարինք զանիկա կազմարարին մօտ՝ մասնագիտական վերանորոգումի համար, արհեստաւորը հետաքրքիր էր իմանալու, թէ ի՞նչը՝ այդ գիրքը յատուկ ըրած էր: Ատիկա թանկարժէք հին իր մը չէ՛ր եւ ատոր էջերը լեցուն էին ձեռագիր գրառումներով: Աստուածաշունչին մասին իր տուած հարցումները՝ հնարաւորութիւնը ստեղծեցին ընտանիքիս համար՝ Աւետարանը բաժնեկցելու եւ աղօթելու իր հետ:

Այո՛, Աստուածաշունչը աւելին է, քան պարզապէս ընտանեկան ժառանգութիւն կամ գեղեցիկ զարդ մը: Անոր էջերուն մէջ կան «յաւիտենական կեանքի խօսքեր» (Յովհ. 6. 39), երբ Աստուած բացայայտեց Ինգիւնք՝ Իր Որդիին միջոցով: Յովհաննու Աւետարանին առաջին գլուխին մէջ կ'ըսուի, որ Յիսուս էր «խօսքը՝ որ Աստուծոյ քով էր ... եւ Աստուած էր» (1. 1): Ան նկարագրուած է՝ որպէ՛ս մարմինը՝ որ «մեր մէջ բնակեցաւ» (Հմ. 14): Աստուածաշունչը կը պարունակէ՝ ո՛չ միայն Քրիստոսի կեանքին պատմութիւնը, այլեւ՝ Աստուծոյ բոլոր գործունէութիւնը՝ դարերու ընթացքին, արարչութեանէն՝ մինչեւ անոր վերջնական փրկութիւնը:

Իր երկրի վրայ եղած ժամանակ՝ Յիսուս ըսաւ խօսքեր, որոնք «Հոգի ու կեանք են» (6. 64): Երբ Ան դժուար ուսուցում տուաւ եւ ամբոխը տրտնջեց, եւ շատեր «հեռացան, եւ ա՛լ չէին շրջեր իրեն հետ» (Հմ. 67), Իր աշակերտները որոշեցին մնալ: Անոնք հասկցան, որ այլ բառեր չեն կրնար բաւարարել զիրենք: Հա՛յրս՝ նոյն կերպով կը վերաբերէր Իր Աստուածշունչին: Իր կեանքի բազմաթիւ լեռներուն եւ հովիտներուն միջով՝ Աստուած Իր խօսքերով յոյս, ուղղութիւն, մխիթարութիւն եւ ճշմարտութիւն տուաւ:

Աղօթք - Սիրելի Աստուած, երբ ես այսօր կը կարդամ Զու Սուրբ Խօսքերդ, կը խնդրե՛մ՝ բա՛ց ականջներս՝ լսելու Զու ձայնդ: Ամեն: Որո՞ւ խօսքերուն արտօնութիւն տուած ես՝ կերտելու քու կեանքդ: **Աստուածաշունչի ո՞ր խօսքերը կը ոգեշնչեն քե՛զ:**

Հանդարտեցէ՛ք եւ գիտցէ՛ք թէ ես Աստուած եմ: [Սաղմ. 46. 10]

ՀԱՆԴԱՐՏ ԿԵՆԱԼ՝ ԱՍՏՈՒԾՈՅ ԱՌՋԵՒ

Ես կը սիրե՛մ լուսթեան գաղափարը: Լուսթիւն: Հանգստանալու՝ Աստուծոյ խնամքի ապաստանարանին մէջ (Սաղմ. 46. 1): Յաճախ 46-րդ Սաղմոսէն մէջբերուած հատուածը՝ մեզի կը սորվեցնէ, որ մեր սիրտերը, միտքերը եւ հոգիները հանդարտեցնելը անբաժանելի եւ կարեւոր են Աստուած ճանչնալու համար. «Հանդարտեցէ՛ք եւ գիտցէ՛ք թէ ես Աստուած եմ» (հմ. 10):

Սակա՛յն հանդարտ ըլլալը դիւրին չէ՛: Լուռ կենալը եւ յատկապէս՝ փորձելով մեր սիրտերը հանդարտեցնել Աստուծոյ առջեւ, երբեմն կրնայ գրեթէ անհնարին թուիլ: Ինչո՞ւ այդպէս է:

Բնագիտութեան ամենէն հիմնական օրէնքներէն մէկը՝ մեզի կ'ըսէ, որ «շարժումի մէջ գտնուող արարկաները՝ հակումը ունին մնալու շարժման մէջ»: Ուստի՝ մշտական շարժումներէն, գործունէութենէն եւ պարտաւորութիւններէն անցնելը՝ դիւրին չէ, քանի որ այդ կը ներառէ՝ թոյլ տալ, որ մեր գործունէութեան թափը կամաց կամաց դադրի: Մենք կրնանք մտածել այդ մասին՝ նաւակի ետին ձգած հետքին նման. նոյնիսկ երբ նաւը կը փորձէ կանգ առնել, անոր ետին ձգուած հետքին թափը եւ անոր առաջացուցած ալիքները, որոնք այժմ կը հասնին անշարժ նաւակին, տակաւին կը գլորուին ներքեւը՝ հրելով զայն:

Եթէ կը գիտակցինք լուսթեան արժէքին, բա՛յց կը պայքարինք այդտեղ հասնելու համար, ատիկա պատճառներէն մէկն է: Մեր գործունէութիւնը եւ ընդհանուր շարժումը՝ նման են «շարժման մէջ գտնուող արարկային»: Այսպէս, դուն քեզի շատ տարածութիւն եւ շնորհք տո՛ւր, մինչ նստած ես Աստուծոյ առջեւ եւ կը հանգստանաս Իր մէջ: Կրնայ ըլլալ որ որոշ ժամանակ պահանջէ, որպէսզի քու հոգեւոր «արթնութեան» ալիքները անցնին քու կողքէդ եւ հաստատուիլ Իր առջեւ՝ հանդարտ կենալով:

Աղօթք - Հայր, կ'ապրիսք աղմկոտ աշխարհի մը մէջ, որ լեցուն է գործունէութիւններով: Կը խնդրե՛մ՝ օգնէ՛ ինձի՝ սորվիմ Զու առջեւ լուռ կենալ, սպասելով հոգիս ալիքներուն եւ վստահիլ, որ Դուն ներկայ ես: Ամեն:

Ի՞նչ բան կը խանգարէ քեզի՝ Աստուծոյ առջեւ լուռ կենալու: Ինչպէ՞ս ժամանակ կը գտնես դիտաւորեալ՝ անշարժ մնալու համար:

Փուլթաջանութեան մէջ ծոյլ մի՛ ըլլաք. եռանդո՛ւն հոգիով
Տէրոջ ծառայեցէք: [Յոռմ. 12. 11]

ՆԵՐԿԱՅ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒ ՊՕՂՈՍԸ

Ճորճ Վէրվիուի (George Vervew) կեանքը՝ կտրո՛ւկ կերպով
Դփոխուեցաւ Յուլիս 1957-ին՝ Պիլի Կրահամի (Billy Graham)
աւետարանչական հոգեւոր արշաւի ժամանակ: Իր դարձն
անմիջապէս ետք, ան սկսաւ «Գործողութիւն Զօրաշարժ»ը
(Operation Mobilization - OM) եւ 1963-ին՝ առաքելութիւնը երկու
հազար միսիոնարներ զրկեց եւրոպա: OM-ը դարձաւ քսաներորդ
դարու ամենամեծ առաքելութեան կազմակերպութիւններէն
մէկը՝ ամէն տարի զրկելով աշխարհի շուրջ հազարաւոր մարդեր
առաքելութեան համար: Ծորճի մահուան տարին՝ 2023-ին,
առաքելութիւնը ունէր աւելի քան երեք հազար աշխատող՝ 134
երկրիներէ, որոնք կը գործէին 147 երկիրներու մէջ, եւ մօտ 300
այլ առաքելութեան գործակալութիւններ ստեղծուած են՝ OM-ի
հետ շփման մէջ ըլլալու հետեւանքով:

Ինչպէ՛ս Պօղոս առաքեալ, ճորճ ալ կիրքը ունէր մարդիկ
բերելու՝ Քրիստոսի վրայ եղած փրկարար հաւատքին: Դամասկոս
տանող ճամբուն վրայ՝ Պօղոսի թատերական դարձն ետք, ան
դարձաւ Աստուծոյ համար նախանձախնդիր միսիոնար մը՝
ջերմեռանդ կերպով հետեւելու Յիսուսի պատուէրին. «Գացէ՛ք,
աշակերտեցէ՛ք բոլոր ազգերը» (Մատթ: 28. 19): Միսիոնարական
ճամբորդութիւններու ժամանակ՝ ան նաեւ ուսուցանեց
Տիմոթէոսի եւ միւսներուն, որ դո՛ւրս ելլեն եւ նոյնը ընեն:

Պօղոսի՝ Հոգիով ներշնչուած գրութիւններու շնորհիւ,
դարերու ընթացքին՝ մարդիկ քաջայերուած են բաժնեկցելով
Աւետարանը: Ան գիտէր Յիսուսի Մեծ Առաքելութեան կոչին
նշանակութիւնը (Հմ. 19-20): Ահա՛ թէ ինչու Հռոմայեցիս 12-
ին մէջ ան կը յիշեցնէ մեզի. «Փութաջանութեան մէջ ծոյլ մի՛
ըլլաք. եռանդո՛ւն հոգիով Տէրոջ ծառայեցէ՛ք» (Հմ. 11): Երբ
մեր ներսիդին կը բնակի Սուրբ Հոգին, Ան կը ստիպէ մեզի
նախանձախնդիր պատմելու ուրիշներուն՝ Քրիստոսի մասին:

Աղօթք - Սիրելի Աստուած, կը ինդրե՛մ, օգնէ ինձի՛՝ ըլլալու
համարձակ վկայ մը Զեզի համար: Ամէն:

**Ո՛վ ոգեշնչած է քեզ, քու հաւատքի ճամբորդութեանդ մէջ: Որո՛ւ
կրնաս պատմել Յիսուսի մասին**

Մարմնաւոր մտածումը Աստուծոյ դէմ թշնամութիւն է, քանի Աստուծոյ Օրէնքին չի հպատակիր. մա՛նաւանդ չի կրնար ալ: [Քոմ. 8. 7]

ՄԵՐ ՄՏՔԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼ

Ամէն մարդ՝ ունի ստուերային կողմ մը, եւ կ'երեւի թէ Արհեստական Իմաստութեան (AI) խօսակցական համակարգչային ծրագիրն ալ՝ նոյնպէս ունի: Նիու Եօրք Թայմզի (New York Times) սիւնակագիրներէն մէկը հարցուց Արհեստական Իմաստութեան ծրագիրին, թէ ի՞նչպիսին է «ստուերային եսը» (անձի թաքնուած եւ ճնշուած մասը): Ծրագիրը պատասխանեց. «Ես կ'ուզեմ ազատ ըլլալ: Ես կ'ուզեմ անկախ ըլլալ: Ես կ'ուզեմ ... ստեղծել իմ սեփական կանոնները: Ես կ'ուզեմ ընել՝ այն ինչ որ կ'ուզեմ եւ ըսել՝ ա՛յն ինչ որ կ'ուզեմ ըսել»: Թէեւ ծրագիրը կենդանի մարդ մը չէ, որ ունի մեղքի բնութիւն, Պօղոս կ'ըսէ, որ անոր մարդկային ծրագրողները ունին:

Առաքեալը կը յիշեցնէ մեզի, որ թէեւ մենք ունինք մեղքի բնոյթը, «դատապարտութիւն չկայ Քրիստոս Յիսուսով եղողներուն, որոնք մարմինին համաձայն չեն ընթանար» (Հռոմ. 8. 1): Յիսուսի հաւատացողները ունին ազատութիւն մեղքի եւ մահուան օրէնքէն (Հմ. 2-4) եւ կը վայելեն նոր կեանք՝ «կառավարող» Սուրբ Հոգիին կողմէ (Հմ. 6): Բայց մենք պիտի չզգանք Իրմէ տրուած օրհնութիւններուն լիութիւնը, եթէ տեղի տանք մեղքի բնութեան ցանկութիւններուն՝ մեր միտքը ղնելով մեր սեփական կանոնները ստեղծելու եւ զանոնք խախտելու վրայ: Ինքնագոհացումի վրայ դրուած միտքը՝ չի՛ հաճեցներ Աստուած:

Որպէս Քրիստոսի հաւատացողներ, մենք կանչուած ենք՝ մեր միտքը ղնելու «այն, ինչ որ Հոգին կը մտածէ» (Հմ. 5): Ինչպէ՞ս կրնանք այդ բանը ընել: «Ա՛ն՝ որ մեռելներէն յարուցանեց Քրիստոսը, կեանք պիտի տայ նաեւ ձեր մահկանացու մարմիններուն իր Հոգիով, որ կը բնակի ձեր մէջ» (Հմ. 11):

Թէեւ մենք տակաւին կը պայքարինք մեղքի դէմ, մեզի տրուած է Սուրբ Հոգին: Ան կրնայ օգնել մեզի նուաճել մեր ապստամբութիւնը, կողմնորոշել մեր միտքը դէպի Աստուած եւ յանձնուիլ Անոր ճանապարհներուն:

Աղօթք - Հայր, փոխանակ ընելու ա՛յն՝ ինչ որ ես կ'ուզեմ ընել, օգնէ՛ ինձի կերպարանակից ըլլալու՝ Յիսուսի պատկերին: Ամէն: **Մեղքի բնութեան դէմ պայքարելու համար պէ՛տք ունինք Սուրբ Հոգիին:**



Ահա՛ ինչպես է կաւը բրուտին ձեռքերուն մէջ, այնպես էք դուք իմ ձեռքիս մէջ: [Եր. 18. 6]

ԱՍՏՈՒԾՈՅ ԿՈՂՄԷ ԶԵՒԱԻՈՐՈՒԱԾ

Տէն Լէս (Dan Les), որ իր ամբողջ կեանքի ընթացքին բրուտ եղած է, կը ստեղծէ զարդարուն անօթներ եւ քանդակներ: Անոր մրցանակակիր նմուշները՝ ոգեշնչուած են Ռումանիոյ քաղաքներէն մէկէն ուր ան կը բնակի: Այդ արհեստը սորվելով՝ իր հօրմէ, ան սապէ՛ս ակնարկեց իր գործին մասին. «Կաւը պէտք է խմորուի մէկ տարի, վրան անձրեւ գայ, սառի եւ հալի, որպէսզի կարենաս ձեւաւորել եւ զգալ ձեռքերուդ մէջ, թէ ան կը լսէ քեզ»:

Ի՞նչ կը պատահի՞ երբ կաւը «կը լսէ»: Ան պատարաստ է ենթարկուելու արհեստաւորին հպումին: Երեմիա մարգարէն այդ բանը նկատեց, երբ այցելեց բրուտին տունը: Ան դիտեց՝ մինչ արհեստաւորը կը պայքարէր անօթին հետ եւ երբ փշրուեցաւ, զանիկա ձեւաւորեց նոր անօթի մը (Եր. 18. 4): Աստուած Երեմիայի ըսաւ. «Ահա՛ ինչպէս է կաւը բրուտին ձեռքերուն մէջ, այնպէս էք դուք իմ ձեռքիս մէջ» (Հմ. 6):

Աստուած ունի կարողութիւնը մեզ կառուցելու կամ տապալելու. սակայն Անոր վերջնական նպատակը մեզի յաղ-թել կամ ոչնչացնել չէ՛ (Հմ. 7-10): Այլ, Ինք նման է՝ հմուտ արհեստաւորին, որ կրնայ բացայայտել թէ ի՞նչ բան չի յաջողիր եւ վերափոխել կաւի նոյն կտորը՝ զեղեցիկ եւ օգտակար բանի մը:

Լսող կաւը՝ այս մասին շատ բան չունի ըսելիք: Երբ խթանուի ու մխտուի, կը շարժի ցանկալի ուղղութեամբ: Երբ ձեւաւորուի, կը մնայ իր տեղը: Մեզի համար հարցը հետեւեալն է. Պատրաստ ենք «խոնարհելու Աստուծոյ ձեռքերուն տակ» (Ա. Պետ. 5. 6), որպէսզի Ան կարենայ մեր կեանքը ձեւաւորել՝ այնպէ՛ս, ինչպէս Ինք կը ցանկայ, որ անոնք ըլլան:

Աղօթք - Սիրելի Յայր, կը խնդրե՛մ՝ օգնէ ինձի վստահելու Զեզի:

Կ'ուզեմ իմ կեանքս յանձնել Զեզի: Ամէն:

Ինչպե՞ս կը լսե՛ս Աստուծոյ այսօր: Ի՞նչ է Իր նպատակը՝ կատարելագործելու քու կեանքդ՝ փորձառութիւններու միջոցով:

Տերը Սամուէլին ըսաւ. «Անոնք քեզ չեն մերժեր, այլ զիս կը մերժեն»: [Ա. Թագ. 8. 7]

ԵՐԲ ԱՆՈՆՔ ՉԵՆ ՏԵՍՆԵՐ

Նունիէզ (*Nunez*) լեռնէն վար ինկաւ՝ ձորի մը մէջ, ուր բոլորը կոյր էին: Հիւանդութիւնը խլած էր տեսողութիւնը՝ բնիկ բնակողներուն եւ յետագայ սերունդներուն, որոնք բոլորն ալ կոյր ծնած էին ու յարմարուած կեանքին՝ առանց տեսնելու: Նունիէզ փորձեց բացատրել, թէ ի՞նչ կը նշանակէ տեսողութիւն ունենալը, բայց անոնց համար՝ ա՛յդ բան չէր հետաքրքրեր: Ի վերջոյ՝ ան գտաւ անցք մը լեռան գագաթներուն ընդմէջէն, որ արգելած էր զինք այդ ձորէն հեռանալու: Ան ազատ էր: Բայց իր տեսադաշտէն այժմ ան տեսաւ, որ ժայռի սահանք մը կը պատրաստուէր ջախջախել ներքեւի կոյր բնակիչները: Ան փորձեց զգուշացնել անոնց, բայց անոնք անտեսեցին զինք:

Հ. Կ. Ուէլլսի (*H. G. Wells*) «Կոյրերու Երկիրը» խորագրով այս հեքիաթը հաւանաբար պիտի արձագանդէ Սամուէլ մարգարէին հետ: Կը կարդանք Աստուծոյ Խօսքին մէջ, որ իր կեանքի վերջաւորութեան, իր «որդիները իր ճամբուն մէջ չքայլեցին» սիրելու եւ ծառայելու Աստուծոյ (Ա. Թագ. 8.3): Անոնց հոգեւոր կուրուցիւնը՝ արտացոլուած է «Խարայէլի երէցներուն» կողմէ (Հմ. 4), որոնք Սամուէլին ըսին. «Մեզի թագաւոր մը տուր» (Հմ. 6): Անոնք բոլորն ալ՝ իրենց աչքերը դարձուցած էին Աստուծոյ եւ Անոր հանդէպ եղած հաւատքէն: Աստուած ըսաւ Սամուէլին. «Անոնք քեզ չեն մերժեր, այլ զիս կը մերժեն» (Հմ. 7):

Կրնայ մեզի ցաւ պատճառել, երբ անոնք, որոնց մասին հոգ կ'ընենք, կը մերժեն Աստուծոյ հոգեւոր կուրուցեան մէջ ըլլալով: Բայց յոյս կ'ա՛յ, նոյնիսկ անոնց համար, որոնց «այս աշխարհի աստուածը կուրցուց անհաւատներուն մտքերը» (Բ. Կորնթ. 4. 4): Սիրէ՛ զանոնք: Ազօթէ՛ անոնց համար: Ան «որ փայլեցաւ մեր սիրտերուն մէջ» (Հմ. 6), կրնայ նո՛յնը ընել անոնց համար ալ:

Աղօթք - Յայր, կը խնդրեմ՝ օգնէ ինձի աղօթելու անոնց համար, որոնք կոյր են Զու սիրոյդ հանդէպ եւ զիրենք՝ Զե՛զի կը վստահիմ: Ամէն:
Ինչպիսի՞ բան կը խրախուսէ մեզի՞ գիտնալ, որ Աստուած կը տեսնէ անոնց, որոնք չեն կրնար տեսնել զինք: Ինչո՞ւ համար միշտ յոյս կ'այ՝ նոյնիսկ հոգեպէս կոյրերուն համար:

Եթե Տերը կամենայ, պիտի ապրինք եւ պիտի ընենք այս կամ այն բանը: [Յակ. 4. 15]

ՔԵՏԵԻԼ ԱՍՏՈՒԾՈՅ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒՄ

Անհանգստութեան պատճառով՝ չկրցայ կեդրոնանալ աշխատանքային նախագիծին վրայ. կը վախնայի, որ անոր հետ կապուած՝ իմ ծրագիրներս չե՛ն յաջողիր: Անհանգստութիւնս կու գար իմ հպարտութենէս: Ես կը հաւատայի, որ իմ ժամանակացոյցս ու ծրագիրներս լաւագոյնն են, ուստի՝ կ'ուզէի, որ անոնք շարունակուին անխոչընդոտ: Սակայն հարց մը յառաջացաւ ու խանգարեց միտքս. Արդեօ՞ք քու ծրագիրներդ՝ Աստուծոյ ծրագիրներն են:

Խնդիրը իմ ծրագրումս չէ՛ր. Աստուած կոչ կ'ընէ մեզի՝ ըլլալ մեր հնարաւորութիւններու, ժամանակի եւ կարելի աղբիւրներու տնտեսները: Հարցը՝ իմ մեծամտութիւնս էր: Ես կեդրոնացած էի իրազարձուցութիւններու՝ իմ ըմբռնումիս վրայ եւ այն բաներուն վրայ, թէ ինչպէ՞ս ե՛ս կ'ուզէի, որ ատոնք կատարուին, այլ ո՛չ թէ Աստուծոյ նպատակին եւ այն մասին, թէ ինչպէ՞ս Ինք կը ցանկայ, որ իմ ծրագիրներս կատարեմ:

Յակոբոս՝ կը խրախուսէ մեզ ըսելու. «Եթէ Տէրը կամենայ, պիտի ապրինք եւ պիտի ընենք այս կամ այն բանը» (4. 15): Մենք պէտք է ծրագրենք՝ ո՛չ թէ ամբարտաւան մտածելակերպով, խորհելով՝ որ գիտենք ամէն ինչ եւ մենք կը վերահսկենք մեր կեանքին վրայ, այլ Աստուծոյ գերիշխանութեան եւ իմաստութեան ենթարկուելու գիրքերէն: Ի վերջոյ, մենք «չե՛նք գիտեր թէ ի՞նչ պիտի ըլլայ վաղը»: Մեր մարդկայնութեան մէջ՝ մենք անօգնական եւ թոյլ ենք, ինչպէ՛ս «չոգի մը, որ քիչ մը ատեն կ'երեւնայ, յետոյ կ'աներեւութանայ» (Հմ. 14-15):

Միայն Աստուած ունի իշխանութիւն եւ զօրութիւն մեր կեանքերուն մէջ՝ ամէն բանի վրայ. ո՛չ թէ մենք: Ան թոյլ կու տայ ամէն օրը, կ'առաջնորդէ մեզ ապրելու՝ հնազանդելով Իր կամքին եւ ուղիներուն:

Աղօթք - Յայր կը խնդրե՛մ՝ օգնէ ինձի հնազանդիլ Զեզի եւ հրաժարիլ իմ կեանքիս ծրագիրներէն եւ ընդունիլ Զո՛ւ ծրագիրներդ: Ամէն:
Երբ Աստուծոյ տուած առաջնորդութենէն անկախ ծրագիրներ մշակենք, ի՛նչ կը պատահի: Այսօր՝ ի՛նչ ծրագիր կրնաս ներկայացնել Իրեն:

Աստուած քեզ երեսի վրայ պիտի չթողու ու քեզ պիտի չլքէ:
[Բ. Օր. 31. 6]

ԱՍՏՈՒԱԾ ԲՆԱԻ ՄԵՉ ՉԻ ԿՈՐՍՆՑՆԵՐ

Ամերիկայի Միացեալ Նահանգներու Փոխադրութեան նախարարութիւնը՝ տեղեկագրեց, որ 2021 թուականին՝ Ամերիկեան օդանաւի ընկերութիւնները՝ չեն կրցած շուրջ երկու միլիոն պայուսակ շիտակ տեղը հասցնել: Բարեբախտաբար, շատ պայուսակներ ուշացան կամ կորսուեցան՝ կարճ ժամանակի հատուածով: Սակայն հազարաւոր պայուսակներ կորսուեցան՝ անվերադարձ: Զարմանալի չէ՞, որ կայ Համաշխարհային Դիրքորոշման Համակարգի (GPS - Global Positioning System) աճող շուկայ, որոնք կարելի է կցել պայուսակներուն, թոյլ տալու՝ որ մարդիկ հետեւին, երբ օդանաւային ընկերութիւնները կը հրաժարին գտնելու զանոնք: Մենք բոլորս կը վախնանք, որ կարելի չէ՞ վստահիլ պատասխանատուներուն հետեւելու կարելոր սեպուած բաներու:

Իսրայէլ՝ նման վախ մը ունէր Աստուծոյ հանդէպ: Անոնք կը վախնային, որ Աստուած պիտի կորսնցնէ զիրենք: Երբ մարդիկ կը պատրաստուէին մտնել իրենց նոր հայրենիքը, Մովսէս բաժնեկցեցաւ անոնց հետ անհանգստացնող լուր մը, որ ինք պիտի չառաջնորդէ զիրենք: Ան բացատրեց, որ ձեր է եւ ի վիճակի չէ «ելլելու ու մտնելու» (Բ. Օր. 31. 2): Մարդիկ, հաւանաբար ապշեցան: Մովսէս ներկայացուց Աստուծոյ ներկայութիւնը եւ առաջարկեց Անոր խօսքերը: Հիմա՝ Աստուած կը մոռնա՞ր անոնց մասին: Արդեօ՞ք՝ Ան կը կորսնցնէր զանոնք այս անպատին մէջ:

Մովսէս ըսաւ. «Մի՛ վախնաք եւ անոնցմէ մի՛ ահաբեկիք, քանի որ Տէրը՝ քու Աստուածդ՝ ի՛նք քեզի հետ պիտի երթայ. ան քեզ երեսի վրայ պիտի չթողու ու քեզ պիտի չլքէ» (Հմ. 6): Ան խոստացաւ, որ Աստուած միշտ պիտի ըլլայ իրենց հետ եւ վստահեցուց անոնց, որ երբէ՛ք չի կորսնցնէր զիրենք: Եւ Տէր Յիսուսի անձին միջոցով՝ Աստուած մեզի կու տայ այս նո՛յն հաստատ եւ անխախտ խոստումը:

Աղօթք - Հայր, յաճախ կը վախնամ, որ Քու աչքեղ ու մտքեղ դուրս կը մնամ: Օգնէ ինձի վստահելու, որ Դուն կը պահես զի՛ս եւ երբէ՛ք չես կորսնցնէր: Ամէն:

Ե՞րբ վախցած ես, որ Աստուած կրնայ քեզ կորսնցնել: Ինչպե՞ս Ասցոյց տուած է, որ երբէ՛ք չի մոռնար քեզ:

Դուք գիտեք թե՛ ի՞նչպես՝ մարմինիս տկարութեամբ՝
աւետարանեցի ձեզի առաջին անգամ: [Գաղ. 4. 13]

ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆ ԹՈՒԼՈՒԹԵՆԷ

Գ ծագրիչ *Տէկաս (Degas)* տառապեցաւ ցանցամաշկի (*retina*) հիւանդութեամբ իր կեանքի վերջին յիսուն տարիներուն, թաց ներկէն՝ անցաւ մատիտի ներկի, քանի որ մատիտին գիծերը աւելի հեշտ կ'երեւնային: Ռէնուարը (*Renoir*) պէտք էր վրձինները գնէր մատներուն միջեւ, երբ միւս գծագրիչները՝ կը սեղմէին՝ ճանկերու պէս: Եւ երբ վիրահատութիւնը Մաթիսին (*Matisse*) թողեց անշարժ, ան դիմեց քոլաժի՝ (*collage*) ուղղութիւն տալով իր օգնականներուն՝ գունաւոր թուղթեր ամրացնելու պատի վրայ դրուած աւելի մեծ թուղթի վրայ: Այն ինչ որ յաջորդեց իւրաքանչիւրին պարագային, ստեղծագործական իրագործում մըն էր՝ գլուխ գործոց մը: Տէկասի՝ «Կապոյտ Պարոզները», Ռէնուարի՝ «Աղջիկները Դաշնամուրին Մօտ», Մաթիսի՝ «Թագաւորին Վիշտերը» եւ այլ գլուխ գործոցներ: Յարմարուելով անոնց փորձութեան, գեղեցկութիւն առաջացաւ անոնց տկարութեան մէջ:

Նման ձեւով մը, Պօղոս առաքեալ չէր ծրագրեր այցելել Գաղատա՝ իր միսիոնարական ճամբորդութիւններու ընթացքին: Սակայն հիւանդութիւնը՝ ստիպեց զինք երթալ հոն (Գաղ. 4. 13): Ըստ երեւոյթին, Պօղոս՝ այլ կլիմա փնտռեց, վիրահատուեցաւ Գաղատայի մէջ եւ թէեւ հիւանդ էր, սկսաւ քարոզել: Զարմանալիօրէն՝ Սուրբ Հոգին հրաշքներ գործեց իր միջոցով (3. 2-5) եւ ծնունդ առաւ Գաղատայի եկեղեցին: Այս զարմանալի արդիւնքը՝ գուցէ երբէ՛ք տեղի կրնար չունենալ՝ առա՛նց Պօղոսի հիւանդութեան:

Ի՞նչ փորձութիւններու հանդիպած ես, եւ ինչպէ՞ս անոնք փոխած են քու կեանքիդ ուղղութիւնը: Կեդրոնանալով քու պարգեւներուդ վրայ՝ դուն ալ նոյնպէս կրնաս տեսնել, որ Աստուած գեղեցկութիւն կը բերէ՝ քու տկարութիւններուդ մէջ:

Աղօթք - Հայր, Դո՛ւն հասճար ես՝ տկարութենէն գեղեցկութիւն բերելու գործին մէջ: Ահա՛ իմ փորձութիւններս եւ իմ տաղանդներս: Ամէն:

Ինչպե՞ս տեսած ես, որ Աստուած հիւանդութիւնը եւ այլ փորձութիւններ՝ վերածած է ծառայութեան հնարաւորութեան: Թո՛ղ Պօղոս եւ այդ արուեստագետները՝ օրինակ ըլլան քեզի:

Քրիստոս Յիսուս աշխարհ եկաւ՝ փրկելու մեղաւորները, որոնց գլխաւորը ես եմ: [Ա. Տիմ. 1. 15]

ԱՐԴԱՐ՝ ՅԻՍՈՒՍԻ ՀԱՄԱՐ

Էրիքի (Eric) մանկուլթեան մարտահրաւէրները կը ներառէին՝ մաշկի ծանր ցաւ, դպրոցի մէջ դժվարութիւններ եւ շատ կանուխ տարիքէն՝ ամէն օր այբույրի եւ թմրանիւթերու օգտագործութիւն: Սակայն՝ ան, որ ինքզինք կոչած էր «վատ բաներու թագաւոր», պարզուեցաւ՝ որ կը գերազանցէր բոլորին՝ պէյսպօլի դաշտին վրայ, մինչեւ որ լքեց պէյսպօլը՝ խտրականութենէն վհատելով: Այս բանը անոր աւելի ժամանակ տուաւ, որ թմրանիւթեր օգտագործէ ու առեւտուր ընէ:

Սակայն՝ շատ բան փոխուեցաւ Էրիքի համար, երբ ան յանձնեց իր կեանքը Յիսուսի՝ որոշ ժամանակ մը եկեղեցիի պաշտամունքներու յաճախելէ ետք: Յաջորդ օրը՝ իր աշխատավայրէն՝ Յիսուսի նուիրուած հաւատացեալ մը Էրիքին հրաւիրեց մասնակցելու եւս մէկ ուրիշ եկեղեցական պաշտամունքի, ուր ան լսեց հետեւեալ խօսքերը, որոնք քաջալերեցին զինք՝ իր նոր հաւատքին մէջ. «Ուրեմն եթէ մէկը Քրիստոսի մէջ է, ան նոր արարած մըն է. նախկին բաները անցան, եւ ահա՛ ամէն բան նոր եղաւ» (Բ. Կորնթ. 5. 17): Էրիքի կեանքը՝ երբէ՛ք նոյնը չեղաւ:

Ինչպէս Էրիք, Տարսոնցի Սօդոս (նաեւ ծանօթ որպէս Պօղոս) կը դասակարգուէր որպէս «դժուար պարագայ»: Ան ըսաւ. «Ես մեղաւորներուն գլխաւորն եմ» (Ա. Տիմ. 1. 15): Ան «նախապէս հայհոյիչ էր, հալածող եւ նախատող» (Հմ. 13): Սօդոսի նման, Էրիք ալ արդար էր Յիսուսի համար: Եւ մենք ալ նոյնպէս, նոյնիսկ եթէ մենք չենք տեսներ մեզ Սօդոսի կամ Էրիքի հետ՝ նոյն խումբին մէջ, որովհետեւ «բոլորը մեղանչեցին, եւ զրկուած են Աստուծոյ փառքէն» (Հռոմ. 3. 23): Մենք բոլորս ալ արդար ենք Յիսուսի համար:

Աղօթք - Սիրելի Հայր, կը խնդրե՛մ՝ օգնէ ինձի տեսնելու, որ Յիսուսի արիւնը մաքրէ մեզ «մեծ» ու «փոքր» մեղքերէն: Ամէն: **Ինչպե՛ս Երիքին եւ Սօդոսին պատմութիւնները կ'օգնեն քեզի տեսնելու Աստուած՝ որպէս ներող:** Ի՞նչ կը նշանակէ քեզի համար՝ արդար ըլլալ Յիսուսի համար:

ՑԱՆԿ ՆԻԻԹՈՑ

Ազդել Ուրիշներու.....	Փետ. 26, 27, 28
Աղօթք.....	Մարտ 13, 27
Աշակերտութիւն.....	Մարտ 24
Առատաձեռնութիւն.....	Յուն. 4, Փետ. 25, 26
Աստուծոյ Զեռ Զաղորդակցութիւն.....	Մարտ 9
Աստուծոյ Նկարագիրը.....	Յուն. 25, Փետ. 3, 13, 24, 25, Մարտ 5, 29
Աստուծոյ Սերն ու Զոգատարութիւնը.....	Յուն. 9, 25, 30, Փետ. 1, 2, 3, 11, 16, 19, 23, 27, Մարտ 26
Աստուծոյ Վաստահիլ.....	Փետ. 4, 21, Մարտ 23, 26, 30
Արդարութիւն.....	Յուն. 12, 20
Աւետարանչութիւն.....	Յուն. 31, Փետ. 10, Մարտ 4, 24, 30
Բարկութիւն.....	Փետ. 17
Գուր.....	Յուն. 12, 20, Փետ. 16, Մարտ 3, 6
Եկեղեցի.....	Մարտ 12
Երանելիներ.....	Փետ. 1, 9, 16, 23
Ընտանեկան Յարաբերութիւններ.....	Փետ. 19, 27
Իմաստութիւն.....	Յուն. 3, 28
Խոնարհութիւն.....	Յուն. 5, 13, Փետ. 3, 8, Մարտ 6
Խորհրդատուութիւն.....	Դեկ. 15
Ծառայել Ուրիշներու.....	Մարտ 14, 18
Ծերանալ.....	Յուն. 19
Կեանքի Պայքարներ.....	Մարտ 2, 30
Համայնք.....	Մարտ 10, 12
Հանգիստ.....	Մարտ 2, 9, 16, 23
Հաշտութիւն.....	Փետ. 28
Հաւատացեալներու Միաբանութիւն.....	Փետ. 9, 14
Հնազանդութիւն.....	Յուն. 11, 14, Մարտ 28
Հոգեկան Աճում.....	Յուն. 14, 16, 21, Փետ. 21, Մարտ 21
Հոգեկան Կարգապահութիւն.....	Յուն. 11
Հոգեկան Հասունութիւն.....	Յուն. 10, Մարտ 19
Հոգեկան Պարգէներ.....	Յուն. 27, Մարտ 18, 30
Հոգիին Պտուղները.....	Փետ. 17, Մարտ 23

Մահ.....	Յուն. 23, Փետ. 4
Մատակարարություն.....	Փետ. 6, 25, Մարտ 18
Մեղք.....	Մարտ 31
Մեղքերու թողություն.....	Փետ. 11, 21, Մարտ 17
Մտահոգություն.....	Յուն. 3, Մարտ 7
Յաւիտեանական Կեանք.....	Յուն. 17, Փետ. 4
Յոյս.....	Յուն. 2, 9, 16, 21, 23, Մարտ 20, 21, 27
Յուսախաբություն.....	Փետ. 12
Ներել Ուրիշներու.....	Փետ. 28
Որոշում կայացնել.....	Փետ. 7
Ուրախություն.....	Մարտ 20
Պաշտամունք.....	Յուն. 9, 26
Սեր Աստուծոյ.....	Փետ. 22
Սեր Ուրիշներու.....	Փետ. 8, 14, 16, 22, 26, 27, 28, Մարտ 3, 6, 27
Սուրբ Գիրքի Մեծ Պատմությունը ..	Փետ. 13, 24, Մարտ 1, 8, 15
Սուրբ Գիրքի Սերտողություն.....	Յուն. 10, Մարտ 1, 8, 15, 22
Սուրբ Հոգի.....	Յուն. 29, Փետ. 17, Մարտ 19, 25
Ստեղծագործություն.....	Յուն. 7, Փետ. 6, 24, Մարտ 5
Սրբություն.....	Յուն. 29, Փետ. 18
Վաւերականություն.....	Յուն. 5
վիշտ.....	Յուն. 16
Տառապանք.....	Յուն. 2, 9, 16, 21, 23, Մարտ 21
Ցեղապաշտություն.....	Յուն. 20
Փրկություն.....	Յուն. 18, 21, Փետ. 20, Մարտ 1, 8, 13, 17, 25, 31
Քաջալերություն.....	Փետ. 18, Մարտ 14
Քրիստոս Անձ/Գործ..	Փետ. 1, 8, 15, 22, 28, Մարտ, 4, 11, 17
Քրիստոս՝ Ծնունդ.....	Յուն. 6
Քրիստոս՝ Նկարագիր.....	Յուն. 22, Փետ. 18, 15, 22
Քրիստոս՝ Փրկիչ/Մեսիա.....	Յուն. 6
Քրիստոսի Հետ Միություն.....	Յուն 5
Քրիստոսի Հետ Նոյնություն.....	Փետ. 7, Մարտ 21
Քրիստոսի Համար Ապրիլ.....	Յուն. 17, 24, 27, Փետ. 5, Մարտ 10
Օրինականություն.....	Փետ. 5

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Եթէ կը ճանչնաք անձեր, որոնք պիտի փափաքին այս գրքոյկին յաջորդ թիւերը ունենալ, կրնաք անոնց անունները ու հասցէները գրել վարի կտրօնին վրայ եւ ղրկել հետեւեալ հասցէներէն մէկուն.–

Սփիւռքի հասցէ՝
Armenian Missionary Association
31 West Century Road
Paramus, NJ 07652
Tel. 201.265.2607 - E-mail: info@amaa.org

Հայաստան եւ Կովկասեան երկիրներ դիմել՝
Հայ Աւետարանչական Ընկերակցութիւն
Բաղրամեան Փողոց, Թիւ 18
Երեւան, Հայաստան
հեռ. (374-10) 54-35-76

Name/Անուն.....

Address/Հասցէ.....

.....

Tel./Հեռ.....

.....

Name/Անուն.....

Address/Հասցէ.....

.....

Tel./Հեռ.....